



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

ARMEN SH. SARGSYAN

FUNNY QUOTES
FROM CHILDREN

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРМЕН ШАВАРШОВИЧ САРКИСЯН

СМЕШНЫЕ
ДЕТСКИЕ ВЫСКАЗЫВАНИЯ

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
ЕРЕВАН – 2016

PUBLISHING HOUSE "GITUTYUN" OF NAS RA
YEREVAN – 2016

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԵՆ ՇԱՎԱՐՇԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ
ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ – 2016

ՅՏԴ 398. 2 (=19)
ԳՄԴ 82. 3 (5Յ)
Ս 259

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գիտական խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյան

Խմբագիր՝ **Անահիտ Կարապետի Խանումյան-Սարգսյան**

Սարգսյան Ա. Շ.

Ս 259 **Մանկական զվարճախոսություններ**/Ա.Շ.Սարգսյան: Գիտ. խմբ.՝
Ս.Բ.Հարությունյան; Խմբ.՝ Ա.Կ.Խանումյան-Սարգսյան. – Եր.: ՀՀ ԳԱԱ
«Գիտություն» հրատ., 2016, 232 էջ:

Հայ ժողովրդական բանահյուսության ինքնատիպ տեսակներից է մանկական զվարճախոսությունը, որտեղ արտացոլված է երեխաների յուրօրինակ մտածելակերպը, բնության և մարդկային փոխհարաբերությունների վերաբերյալ մտտեցումներն ու արված «վերլուծություն-մեկնաբանությունները», գիտատեխնիկական նվաճումների հանդեպ ունեցած վերաբերմունքը, կայուն բառակապակցությունները ուղիղ իմաստներով ընկալելու և ասելիքն իրենց հնարավորությունների սահմաններում գնահատելու ու դրանք յուրովի վերարտադրելու ձևերը, և այդ ամենը՝ անսպասելի ծիծաղ առաջացնող մանկան անկեղծ, պարզ ու շիտակ խոսքի միջոցով:

Երեխաների խոսքում զավեշտի դրսևորման ձևերը ինքնատիպ ու բազմազան են, ինչպես բազմազան և յուրատեսակ են մանուկների մտածողությունն ու հետաքրքրությունների շրջանակները:

Գիրքը նախատեսված է բանագետների, գրականագետների, լեզվաբանների, հոգեբանների, մանկագիրների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՅՏԴ 398. 2 (=19)
ԳՄԴ 82. 3 (5Յ)

ISBN 978-5-8080-1227-1

© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2016
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2016
© Սարգսյան Ա. Շ., 2016

*Ամեննն հեքաքրքիր ցեղը պզորիկներն են, մեկ այլ՝
ծերուկները: Անոնցմե շարք բան պիտի սորվինք:*

Վիլյամ Սարոյան

ԱՌԱՋԱԲԱՆ

Ժողովածուում ընդգրկված հայ մանկական գվարճախոսությունները փոքրիկների բանավոր խոսքում օգտագործված միայն գավեշտալի դրսևորումներն են: Այստեղ գրեթե տեղ չեն գտել երեխաների մտքի առկայծումների մեկ այլ՝ լեզվական-բառապաշարային արտաբերումները, քանզի մեր ուշադրության կենտրոնում են եղել մանկական խոսքի այնպիսի «փայլատակումները», որոնք շրջապատում անսպասելի ծիծաղ են առաջացրել:

Հաշվի առնելով նեղ շրջանակներում (ընտանիքներում և բարեկամների ու մտերիմների միջավայրում) դրանց փոխանցման ու կենցաղավարման հանգամանքը, ինչպես նաև նյութերի մեծ մասի տարբերակների առկայությունը՝ այդպիսի ստեղծագործությունները, իբրև որոշակի տարիքային խմբում ի հայտ եկած ժողովրդական բանահյուսության ինքնատիպ տեսակ, անվանել ենք մանկական գվարճախոսություն:

Երեխաների գվարճախոսություններում արտացոլված են մանկաշխարհի ներկայացուցիչների մտածելակերպը, բառային կառույցները ուղիղ իմաստներով ընկալելու և ասելիքը յուրովի վերարտադրելու ձևերը, հայրենիքի, ընտանիքի, մայրենի լեզվի, բնության և մարդկային փոխհարաբերությունների վերաբերյալ դրսևորած մոտեցումներն ու ինքնատիպ «վերլուծություն-մեկնաբանությունները», գիտատեխնիկական նվաճումների հանդեպ ունեցած վերաբերմունքն ու գնահատականը, և այդ ամենը՝ շրջապատում անսպասելի ծիծաղ հարուցող մանկան անկեղծ, պարզ ու շիտակ խոսքի միջոցով:

«Մանկական զվարճախոսություններ» գրքում ամփոփված նմուշները հետաքրքիր ու արժեքավոր են թե՛ բանահյուսության այս յուրատեսակ ժառանգության նորովի գնահատման, թե՛ տարբեր տարիքային խմբերի երեխաների հոգեբանության, մտածողության և կարողությունների շերտերը բացահայտելու, ինչպես նաև ընտանեկան, մարդկային փոխհարաբերությունների ու երբեմն էլ պատմա-քաղաքական իրադարձությունների վերաբերյալ մանկական մտածողության տեսանկյունից դիտարկելու առումով:

Առկա ժողովածուի նյութերը մեկ անգամ ևս ցույց են տալիս, որ երեխաների պարզ, անմիջական և անկեղծ խոսքով անսպասելի ծիծաղ առաջացնելու ձևերն ու միջոցներն այնքան են բազմազան ու բազմազույն, որքան բազմազան, բազմաշերտ և յուրահատուկ են մանուկների մտածողությունը, աշխարհընկալումն ու հետաքրքրությունների շրջանակները:

Առաջաբանից գատ, ներկայացվող ժողովածուն բաղկացած է վեց բաժիններից.

1. Առաջին բաժինը տեսական-հետազոտական մասն է, որտեղ փորձ է արվել ներկայացնել մանկական զվարճախոսություններում արտացոլված տարատեսակ թեմաներն ու դրանցում առկա զավեշտի դրսևորման միջոցները: Նշենք նաև, որ այդ երկու նյութերն էլ ծանոթ են գիտական շրջանակներին. որպես գեկուցում՝ առաջինը կարդացվել է ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաժողովում¹, երկրորդը տպագրվել է «Հասկեր» մանկական գրականության և բանահյուսության տարեգրքում²: Երկու աշխատանքներն էլ՝ որոշակի փոփոխություններով ու հավելումներով, ներկայացվում են սույն բաժնում:

2. Երկրորդ բաժնում տեղ են գտել տարբեր ժամանակներում ու տարածաշրջաններում տարբեր տարիքային խմբերի երեխաների

1 **Սարգսյան Ա.**, Մանկական զվարճախոսությունների թեմատիկ դրսևորումները, Հայ ժողովրդական մշակույթ-17, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, ՀԱԻ-ի հանրապետական գիտաժողով, Եր., 2015թ., անտիպ:

2 **Սարգսյան Ա.**, Զավեշտի դրսևորման միջոցները մանկական զվարճախոսություններում, «Հասկեր». մանկական գրականության և բանահյուսության տարեգիրք, Հովհ. Թումանյանի թանգարան, Եր., 2014-2015թթ., էջ 18-29:

բանավոր խոսքի ընթացքում օգտագործված միայն անսպասելի ծիծաղ առաջացրած զավեշտալի՝ զվարճախոսային դրսևորումները՝ 418 մանկական զվարճախոսություններ՝ բոլորն էլ մեր անձնական հավաքածուից: Դրանց գերակշռող մասը վերջին տասը տարիների ընթացքում մեր կողմից կատարած գրառումներն են, մի մասն էլ՝ մեր նախաձեռնությամբ՝ տարբեր վայրերում ապրող մտերիմներին, բարեկամներին, ինչպես նաև գործընկերներին և ուսանողներին միջոցով գրանցածները: Մի քանի նյութեր էլ վերցրել ենք *Ֆեյսբուք* սոցիալական ցանցից ու հեռուստատեսային հաղորդումներից:

3. Երրորդ բաժնում ընդգրկվել են 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 21-րդ դարասկիզբը անեկդոտների գրքերից և այլ բնույթի ժողովածուներից, ինչպես նաև պարբերականներից ու ՀԱԻ-ի արխիվից դուրս գրված տպագիր և անտիպ մանկական զվարճախոսությունները: Տպագիր նմուշների մի մասը օգտագործվել է նաև ուսումնասիրության մեջ: Բնագրային նյութերը մեջբերելիս հիմնականում պահպանվել են դասական ուղղագրության և կետադրության առկա կանոնները, հարկ եղած դեպքում շտկվել որոշ բացթողումներ ու անհարթություններ:

4. Չորրորդ բաժնում ներկայացված է մեծերի կողմից ստեղծված մանկական զվարճապատումների ու զվարճախոսությունների³ մի փոքրիկ փունջ: Ի տարբերություն երկրորդ և երրորդ բաժինների նյութերի, որոնք միայն երեխաների զավեշտալի արտաբերումների գրանցումներն են, այստեղ ընդգրկված են մեծերի կողմից ստեղծված այնպիսի նմուշները, որոնք շրջանառվում, կենցաղավարում են թե՛ մեծահասակների, թե՛ փոքրերի, հատկապես դպրոցական միջին և բարձր տարիքի երեխաների միջավայրում:

3 «Երգիծական մանրապատում» կամ «զվարճապատում» և «զվարճախոսություն» եզրույթները տարանջատել ենք՝ առաջինի համար հիմք ընդունելով նրա սյուժետային՝ պատումային հատկանիշը, երկրորդի համար անսյուժե՝ անպատում, նաև երկխոսական բնույթը: Ի դեպ, առավել փոքր տարիքի երեխաների զավեշտալի արտաբերումները ներկայացվող գրառումներում հատ ու կենտ են զվարճապատումային կառույցները:

Նմանատիպ հորինվածքներում գերակայում են պատկերավորության տարատեսակ միջոցները՝ ժողովրդական դարձվածները, փոխաբերությունները, այլաբանությունները, գեղչումը և այլն, որոնք, ի դեպ, առավել վաղ տարիքի երեխաների մտածողությանը դեռևս անհասանելի են:

Ժողովածուում նման բաժնի առկայությունը նպատակ ունի ցույց տալ մանկաշխարհին առնչվող զուտ մանկական զավեշտալի արտաբերումների և մեծերի կողմից ստեղծված երգիծապատում-զվարճախոսությունների էական տարբերությունը: Այս բաժինը բաղկացած է երկու ենթաբաժնից. առաջինում տեղ են գտել մեր անձնական հավաքածուի նյութերը, երկրորդում՝ տպագիր աղբյուրներից օգտվածները:

5. Ծանոթագրությունների բաժնում աղյուսակով և ներկայացվող նյութերի հերթական թվահամարով տրվել են մեր հավաքածուի նմուշներին առնչվող մանրամասներ՝ նյութը գրառելու վայրի, ժամանակի, ինչպես նաև՝ տեղեկություններ՝ գրառողի, ասացող-պատմողի վերաբերյալ: Այդ տվյալները ինչ-որ չափով կօգնեն ամբողջական պատկերացում կազմելու այս կամ այն զվարճախոսության տեղավայրի, առաջացման դրդապատճառների ու ասացող-գրառող փոխհարաբերությունների ու դրանցից ելնելով՝ մատուցվող նյութի որակական հատկանիշների վերաբերյալ:

6. Ժողովածուն չճանրաբեռնելու համար տպագիր աղբյուրները ներկայացվել են համառոտագրությամբ՝ նշելով նաև համապատասխան էջը, համառորագրությունների բաժնում տրվել է սկզբնաղբյուրի անվանումը, հեղինակը (կազմողը), հրատարակության վայրը, հրատարակիչը և թիվը:

Արմեն Շավարշի Սարգսյան

բանասիրական գիտությունների թեկնածու

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ
(ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

**Ա. ՄԱՆԿԱԿԱՆ ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹԵՄԱՏԻԿ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

Հայ իրականության մեջ առաջին անգամ մանկական խոսքին անդրադարձել է մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանը: 1901 թվականին Փարիզում հրատարակվում է նրա «Մանկական բարբառ»⁴ աշխատանքը: Իր իսկ գրառումների հիման վրա հեղինակը նախ՝ ներկայացնում է հայերենի մի շարք բարբառներում թոթովախոս մանուկների արտաբերած բառերը՝ «...թոով իբր 280, տասն և մէկ գաւառական բարբառով», ապա՝ անդրադառնում մանկական բարբառի քերականական ձևերի յուրօրինակ դրսևորումներին:

Աճառյանը մանկական խոսքը քննության առարկա է դարձրել նաև հայոց լեզվի լիակատար քերականությունը պատրաստելիս⁵: Հետագայում ևս մի քանի հետազոտողներ հողվածներով կամ համապատասխան բաժիններ ընդգրկող առանձին գիտական աշխատանքներով անդրադարձել են երեխաների խոսքի ուսումնասիրությանը, և կրկին բոլորի ուշադրության կենտրոնում մանկական խոսքի լեզվական հարցերն են եղել, մասնավորապես՝ բառապաշարը⁶: 2000 թվականին մանկական խոսքին նվիրված արժեքա-

4 **Աճառյան Հր.**, Մանկական բարբառ, «Բանասեր» հանդես, հատ. 3, պրակ Ա, Պարիս, 1901, էջ 3-28:

5 **Նույնի՝** Լիակատար քերականություն հայոց լեզվի (իմաստաբանություն, բառաքնություն, շարահյուսություն), Մանկական բառեր, ԵՊՀ հրատ., Երևան, 2005, էջ 80-90:

6 **Կոնդակյան Ժ.**, Մեկից յոթ տարեկան երեխաների բառապաշարը, Երևան, 1981, էջ 6-9:

Գալստյան Ա., Մանկական խոսքի բառապաշարի մի քանի առանձնահատ-

վոր հողված-ուսումնասիրությամբ է հանդես եկել նաև լեզվաբան Լիլիթ Բրուտյանը⁷ իր բազմամյա դիտարկումների հենքի վրա փորձելով մանուկների խոսքը ներկայացնել թե՛ նրանց աշխարհընկալման, թե՛ անձնական լեզվական վերլուծությունների տեսանկյունից, կանգ առնելով նաև երկլեզվով հաղորդակցվող երեխաների արտաբերումների առանձնահատկություններին: Ճիշտ է, հեղինակի մեջբերած երեխաների խոսքերում կան նաև ունկնդիրների շրջանում անսպասելի ծիծաղ առաջացնող նյութեր, սակայն վերլուծաբանը դրանք ևս քննում է տարիքային փոփոխությունների ժամանակ ի հայտ եկած նոր մտածողության, լեզվական-քերականական, բառապաշարային նոր դրսևորումների ֆոնին:

2006 թվականին լեզվաբան Անահիտ Գալստյանը հավաքել և հրատարակել է 1-7 տարեկան երեխաների մտքի առկայծումների մի հետաքրքիր գիրք⁸, որտեղ, մանկական խոսքի բառապաշարային տարատեսակ դրսևորումներից գատ, ընդգրկվել են նաև երեխաների կողմից արտաբերված անկեղծ ու շատ սովորական, սակայն ունկնդիրների համար անսովոր և անսպասելի ծիծաղ

կություններ, Գիտական նյութերի ժողովածու՝ նվիրված պրոֆ. Տ. Ավետիսյանի ծննդյան 60-ամյակին, Երևան, «Վան Արյան», 2001, էջ 15-20:

Նույնի՝ Մանկական խոսքի բառապաշարը և նրա զարգացումը, Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, «Վան Արյան», 2006, էջ 38-43:

Նույնի՝ Հայերեն մանկական խոսքի դրսևորումների վերլուծության հարցեր, Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, «Վան Արյան», 2007, էջ 42-48:

Նույնի՝ Մանկական խոսքի ուսումնասիրության մի քանի հարցեր, Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, «Նաիրի», 2007, էջ 43-49:

Վարդանյան Ա., Վայոց ձորի խոսվածքի մանկական բառապաշարը, «Պատմա-բանասիրական հանդես», 2003, թիվ 2, էջ 272-275:

Նույնի՝ Վայոց ձորի միջնաբարբառը, «Մանկական բառապաշարը» բաժինը, էջ 81-83, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2004:

7 **Брутян Л.,** Заметки о детской речи, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2000, թիվ 1, էջ 202-210:

8 Մանկական խոսք, Կազմող՝ Անահիտ Գալստյան, Երևան, «Ջանգալ-97» հրատ., 2006:

առաջացնող հարցեր, արտահայտություններ ու յուրօրինակ «վերլուծություն-մեկնաբանություններ»: Փաստենք նաև, որ մինչ այդ և դրանից հետո ևս մի քանի հեղինակներ (ոչ լեզվաբանության կամ քանազիտության ոլորտից) իրենց երգիծապատումների և զվարճախոսությունների գրքերում առանձին բաժիններով կամ խառը ներկայացրել են նաև մանկական զվարճախոսություններ⁹: Հրատարակվել է նաև մի ժողովածու, որտեղ մանկական երգիծական քանաստեղծություններից գատ, տեղ են գտել 15 հեղինակների գրանցած մանկական զվարճախոսությունները¹⁰:

Ռուսական իրականության մեջ մանուկների լեզվին, երեխաների խոսքի տարատեսակ դրսևորումներին, այդ թվում նաև մանկական զվարճախոսություններին 1928 թվականին «Փոքրիկ երեխաներ»¹¹ գրքում անդրադարձել է հայտնի մանկագիր, գրականագետ և թարգմանիչ Կորնեյ Չուկովսկին: Այդ գիրքը 1933 թվականից լույս է տեսել «2-ից մինչև 5» վերնագրով՝ հետագայում ունենալով ավելի քան երկու տասնյակ վերահրատարակություն, որոնցից մեկը՝ մանկագրի վեցհատորյակի առաջին հատորում¹²:

9 **Ահյան Մ.**, Ծիծաղի հարյուր ակնթարթ «Զվարճապատումներ»: *Ակամա երգիծարաններ բաժինը*, էջ 48-51, «Մարտիկ» թերթի հավելված, Ստեփանակերտ, 1995:

Մուրադյան Ս., Ուրախ երգիծանի, *Մանկական ժպիտներ* բաժինը, էջ 123-133, Երևան, «Շուշան» հրատ., 1999:

Ծիծաղենք միասին, Կազմեց Սարինե Ամիրխանեանը (Ղևոնդեան), Բ տպագրություն, էջ 100-114, «Նայիրի» հրատ., Թեհրան, 2007:

Քոչարյան Ս., Զվարճապատումներ և իրապատումներ, *Թոռնիկներին հետք բաժինը*, էջ 70-73, Երևան, «Ատողիկ» հրատ., 2008:

Բալայան Գ., 55+ (Հիսունհինգ պլյուս): Երգիծանք, *Մանկական սրամրուրյուններ*, էջ 41-42, Երևան, «Վան Արյան», 2009:

Գյուրջինյան Հ., Մի բոտ ժպիտ, *Կապակում են փոքրերը* բաժինը, էջ 151-227, Վանաձոր, Միմ տպագրատուն, 2012, և այլք:

10 Ուրախության դասագիրք, Կազմեց Աննա Չոբանյանը, Եր., «ՎՍՎ-ՊԻԲՆՏ», 2015:

11 **Чуковский К.**, Маленькие дети, Ленинград, 1928.

12 **Чуковский К.**, Собрание сочинений в шести томах, том первый, Изд. «Худо-

Բուն նյութին զուգահեռ՝ մանկագիր հետազոտողը ներկայացրել է նաև իր դիտարկումները, խոհերը, վերլուծություններն ու մեկնաբանությունները, իսկ վերջում՝ գրքի վեցերորդ գլխում, Աստծո 10 պատվիրանների օրինակով («Պատվիրաններ՝ մանկագիր բանաստեղծների համար») ռուս մանկագիրներին առաջարկում է իր «դեղատոմսը»՝ 13 պատվիրանները¹³, որով ուղղորդվելով էր միայն հնարավոր գրել երեխաների հոգուն հարազատ ու գրավիչ ստեղծագործություններ:

Ի դեպ, Չուկովսկու մեջբերած մի շարք նյութերի (բնության երևույթների, ծնողների, մարդու ծնունդի, մահվան մասին պատկերացումների, նոր ժամանակների երեխաների մտածողության և այլն) տարբերակներ են առկա նաև մեր հավաքածուում և հայկական տպագիր հրատարակություններում, ինչից կարելի է եզրակացնել, որ մանկական մտածողությունն ազգային և լեզվական սահմաններ չի ճանաչում:

Այս ուսումնասիրության մեջ մենք անդրադարձել ենք հայ երեխաների բանավոր խոսքում կիրառված միայն զավեշտալի՝ զվարճախոսային դրսևորումներին: Հաշվի առնելով նեղ շրջանակներում դրանց փոխանցման և գոյատևման հանգամանքը, ինչպես նաև նմուշների որոշ մասի տարբերակների առկայությունը՝ այդպիսի ստեղծագործությունները, իբրև ժողովրդական բանահյուսության ինքնատիպ տեսակ, անվանել ենք մանկական զվարճախոսություն: Ի տարբերություն մանկական բանահյուսության տեսակների (հաշվերգեր, բառախաղեր, զայրախաղեր – ռուս.՝ *дразнилки*, նմանողական խաղերգեր, ծաղրերգեր, շուտասելուկներ, երկնային լուսատուներին ու կենդանական աշխարհին նվիրված երգեր և այլն), որոնք գոյատևում են մանկաշխարհում, և կիրառող-տարածողները երեխաներն են, մանկական զվարճախոսությունները փոքր տարիքի երեխաների շրջանում չեն կենցաղավարում: Ժողովրդական ստեղծագործության այդ տեսակի պատ-

жественная литература», Москва, 1965, От двух до пяти, стр. 335-725:

13 Նույն տեղում, стр. 696-725:

մող-տարածող-փոխանցողները ոչ թե մանուկներն են, այլ նրանց զավեշտալի արտաբերումների ունկնդիրը դարձած առավել հասու տարիքի մարդիկ:

Շարադրանքում օգտագործվել են թե՛ մեր անձնական հավաքածուում պահպանվող նյութերը, որոնց մեծ մասը վերջին տասը տարիների ընթացքում մեր գրառածներն են, մի մասն էլ մեր նախաձեռնությամբ և հորդորով այլոց կողմից գրանցածները, թե՛ զանազան տպագիր հրատարակություններում, մասնավորապես անեկդոտների ժողովածուներում տեղ գտած գործերը:

Երեխաները մաքուր, ազնիվ ու միամիտ էակներ են: Կյանքի աղտեղություններն ու անարդարությունները, հաշվենկատությունն ու խորամանկությունը, դեռ չեն հասցրել թափանցել մանկան պարզ ու շիտակ հոգին, դեռ չեն պղտորել նրա ներաշխարհը: Շատ հաճախ երեխան իրականության այս կամ այն երևույթի վերաբերյալ իր ընկալումները անկեղծ մղումով վերարտադրելիս մտքի այնպիսի զավեշտալի փայլատակումներ է հրամցնում շրջապատին, որ ունկնդիրը ցանկանում է հետագայում դրանց հաղորդակից դարձնել նաև այլոց: Այդ ընթացքում էլ ձևավորվում է երգիծական ստեղծագործության մի ինքնատիպ շերտ՝ մանկական զվարճախոսությունը, որը թե՛ իր սեղմ կառուցվածքով, թե՛ անսպասելի ծիծաղ առաջացնող խոսքով առանձնանում է բանահյուսության մյուս տեսակներից:

Ընդգծված հումորի զգացումը՝ շաղախված այլաբանություններով, փոխաբերություններով, մակդիրներով ու զավեշտ առաջացնող լեզվական տարատեսակ միջոցներով, մանկահասակ երեխաների մտածողությանը հարիր չէ: Այն հատուկ է ձևավորված անհատին, սակավ քանակությամբ նաև՝ դպրոցական միջին տարիքի երեխաներին: Ի տարբերություն մեծահասակների՝ մանուկների զավեշտալի, անսպասելի ծիծաղ հարուցող խոսքը կանխամտածված ու նպատակադրված չէ: Այն երեխայի անմիջականության, աշխարհընկալման առաջին քայլերի դրսևորման, տեսածը իր հնարավորությունների սահմաններում վերլուծելու և լսածը ուղիղ իմաստով ընկալելու հետևանք է:

Մանկական զվարճախոսությունների գերակշիռ մասը իրապատումներ է և սերտորեն կապված է երեխայի տարիքային առանձնահատկությունների ու մտածողության որոշակի աստիճանի հետ: Դրանց ասող-արտաբերողը երեխան է, գրանցող-փոխանցող-տարածողը՝ մեծը: Երեխան ասացող չէ, նա իբրև իրողություն է ընկալում շրջապատում տեսած-լսածը և անմիջական անկեղծ խոսքով արտահայտում իր զգացածը: Ասացողը մանկան ծիծաղ առաջացնող այդ խոսքը յուրովի ընկալողը և ուրիշներին վերապատմող-տարածողն է: Հետևաբար փոխանցող-վերապատմողներ են դառնում փոքրիկի գավելշտալի խոսքին ունկնդիր ընտանիքի անդամները կամ էլ ընկեր-բարեկամ-հարևանները, որոնք անմեղ երեխայի կողմից հնչեցրած այդ զվարճալի արտաբերում – «մեկնաբանությունները» վերապատմում են նաև այլ միջավայրում:

Երեխան գիտակցական կյանքի առաջին քայլերն անելիս ուզում է բացահայտել իրեն շրջապատող աշխարհը, իրերն ու երևույթները, մարդկային փոխհարաբերությունները և անընդհատ տրվող հարցերի տարափոփ ձգտում օր առաջ ընկալելի դարձնել այն ամենը, ինչը իր համար այդ պահին անծանոթ ու անհասկանալի է:

Մանկական խոսքում բավականին ընդգրկուն են թեմատիկ դրսևորման շրջանակները:

ա) Ընտանիքներում երեխայի մտածողության ձևավորմանն ուղղված քայլերով է պայմանավորված թե՛ նրա հայեցի դաստիարակությունը, թե՛ հայրենի երկրի, նրա հող ու ջրի հանդեպ ունեցած սերն ու համակրանքը:

«Շինարարական ավտոյով» Արարատ լեռը սարքած 5-ամյա Սարգիսին տված ծնողի հարցին, թե բա ինչի՞ է Արարատը Հայաստանի սահմաններից դուրս թողել, հետևում է երեխայի՝ «Պարաններով կքաշենք կրեթենք, կամ էլ մի հատ էլ էստեղ կսարքեն» պատասխանը: (ԱՄՀՇ)¹⁴ Տե՛ս էջ 86, թիվ 109:

14 Արմեն Շավարշի Սարգսյանի անձնական հավաքածու: Այսուհետև մեր հավաքածուից մեջբերումների մոտ փակագծում կնշվի ԱՄՀ (եթե մեր գրառում-

Ընտանիքի անդամների «ցանած սերմերն» են ծիլ տվել 4.6 տարեկան Աշոտիկի մեջ, քանզի «Մայր Հայաստան» հուշարձանի թողած տպավորությամբ և հայրենապաշտպան սուրբ հայ կնոջ և Դավթի ձեռքերում ամուր բռնած լինելու հանգամանքով պայմանավորված՝ փոքրիկը չի ընդունում արձանի *Սասունցի Դավիթ* անունը և տալիս է նրա ներքին էությունը բնորոշող անվանումը.

Դավիթ պապիկը Աշոտիկին ասում է.

— Նայիր, Սասունցի Դավթի արձանն է:

Կտրական մերժեց.

— Ո՛չ, պապիկ, Հայր Հայաստանն է: (ԱՄՇՀ)

բ) Երեխաները լեզվական տարատեսակ «գաղտնիքներ» են ուզում բացահայտել, քննարկել ինչ-ինչ հարցեր, երբեմն էլ ընդդիմանալով՝ զավեշտալի մեկնաբանություն-առաջարկներով են հանդես գալիս: Այսպես, օրինակ, հնչյունարտաբերման գաղտնիքների մեջ «խորամուխ եղած» 4.5 տարեկան Արամը հարցնում է մորը.

— Ման, մարդը լեզվով ս՛ խոսում:

— Այո:

— *Բայց ես ատամներով, շրթունքով, կոկորդով էլ եմ խոսում: Տես, ձեռքդ դիր կոկորդիս: Որ ասում եմ ա, շրթունքով եմ ասում: Որ ասում եմ բ, ճիշտ ա, շրթունքով ա, բայց ձեռքիդ վրա զգում ես, չէ՞, որ համ էլ կոկորդով եմ ասում: Իսկ ս ատամներով եմ ասում: Մենակ չ-ն եմ լեզվով ասում¹⁵:*

Զվարճախոսություններից մեկում երեխան լեզվի մաքրության հարցեր է «շոշափում» և սխալ արտաբերմամբ անձամբ «կանխում» օտարահունչ բառերի կիրառությունը խոսակցական լեզվում՝ միաժամանակ ներկայացնելով դրա հայերեն «համարժեքը», ինչն էլ դառնում է զավեշտի աղբյուրը.

ներն են) կամ ԱՄՇՀ (եթե այլոց գրառումներն են) համառոտագրությունը: Ուսումնասիրությունում մեջբերվող նմուշները հատվածաբար ներկայացվելիս մոտը կնշվի նաև ամբողջական նյութերի էջը և հերթական համարը:

15 Մանկական խոսք, Կազմող՝ Անահիտ Գալստյան, Երևան, «Զանգակ-97», 2006, էջ 68:

— Արփիհնէ՛, գնա *կուխնյայից* աղը բեր, — 4.7 տարեկան երեխային է դիմում հորեղբոր կինը:

— Լյուդա՛, կուխնյա չեն ասում, *խոզանոց* են ասում (իմա՛ խոհանոց-ԱՍ), — հորեղբոր կնոջը «ուղղում» է Արփիհնէն: (ԱՍՇ)

Գրական հայերենի և բարբառների միջև եղած զգալի տարբերությունները ևս մի կողմից մոլորեցնում են երեխային, մյուս կողմից զանազան ինքնատիպ «վերլուծությունների» և զավեշտալի մեկնաբանությունների տեղիք տալիս.

Անընդհատ մայրը փորձում է ուղղել 3.6 տարեկան Դավիթին, հասկացնել, որ բարբառով չխոսի.

— Դավիթ՝ ջան «գուգամ, կերթամ, ինչ ա կենես...» որ ասես, դասատուները քեզ դպրոցից դուրս կանեն:

Բայց Դավիթը նեղն է գցում մորը.

— Ման՛, բա խի՛ ա տատին ըտենց խոսըմ, էդ վախտ դասատու չի՛ էղել: (ԱՍՇՀ)

Դպրոց նոր ոտք դրած երեխան իր պարզ ու շիտակ խոսքում «անդրադառնում է» իրեն հուզող լեզվական խնդիրներին, փորձում դպրոցում ուսուցանվող անծանոթ հայերեն բառերի և ընտանիքի անդամների առօրյա խոսակցական լեզվում առկա մինևույն առարկաների անվանումների տարբերության գաղտնիքը պարզել: Մանկան մեկնաբանությամբ նրանք գործ ունեն մի նոր լեզվի հետ, ընդ որում, դպրոցում անցնող լեզուն նրանց համար օտար լեզվի բառերի պես խորթ ու անհասկանալի է.

Մեպտեմբերին մի քանի օր դասի գնալուց հետո առաջին դասարանցի Գայանեն տանը նեղսրտած ասում է.

— Դպրոցում ուրիշ լեզվով ենք խոսըմ, տանը՝ ուրիշ:

— Ո՞նց, — զարմանում են տնեցիները:

— Տանը ասըմ ենք *սումկա*, դըպրոցըմ՝ պայուսակ, տանը ասըմ ենք *փեղեկիզրր*, դըպրոցըմ՝ հեռուստացույց, տանը ասըմ ենք *խալադիլնիկ*, դըպրոցըմ՝ ստոնարան, — բացատրում է երեխան: (ԱՍՇ)

Ի դեպ, ուշադրության է արժանի մի հետաքրքիր հանգամանք. ընտանիքը չափազանց մեծ դեր է խաղում երեխայի լեզվական

մտածողության ձևավորմանը: Լեզվաբան Ա. Գալստյանի և մեր հավաքածուների նյութերը հուշում են, որ լեզվական հարցադրումներ անող, հայերեն նոր բառեր ստեղծող, լեզվի մաքրությանն «աջակցող» երեխաների մի մասի ծնողներն ու ընտանիքի մյուս անդամները կան բանասերներ են, կան էլ հայեցի դաստիարակությանը շահագրգիռ անձինք: Այսպես, օրինակ, լեզվաբան Դ. Գյուրջիյանի երեխաներն ու թոռնիկներն իրենց զավեշտալի արտաբերումներում ինչ-որ տեղ նաև «բառաստեղծ-բառամեկնաբաններ» են.

Աշոտիկը հարցնում է.

— Մամմ, ինչ է նշանակում *սիրիահայ*:

Աղջիկս ոնց կարողանում, բացատրում է, հետո, որպեսզի ավելի հասկանալի լինի, ավելացնում է.

— Ձեր խմբի Սարո և Սերո եղբայրները սիրիահայ են:

— Չէ՛, մամ, իրենք սիրիահայ չեն, իրենք *հայահայ* են: (ԱՄՇՀ) Տեն էջ 96, թիվ 156:

Կամ էլ՝

4.8 տարեկան Աշոտիկը մորը՝ Աշխենին, հարցնում է.

— Կորած խնձորն ինչի՞ է մզանում:

— Երկայթ կա մեջը, դրանից է:

— Մամմ, երևի Աշոտ Երկայթը շատ խնձոր է կերել, որ Երկայթ են ասում, — մեկնաբանում է Աշոտիկը: (ԱՄՇՀ)

գ) Երեխան կենցաղային, սոցիալ տնտեսական փոխհարաբերություններում անմիջապես բախվում է իր սովորած-իմացածի և ռեալ կյանքում առկա երևույթների հակասություններին՝ փորձելով իր համար պարզաբանում մտցնել: Խորհրդային տարիներին առևտրի բնագավառում տիրող անօրինությունների վերաբերյալ այսպես է իր «ըմբոստությունն» արտահայտում երեխան.

— Ա՛յ մամ, — նեղարտում է 10-ամյա Արիինեն, — պաղպաղակն արժի 13 կոպեկ, մենք պետկ ա տանք 15 կոպեկ, խանութպանն ինչի՞ ա մեզանից 20 կոպեկ վերցընըմ... (ԱՄՇ)

Մի ուրիշ անգամ էլ՝

—Ման, մեր դպրոցի անցած մաթեմատիկան խանութներում
ինչի՞ չի անցնում, — հարցնում է 11-ամյա Արփինեն:

—Ինչու՞, աղջիկ ջան:

—Մածունն արժի 16 կոպեկ, իրեք շիշ մածունի համար պետկ ա
տայի 48 կոպեկ, տվել եմ 50 կոպեկ, խանութպանն ինչի՞ ա ասըմ՝ 10
կոպեկ պակաս ա, գնա բեր: (ԱՄՇ)

դ) Երեխան ակամա ընդգրկվում է նաև քաղաքական թեմա-
ների մեջ, իր զավեշտալի մեկնաբանությունների ու խաղերի են-
թատեստով «նպաստում» ինչ-ինչ հարցերի «վերհանմանն» ու
«քննադատությանը»:

Հեռուստատեսությամբ նույն մարդուն հանդիպումների ժամա-
նակ անընդհատ պաշալվելիս ցուցադրելը ներգործում է նաև երեխա-
յի տեսողականի և իմացականի վրա, ինչի արդյունքում խորհրդային
գործիչները «անմահանում են» մանկակախաղի տեսքով.

—Արի բրեժնև-բրեժնև խաղանք:

—Ո՞նց:

—Ես քեզ պաշեմ, դու՝ ինձ, դու ինձ պաշի, ես՝ քեզ:¹⁶ (ԱՄՇ)

Տարիներ անց՝ Ղարաբաղյան շարժման առաջին ամիսներին,
այդ զվարճախոսությունը թարմացվում է՝ փոխվելով թե՛ անձը, թե՛
գործողությունը: Մոսկվայում նստաշրջանի ժամանակ Գորբաչովն
անընդհատ ընդհատում էր հայ դեպուտատներին՝ թույլ չտալով
ասելիքն ավարտել, սուսգայիթյան ողբերգությանը որակում տալ,
ինչն էլ (թերևս մեծերի միջամտությամբ) առիթ է հանդիսացել մի
նոր մանկախաղի ստեղծման.

—Արի գորբաչով-գորբաչով խաղանք:

—Ո՞նց:

—Ես խոսամ, դու ընդհատի, դու խոսա, ես ընդհատեմ: (ԱՄՇ) Ի
դեպ, այս երկու «մանկախաղերը» մեր գրառումներում հանդիպում
են նաև միասին:

Նորանկախ հանրապետության նախագահական ընտրարշա-
վի օրերին երեխան, նույն մարդու նկարները փողոցներում շենքե-

16 ԽՄՀՄ կենտկոմի առաջին քարտուղարը հանդիպումների ժամանակ շատ
էր սիրում համբուրվել:

րի պատերին փակցրած տեսնելով, զարմանում է և փորձում իրեն հուզող հարցերի պատասխանները գտնել.

— Պապիկ, էս մարդն ո՞վ ա, — հարցնում է 3 տարեկան թոռնիկը:

— Մեր վարչապետն է, բալիկ:

— Բա նա այբոմ չունի՞:

— Այբոմ, — զարմանում է պապը, — այբոմն ինչ կապ ունի, բալիկ ջան, որ հարցնում ես:

— Այբոմ չունի՞, որ իրա նկարները շենքերի պատերին չկպցնի, այբոմում կպցնի, — բացատրում է երեխան: (ԱՄՇ) Տեն էջ 80, թիվ 87:

ե) Ղարաբաղյան շարժման առաջին ամիսների գործադուլային շարժումն իր արձագանքն ու ազդեցությունն է գտնում նաև մանկան մտածողության վրա՝ առիթ հանդիսանալով զավեշտալի տրամաբանական եզրահանգումների՝ գործադուլային բողոքին մասնակից դարձնելով նաև տնային թոչուններին.

— Էս տիրամեռի հավերը էլի ձու չեն ածել, — տրտնջում է Մարիամ տատը:

— Տատիկ, ախր գործադուլ ա, հավերը ո՞նց կարան ձու ածեն, — պատասխանում է 3 տարեկան Մարիամիկը: (ԱՄՇ)

զ) Ղարաբաղյան պատերազմը չէր կարող շրջանցել մանուկներին ու ազդեցություն չթողնել նրանց հոգեբանության վրա: Հայրենիքի համար կյանքը նվիրաբերած մեր ազատամարտիկներին փոխարինողները ահա այսպես են ներկայանում իրենց անկեղծ խոսքում.

— Ի՞նչ ես ուզում դառնաս, բալիկ ջան, — հարցնում են 5-ամյա Գևորգին:

— Զոհված ազատամարտիկ, — պատասխանում է երեխան: (ԱՄՇ)

Երեխան չի գիտակցում «պատերազմ», «մահ», «զոհվել» հասկացությունները, և «Մի վախեցիր» ֆիլմը դիտելիս 5-ամյա Վոսանը Ղարաբաղյան պատերազմին մասնակցած պապին հարցնում է.

— Պապի, բա դու հեչ չես զոհվել... (ԱՄՇ) Տեն էջ 111, թիվ 224:

է) 1988-ի երկրաշարժը ևս չի շրջանցել մանկաշխարհը. ծնողազուրկ երեխաներին հոգեկան ցնցումից հանելու համար մեկ ամսով արտասահման տանելիս Գայանեին հնարավոր չի լինում հասկացնել, որ նրան չեն կարող տանել, քանի որ ծնողներ չի կորցրել:

— *Դու օր մնացել ես, ընձի ինչ կենես, մտած էղների, ես էլ կերթայի, — սրտնեղած ասում է երեխան: (ԱՄՇՀ) Տեն էջ 84, թիվ 103:*

ը) Մենք գիտենք, թե երեխայի դաստիարակության համար ընտանիքում որքան է մեծ ծնողի դերը, մանավանդ տղա երեխայի համար՝ հոր ներկայությունը: Այսօրվա երեխաների մի մասի հարիկները արտագնա աշխատանքի են մեկնել, հետևաբար փոքրիկը հիմնականում մեծանում է իգական սեռի ներկայացուցիչների միջավայրում: Մանկապարտեզների դաստիարակները ևս կանայք են¹⁷, իսկ դպրոցներում դասավանդող տղամարդ ուսուցիչները կամ հատ ու կենտ են, կամ էլ ընդհանրապես բացակայում են: Այս երևույթը մեծապես ազդում է հատկապես տղա երեխաների դաստիարակության և հոգեբանության վրա: Մանկական զվարճախոսություններից մեկն էլ վերաբերում է հենց այդ ցավոտ խնդրին:

Տեսնելով պապի դպրոցական ավարտական այբումի խմբակային նկարները, անմեղ երեխան հարցնում է.

— *Սրանք ովքեր են:*

— *Իմ ուսուցիչները:*

— *Պապիկ, ինչ է, տղամարդ ուսուցիչ էլ է լինում¹⁸: Տեն էջ 177, թիվ 59:*

թ) Երեխաների մտածողության և հոգեբանության վրա խոր հետք է թողնում նաև ծնողի արտագնա աշխատանքը:

17 Հիշենք՝ մեծ մանկագիր Ղազարոս Աղայանը, բացի դպրոցից, մանկապարտեզում էլ է աշխատել և մոտիկից է ծանոթ եղել երեխաների հոգեբանությանն ու մտքի տարատեսակ փայլատակումներին: Հենց այդ աշխատանքներն էլ, ինչ խոսք, մեծապես նպաստել են երեխաների հոգուն հարազատ մանկական ստեղծագործությունների լույս աշխարհ գալուն:

18 **Գյուրջիյան Հ.**, Մի բոտ ժպիտ, «Կատակում են փոքրերը» բաժինը, էջ 151-227, Վանաձոր, Միմ տպագրատուն, 2012, էջ 168:

Ծնվելուց հետո հոր երես չտեսած 3-ամյա որդին, որ մոր միակ թև ու թիկունքն էր մնացել, չի ուզում քնել, պարտադրում է մորը, որ «անձանոթ» տղամարդը կեսգիշերին հեռանա տնից.

— Ման, էդ մարդն ինչի՞ չի գնում մեր տնից, ասա՛ թող շուտ գնա, մինչև չգնա, չեմ քնի... (ԱՄՇ) Տե՛ս էջ 116, թիվ 240:

ժ) Ղարաբաղյան շարժմանը, երկրաշարժին և խորհրդային համակարգին հաջորդած մութ ու ցուրտ տարիները և համատարած գործազրկությունն իրենց ազդեցությունն են թողնում նաև երեխաների մտածողության վրա: Տան տղամարդու ավանդական դերի խարխումը և առկա ընտանեկան իրավիճակի մանկան ընկալում-մեկնաբանումն էլ դառնում է գվարճախոսության գավեշտի մեխը.

3-ամյա Տիգրանի մայրն աշխատում էր վարսավիրանոցում ու ամեն առավոտ գործի էր գնում, իսկ հայրը 3 տարի ոչ մի տեղ չէր աշխատում, պարսպ-սարսպ ման էր գալիս: Վերջապես երեխայի հայրն էլ է գործ ճարում ու երբ առավոտ ծեզին ուզում է տնից դուրս գալ, տղան հարցնում է հորը.

— Էդ ո՞ր ես գնում, հայրի՛կ:

— Գործի, տղա՛ ջան:

— Խի՞, դու խու կնի՞կ չես, որ գործի ես գնում,— զարմացած հարցնում է Տիգրանը: (ԱՄՇ) Տե՛ս էջ 60, թիվ 6:

ի) Մեր օրերի գիտատեխնիկական աննախադեպ առաջընթացը կամա թե ակամա իր ազդեցությունն է թողնում թե՛ մեծահասակների, թե՛ երեխաների մտածողության և հոգեբանության, անգամ գործելակերպի ու խոսքի վրա: Ի տարբերություն երեխաների՝ մեծերը կամ դժվարությամբ են համակերպվում, կամ էլ չեն ուզում տիրապետել նորաստեղծ տեխնիկային ու դրանց օտարալեզու եզրույթներին: Իսկ նոր ժամանակների երիտասարդության համար դա սովորական երևույթ է, սովորական գործընթաց, ուստի իրականության մեջ կատարվող կտրուկ փոփոխությունները մեծերի մեջ շփոթմունք է առաջացնում, երիտասարդության շրջանում՝ հաճույք և գվարճանք՝ հիմք հանդիսանալով մեծերի հետ կապված

իրականության հենքի վրա ստեղծված բազում զվարճապատում-զվարճախոսությունների ի հայտ գալուն.

— Էդ ո՞ր ես վռագում, Վարդուշ մորքուր, — հարցնում է հարևանուհին:

— Ախչի՛, հարսը կայֆի մեջ ա, գնամ տենամ՝ ինչ ա ասում (խոսքը սկայայի մասին է — ԱՍ): (ԱՄՇ)

Իսկ այդ նույն միջավայրում մեծացող երեխաների համար մեծերի նման շփոթմունքը և՛ զարմանք, և՛ զվարճանք է: Նրանք երբեմն իրենց անկեղծ ափսոսանք են արտահայտում մեծերի «հետամնացության», շատ բաներից անտեղյակ լինելու, շատ բան տեսած չլինելու կապակցությամբ և այդ ամենը ընկալելու համար փորձում են վաղընջական ժամանակների ու իրենց ընտանիքի ավագների միջև ժամանակատարածային կապ տեսնել.

— Պապի՛, ձեր ժամանակ համակարգիչ կա՞ր, — հարցնում է թոռը :

— Չէ, բայի՛կ ջան, չկար:

— Իյս՛, իսկ բջջային հեռախոս:

— Չէ, բջջային հեռախոս էլ չկար:

— Չկա՞ր... պապի՛, իսկ դու դիտոզավր տեսած կա՞ն: (ԱՄՇ)

Երբեմն էլ անցյալում կամ նոր ժամանակներում կատարված իրողությունները երեխան, ըստ իր իմացական և մտածողության հնարավորությունների, գիտատեխնիկական ժամանակակից ձեռքբերումների միջոցով է փորձում մեկնաբանել, ինչն էլ զավեշտի առաջացման պատճառ է դառնում:

Ընտանիքում երբ խոսում էին Խաչատուր Աբովյանի անհայտանալու մասին, փոքրիկը միջամտում է.

— Տատի՛, Խաչատուր Աբովյանը բա ձեռի հեռախոս չունե՞ր, որ զանգեին, տեղն իմանային... (ԱՄՇ)

Ս) Փոխվում են ժամանակները, փոխվում են մարդկանց, նաև երեխաների իմացության շրջանակները: Գիտատեխնիկական աննախադեպ զարգացման պայմաններում մեծացող մանուկների մեծ մասին չես կարող համոզել, թե երեխաներին արագիլը կամ ջուրն է

բերում, կամ էլ կաղամբի թփերի արանքից են հանում.

— Արփի՛ ջան, գիտեն որ քեզ ձկան փորից են հանել, — ասում է հորաքույրը:

— Հո՛ք, քեզ ձկան փորից են հանել, մամային ու հայրիկին էլ կաղամբի միջից են գտել, բայց ես ծնվել եմ, — պատասխանում է 4.6 տարեկան Արփին: (ԱՄՇ)

Երեխայի աչքի առաջ հղիանում, ֆիզիկական փոփոխության են ենթարկվում նրա մայրը, ծանոթ ու անծանոթ կանայք, և այդ անընկալելի «գաղտնիքը» այսօրվա փոքրիկից հնարավոր չէ թաքցնել: Ճշմարտությունն իմանալու դեպքում էլ մանկան համար հարցականները քիչ չեն, ու հետևում է հարցերի տարափը.

Հարևանի հարսը հղի էր: Հրանտիկը հարցրեց.

— Պապի՛կ, այդ Անահիտ տոտայի փորը ինչո՞ւ է ուռած:

— Ուռած չէ, տոտայի փորում փոքրիկ երեխա կա:

— Բա երեխան փորում ի՞նչ է ուտում:

— Անահիտ տոտան ինչ որ ուտում է, փոքրիկն էլ փորիկում նրանից է ուտում:

— Բա ի՞նչ է խմում:

— Տոտան ինչ խմում է, փոքրիկն էլ փորիկում նույնն է խմում:

— Բա նրա տուտուզիկն այնտեղ ինչպե՞ն են մաքրում: — Քիչ դադար տալուց հետո Հրանտիկն ինքն էլ պատասխանում է, — երևի նրա տուտուզը մաքրելու համար Անահիտ տոտայի տուտուզն են մաքրում, էլի...¹⁹

Հղիությանն ու երեխայի ծնունդին առնչվող բազմաթիվ մանկական զվարճախոսություններ ու դրանց տարբերակներ են գրառվել, և ամեն մեկում երեխայի կողմից յուրովի մեկնաբանություն է տրվում այդ երևույթին²⁰:

Փոքր տարիքի մանկիկն արդեն գիտի, որ երեխան փորից է

19 Գյուրջինյան Հ., Մի բուռ ժպիտ, «Կատակում են փոքրեր» բաժինը, էջ 151-227, Վանաձոր, Սիմ տպագրատուն, 2012, էջ 175:

20 Մեր գրառումներում այդ թեմային առնչվող տարբերակներից տեն էջ 74 (թիվ 76, 77), էջ 85 (թիվ 118), էջ 107 (թիվ 205), էջ 124 (թիվ 333), էջ 125 (թիվ 339) նյութերը:

ծնվում, այն էլ՝ մեծ փորից, բայց առեղծված է նրա համար, թե մեծ փոր ունեցող իր հայրիկը կոր է բալիկ ունենալու:

—Ման, եթե մեծ փոր են ունենում ուրեմն բալիկ պիտի ունենան:

—Հա, բալեն:

—Բա պապայի բալիկը կոր ա ծնվելու, — հարցնում է 4 տարեկան Գուրգենը (ԱՄՇՀ, ՖԲ)²¹:

Իսկ համեմատաբար մեծ տարիքի փոքրիկն արդեն գիտի, որ երեխան մայրիկից է ծնվում, բայց շարունակում է էլ ավելի խորամուխ լինել, փորձում ըմբռնել՝ ինչպես է ծնվում ու աշխարհ գալիս նա:

—Հետաքրքիր ա՛ մարդիկ ճնց են ծնվում, — մի օր հարցրեց 6 տարեկան Անին ու շարունակեց, — ման, մարդը մարդուց ծնվում ա ծավված, հետո հաց ա ուտում, ծավերը բացվում են, ու մեծանում ա, չէ՛: (ԱՄՇՀ)

յա) Նմանությունը հորը կամ մորը՝ երեխան յուրովի է մեկնաբանում և երբեմն էլ ըմբռստանում առկա իրողության դեմ:

Երկու տղաները նման էին գեղեցկատես մորը, իսկ աղջիկը՝ հորը: Ընտանիքը հյուրընկալել էր ամուսնու ընկերներին: Նրանցից մեկն ասում է ընկերոջը:

—Աղջիկդ էս ինչքան ա քեզ նման, ոնց որ քթիցդ թռած լինի:

Հյուրերի գնալուց հետո փոքրիկը լացակումած դիմում է մորը:

—Ման, ինչի՞ ա ինձ պապան բերել, ինչի՞ չես ինձ էլ դու բերել, որ ես էլ քեզ նման սիրուն լինեի.....(ԱՄՇ) Տես էջ 72, թիվ 52:

Փոքրիկները նույնիսկ իգական և արական սեռերի ի հայտ գալու իրենց յուրօրինակ մեկնաբանությունն ունեն:

—Մայրիկ, ինձ ո՞վ է բերել:

—Ես:

—Այդպես էլ գիտեի, եթե պապան բերած լիներ, ես տղա կլինեի²²:

21 Վերցված է Facebook սոցիալական ցանցից:

22 Գյուրջիյան Հ., Մի բոռ ժպիտ, «Կատակում են փոքրերը» բաժինը, Վանաձոր, Սիմ տպագրատուն, 2012, էջ 160:

Տարբերակ՝

7 տարեկան երեխան դիմում է մորը.

— Մամմ, որտեղի՞ց են առաջանում երեխաները, ինչից: Ես հասկացա, Աստղիկին դուն ես բերել, ինձ էլ՝ պապան, որովհետև ես տղա եմ²³:

ծ) Երեխաներն այսօր կամա թե ակամա ամեն ինչին հաղորդակից են դառնում, հեռուստատեսությամբ, երբեմն էլ համակարգչի միջոցով ակնդիր լինում զանազան հեռուստահաղորդումների...

— Զավեն պապիկ, գիտե՞ս՝ ինչ եմ դառնալու, — ասում է 4.8 տարեկան Սոնան:

— Ի՞նչ:

— Բժիշկ եմ դառնալու՝ գինեկոլոգ, որ օգնեմ մամայիս փորը ճղղեմ, ապերիկիս հանեմ...

(Մայրը հղի է եղել, և երեխան խոսակցություններից լսել էր, որ նրան կեսարյան հատումով են ծննդաբերելու — ծանոթությունը՝ ասացողի) : (ԱՄՇ)

Նույն ասացողի մեծ թոռան «արկածներից» մեկը ևս առնչվում է հեռուստատեսությամբ տրված բժշկական խորհուրդներին և թոռան արձագանքին.

Հեռուստատեսությամբ բժշկական հաղորդումով ասվում է, որ հղի կանանց չի կարելի սուրճ խմել. վնասակար է: Հաջորդ օրը 10 տարեկան էդուարդը, մորը տեսնելով տաք սուրճը խմելիս, ասում է.

— Մամ, չլսեցի՞ր՝ բժիշկն ինչ ասավ. քեզ չի կարելի սուրճ խմել. տաք սուրճը կլցվի էրեխի գլխին, գլուխը կվատվի... (ԱՄՇ)

կ) Նոր տարվա գիշերը Ձմեռ պապի կողմից բարձի տակ նվերներ դնելը այսօրվա երեխան սկսում է կասկածի տակ առնել.

Ջույգ ծնված վեցամյա քույր ու եղբայր վիճում են.

— Ձմեռ պապ չկա, — ասում է քույրը:

— Ո՞նց չկա, կա, հիշում ես՝ անցած տարի մեր ուզածները բերել բարձի տակ էր դրել ու գնացել, — քրոջը փորձում է համոզել եղբայրը:

23 Մանկական խոսք, Կազմող՝ Ասահիտ Գալստյան, Երևան, «Զանգակ-97», 2006թ., էջ 85:

— Չկա, ուզում ես արի փորձենք. էս տարի էրկուսս էլ Ձմեռ պայպից «վայֆայ» ուզենք, տեսնենք՝ կրերի՞... (ԱՄՇ)

Իսկ եթե նա Ձմեռ պայպի նվերներ բերելուն հավատում էլ է, սպա այսօրվա երեխան, մանավանդ նյութապես ապահով ընտանիքներում մեծացող, առավել շրջահայաց է և հաշվենկատ.

— Դավիթ ջան, Նոր տարվա առթիվ քեզ համար նվեր առն՞եմ, թե՞ փողը տամ, — հարցնում է պայպը:

— Նվեր առ, պայպի՛կ ջան:

— Հրանտի՛կ ջան, դու որն ես ուզում՝ փողը, թե՞ նվերը:

— Ինձ փողը տուր, պայպի՛կ, իսկ նվերը Ձմեռ պայպը կրերի՞²⁴:

h) Մեր օրերում նորակազմ ընտանիքները բավարարվում են մեկ-երկու երեխա ունենալով միայն, ինչը ավագ սերնդի սրտով չէ: Այդ թեմային առնչվող բազում զվարճապատումներ են շրջանառվում թե՛ մեծերի կողմից ստեղծված, թե՛ մանուկների անմեղ արտահայտությունների հենքի վրա:

Ընտանիքի միակ երեխան «ապերիկ» կամ «քուրիկ» ունենալու համար պայպի և տատի հորդորով ծնողներին խնդրում է իրականացնել իր ցանկությունը, սակայն՝ ապարդյուն: Ճարահատ երեխան օգնության է կանչում տատին.

— Տատ ջան, մաման ու պայպան չեն ուզում ինձ համար ապերիկ ու քուրիկ բերեն, արի դո՛ւ բեր, է՛լի... (ԱՄՇ) Տեն էջ 93, թիվ 148:

Նույն թեմայով մեկ այլ պատումում հուսահատ երեխան հույսը դնում է Աստված պայպիկի օգնության վրա.

— Ասմեն՝ մի խանգարի, հիմա դրա ժամանակը չի: Պայպի՛, արի թաթիցս բռնի, գնանք Աստծված պայպիկի մոտ, ինքը ինձ կօգնի: (ԱՄՇ) Տեն էջ 94, թիվ 149:

ձ) Մեքսի տեսարաններով, սարսափագրո, մարտական նկարագրություններով արտասահմանյան և նորօրյա հայկական ֆիլմերին, մասնավորապես հեռուստատեսիալներին կամա թե ակա-

24 **Գյուրջիյան Հ.**, Մի բուռ ժպիտ, Վանաձոր, Միմ տպագրատուն, 2012թ., էջ 160:

մա հաղորդակից դառնալը, ինչպես նաև՝ դրանցում գոեհիկ՝ ժարգոնային խոսքի կիրառությունները բացասաբար են ազդում երեխաների մտածողության, հոգեբանության և բանավոր խոսքի վրա՝ տեղիք տալով բազում մանկական զավեշտալի արտահայտությունների և ինքնատիպ մեկնաբանությունների արտաբերման:

Հեռուստատեսությամբ համբուրվելու թունդ տեսարան էր ցուցադրվում: Մոր հետ Կարմիրից (այժմ՝ Գեղարքունիքի մարզ) Երևանում՝ մորաքրոջ տանը, հյուրընկալված և նոր վիրահատված 3.8 տարեկան տղան համակ ուշադրությամբ հեռուստատեսիլայն է նայում:

— Փոխենք ալիքը, զգվում եմ, — տեսնելով երեխայի ակնապիշ հայացքը՝ խիստ տոնով ասում է մորաքրոջը:

— Քրիստինն մորաքրոյր, ես չեմ զգվում, թող մնա, էլի, — խնդրում է երեխան: (ԱՄՇ)

դ) Ղարաբաղյան շարժմանը հաջորդած մութ ու ցուրտ տարիների արձագանքներն իրենց յուրատեսակ դրսևորումն են գտնում նաև մանկական գվարճապատում-գվարճախոսություններում: Այսպես, օրինակ, 1990-ականներին Երևանում և հանրապետության այլ քաղաքներում շատ էր տարածված «լեվի գիծ»²⁵ արտահայտությունը, ինչի իրագործումը մեծ մասամբ ճարպիկ ու «գործարար» մարդկանց մենաշնորհն էր:

...Մի օր էլ ուշ երեկոյան, երբ թոռանս քնելու ժամն էր, կինս դուրս եկավ պատշգամբ ու լուսնի լույսով հիացած՝ ասավ.

— Էս ինչ հրաշք լիալուսին ա, էս ո՞նց ա լույս տալիս:

Ես ու 4-ամյա թոռս էլ բակ դուրս եկանք, ու լուսնի լույսով հիացած՝ թոռս աղերսանքով դիմեց ինձ, թե՛

— Պապիկ ջան, կարո՞ւմ էս լուսնի լույսից լեվի գիծ քաշես, որ մեր էն մեծ հեռուստացույցը միացնենք... (ԱՄՇ): Տես էջ 140, թիվ 347:

ճ) «Մահ», «ծնողի, հարազատի կորուստ», «գերեզման» հասկացությունները երեխայի համար սոսկ անընկալելի բառեր ու

25 Լեվի գիծ – ապօրինի էլեկտրական լարանցում:

արտահայտություններ են: 19-րդ դարի երկրորդ կեսին հրատարակված գրառումներում դա արտահայտված է սոցիալապես անապահով երեխայի ուրախությամբ, երբ տեսնում է մեծ պղնձով լորի եփելը.

«Ջանին, ման իս, մեր ամին²⁶ մեռել ա, լոճոճի կուտեմ...»²⁷:

Երբեմն ծնողը գայրույթի պահին չափից դուրս չարություն անող երեխաներին զգաստացնելու համար ասում է՝ «Դե հերիք էլավ, էլի, մի օր մեռնեմ, պրծնեմ ձեզանից» խոսքը, որին երեխաները յուրովի են ընկալում ու արձագանքում: Մի դեպքում երեխան տխրում է մոր «մահի» համար, լաց լինում, հուզում նաև ծնողին, բայց երբ մայրը հարցնում է լաց լինելու պատճառը, անսպասելի ծիծաղ է առաջացնում մանկան անկեղծ ու անմեղ պատասխանը.

—Ման, բա որ դու մեռար, մեր ամանները ո՞վ ա լըվանալու:
(ԱՄՇՀ) Տես էջ 101, թիվ 178:

Մեկ այլ դեպքում այդ սթափեցնող արտահայտությունը լսելով՝ եղբայրներից մեկը պատրաստ է ամեն ինչ անել, միայն թե մայրը ուրախանա, և երեխան դա անում է յուրովի՝ կրկին ծիծաղ առաջացնելով ունկնդիրների շրջանում.

—Ման, որ դու մեռնես, գերեզման կունենաս, չէ՛,— հետաքրքրվում է 4-ամյա Դավիթը:

—Հան, —գայրացած վրա է բերում մայրը:

—Ման, որ մենք ծաղիկներ բերենք դնենք քու գերեզմանին, դու կուրախանաս, չէ՛,— հարցնում է Դավիթը: (ԱՄՇ) Տես էջ 77, թիվ 74:

Խոսքակոծիվ տալիս ամեն մի երեխա աշխատում է դիմացինի հանդեպ իր առավելությունը հիմնավորել բերած փաստերով: Երբեմն էլ դրանք այնքան անսպասելի և զավեշտալի են լինում, որ ամենատխուր թեմաներին առնչվելիս անգամ մեծերն անկարող են լինում զսպել ծիծաղը.

26 Ամի–հորեղբայր:

27 Ծիծաղի տուպրակ, Անեկոսներ հայ և օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Տ.Ա.Շահազիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսես Վարդանեսի, 1892, էջ 52:

Երկու եղբայրների թոռնիկները խոսքակոխիվ են տալիս: Վերջապես Էմման հարձակման է անցնում.

— Դե գնան, մենք պանպիկ ունենք, դուք չու՛նեք:

Վիճաբանող խմբերից մեկի երեխաների պապիկը մի տարի առաջ էր մահացել:

Փաստը փաստ էր, բայց «հակառակորդ» կողմը տեղի չի տալիս, և երեք տարեկան Քրիստինեն «հակահարված» է տալիս.

— Իսկ մենք պապիկի գերեզմանն ունենք, դուք չու՛նեք...(ԱՄՇ)

Առաջին անգամ գերեզմանաքարերին ծննդյան և մահվան տարեթվերը տեսնելուց հետո երեխան արդի գիտատեխնիկական նվաճումների ֆոնին եզրահանգումներ է անում.

— Ման, էդ նկարների տակի թվերը իրանց ստորվու (իմա՝ բջջային հեռախոսի-ԱՄ) համարներն ա, չէ՞... (ԱՄՇ) Տես էջ 71, թիվ 49:

Երբեմն էլ երեխային իրեն շրջապատող առարկաներին վերաբերող ինչ-ինչ հարցեր է հուզում, և հարցերով ուզում է իր համար պարզաբանում մտցնել: Ինչպես գիտենք, մահացածին հավերժացնելու միջոցներից մեկն էլ հանգուցյալի նկարը՝ առանձին կամ կենդանի կողակցի հետ, մեծացվել, փակցվել է տան պատին, նաև՝ գերեզմանաքարին: Դրա հետ կապված մեծերի կողմից մի շարք անեկդոտներ են ստեղծվել: Այս թեման հուզում է նաև կյանքում առաջին քայլերն անող մանկանը: Այսպես՝

3 տարեկան Վռամը նայում է պատին փակցված նկարին ու հարցնում է տատին:

— Տատի՛, էն Լաշո (Մարգիս) պապն ա, բա կողքինն ով ա:

— Կողքինն էլ ես եմ, էլի, Վռամ ջան, — պատասխանում է Ջենմա տատը::

— Տատի՛, բա դո՞ն էդ երբ ես մեռել, — զարմացած հարցնում է երեխան: (ԱՄՇ)

մ) Ժողովրդական ծիսակարգերն իրենց «դրսևորումն» են գտնում ինչպես մեծերի, այնպես էլ մանկական զվարճապատում-զվարճախոսություններում: 19-րդ դարի երկրորդ կեսերին, ի տարբերություն քաղաքների, գյուղերում մարդիկ նոր հագուստներ էին

հագնում և զարդեր կրում հիմնականում ժողովրդական տոնախմբությունների կամ էլ հարսանեկան ծիսակատարությունների ժամանակ: (Հիշենք շուրջ 125 տարի առաջ «Նոր դար»-ում Հովհ. Թումանյանի տպագրած զվարճախոսությունը, երբ պարզամիտ լոռեցին գնում է Թիֆլիս ու տեսնելով կոկիկ հագուկապով ու արդուզարդով մարդկանց՝ զարմացած բացականչում է.

—Պաս, պա, պա, ձեզ մատաղ, քաղկցիք չիմ էլ նոր են հրասնիք էլել²⁸):

Այդ պարզամիտ գյուղացու զավեշտ առաջացնող խոսքը արդարացված էր՝ կապված 1880-ականների սուկա գյուղաշխարհի մարդկանց սոցիալական ծանր վիճակի հետ:

Թումանյանական գրառումը տպագրվելուց 110 տարի անց՝ 1997 թվականին, նմանատիպ մի արտահայտության (կրկին լոռեցու, բայց այս անգամ՝ երեխայի շուրթերից հնչած) ունկնդիրը դարձա Ախթալա կայարանում մի թաղման արարողության ժամանակ.

Հնգամյա երեխան, թեքվելով դեպը պապը և ձեռքով ցույց տալով փայլուն կոշիկներս, ցածրաձայն ականջին ինչ-որ բան շնչացա: Պապը սաստեց թոռանը, ինչն իմ աչքից չվրիպեց, ու հարցրի. «Ինչ ասավ երեխեն, Դավիթ»: Պապը հրաժարվեց կրկնել փոքրիկի ասածը, բայց երբ ես համատեցի, ստիպված էր ընկրկել. չորսամյա երեխան ասել էր. «Էդ պապիկի կոշիկները մեռելի կոշիկներ են, չէ՛, պանյի»: (ԱՄՇ) Տէն էջ 109-110, թիվ 219:

Ինչ խոսք, խորհրդային կարգերի փլուզումից հետո Ղարաբաղյան պատերազմի տարիներին Հայաստանի գյուղերում ստեղծված սոցիալական ծանր վիճակն էր պատճառը նման զավեշտալի «մեկնաբանության». այդ տարիներին գյուղաշխարհի երեխան նոր հագուկապ տեսնում էր միայն թաղման արարողությունների ժամանակ, այն էլ՝ հանգուցյալի հագին...

յ) Երբեմն էլ մանկական զվարճախոսություններում ժողովրդի ծանր ապրելակերպն արտահայտվել է մանկան՝ մորն ուղղած նախատինքի խոսքով, ինչպես հետևյալ օրինակում.

28 Թումանյան Հովհ., ԵԼԺ, հատոր 5, Եր., «Գիտություն» հրատ., 1994, էջ 583:

1930-ականների սկզբների սովի տարիներին 4-ամյա Աթուլկանց Սաբոկը (Սարիբեկը) մորն ասում է.

— Նանի, դու խի՞ չի Մումբաթ բիձուն ուզեիր, որ մենք էլ շատ հաց ունենայինք... (ԱՄՇ)

Մարդկանց սոցիալապես անապահով վիճակն արտահայտվել է երեխայի երազանք-մտորումների տեսքով.

...Մի անգամ, պատերազմի նեղ ժամանակ (2-րդ աշխարհամարտի տարիներին-ԱՄ) երեխաներից մեկը լողանալուց հետո պատկում է քարին և նայելով ջրի կաթնանման փրփուրներին՝ երանությամբ կողքի ընկերոջն ասում է.

— Հենց պիտեր, վար էս փրփինջանը²⁹ լոխ կաթնավ ճաշ իներ (ամբողջությամբ կաթնով ճաշ լիներ), քարին կլխան լուքի տի մեջին (քարի գլխից նետվելի մեջը-ԱՄ), տյուս կի, շորերըս լպըստուտի³⁰: Տեն էջ 186-187, թիվ 98:

Երազանքի հենքի վրա ստեղծված ու «պայծառ տխրությամբ» (լեզվաբան Ռ.Իշխանյանի՝ Տերյանի պոեզիային տված բնութագրումն է) թաթախված թե՛ մանկական, թե՛ մեծերի կողմից ասված գվարճապատում-գվարճախոսությունների նմանատիպ մի քանի տարբերակներ են գրառվել³¹:

ն) Երեխաները անընդհատ հաղորդակցվում են հարսանեկան արարողակարգին: Մենք գիտենք 3-6 տարեկան աղջիկ երեխաների, որոնք «սիրահարվել» են և «խոստովանել» իրենց «սերը» հորը, հորեղբորը, տարիքով մեծ բարեկամին, հարևանին, երբեմն էլ մի քանի տարեկան տղա երեխան՝ բարեկամի կամ հարևանի հարսին...: Բոլոր դեպքերում էլ այդ անկեղծ «խոստովանությունները»

29 Փրփինջան – փրփուրներով լի ավազան:

30 Ղուլյան Բ., Գյուլիստան. Պատարիկներ մոտիկ անցյալից, Երևան, «Զանգակ-97», 2004թ., էջ 126-127:
Լպըստուտել – լպստել, լիզել:

31 **Գևորգյան Դ.**, «Ծովասար», Երևան, «Էդիթ Պրինտ», 2007թ., էջ 289:
Մաղաթյան Ք., Ալաշկերտի խոսվածքը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985թ., էջ 170-171:

շրջապատի համար անսպասելի ծիծաղի առաջացման և այդ մասին շրջապատում վերապատմելու առիթ են հանդիսացել.

Արսենի 5-ամյակը նշվեց մանկական սրճարանում: Մի քանի օր հետո տուն գալով՝ Արսենը լուրջ հայտարարություն արեց.

— Մամ, ես սիրահարվել եմ, շուտով մեր հարսանիքն ա լինելու:

— Ի՞նչ, — անսպասելի լուրից շփոթված՝ հազիվ արձագանքում է մայրը:

— Հա՛, մամա՛ ջան, եթե մանկական սրճարանում ծնունդ նշում են, ուրեմն մանկական հարսանիք էլ կարող ենք նշել, — պատասխանում է մանկական սրճարան վերադառնալու համար ամեն ինչի պատրաստ Արսենը: (ԱՄՇՀ)

Նույն թեմային առնչվող մեկ այլ զվարճախոսության մեջ, արտաբերված 1950-ականների կեսերին, գյուղաշխարհի մանկան անհանգստությունն իր հարսանիքի կապակցությամբ այսպես է արտահայտվել.

Մի օր 6 տարեկան Սոսը մի քիչ քնելուց հետո վեր է կենում, դիմում մորը, թե՛

— Մամ, իմ հըրսանիքը ըլելու վախտը նոր ա գալու՞, թե՛ անց ա կացել: (ԱՄՇ)

Մանկական զվարճախոսություններից մեկում էլ պապի հարսանիքի մասին թոռան հետաքրքրությունն այսպես է արտահայտել Նարեն.

— Պապի՛կ, ձեր հարսանիքի ժամանակ փեսան դո՞ւ էիք³²:

Իսկ մեկ այլ դեպքում թոռան և տատի սերն ու համերաշխությունը այսպիսի մտորումների տեղիք է տալիս.

— Տատի՛կ, որ ամուսնանամ, էլի ինձ հետ ես քնելո՞ւ, — հարցնում է փոքրիկ Էդուարդիկը³³:

«Պատվի ուլերի»՝ ապրիլի 1-3-ի մասին ավանդագրույցը մոր

32 Մանկական խոսք, Կազմող՝ Անահիտ Գալստյան, Երևան, «Ջանգակ-97», 2006թ., էջ 75:

33 Գյուրջիկյան Հ., Մի բոտ ժպիտ, Վանաձոր, Միմ տպագրատուն, 2012թ., էջ 220:

ներկայացնելուց հետո 7-ամյա Հովիկը այսպիսի եզրակացության է հանգում.

— Մանս, որ բոլոր պատավները մեռնեն, էլ «պատվի ուլեր» չի լինի, չէ³⁴:

2) Ծոռոկները երեխաների մեջ են տեսնում իրենց անկատար իղձերի իրականացման հույսը, որոնց մի մասն իրենք են երեխաներին թելադրում նրանց ապագան, և վերջիններս մեխանիկորեն կրկնում են, մյուս մասն էլ երեխան ինքն է «որոշում», վճռում դառնալ *զոհված ազատամարտիկ, ժողովուրդ, տղա երեխան՝ արքայադուստր*, մեկ այլ դեպքում՝ *ընկեր Նունե*, նույնիսկ՝ *սպարանցի*, քանի որ պապիկն Ապարանում է ապրում, իսկ մեկ այլ զվարճախոսությունում հետաքրքիրը և զավեշտալին այն է, որ մեծահոգի փոքրիկը իր ցանկության խոսքում այսպես է ներկայանում. «Եղբայրս՝ մենեջեր, ես՝ պաժառնիկ³⁵»՝ մեկնաբանելով, որ եթե եղբոր ձեռնարկությունը պաժառ³⁶ ընկնի, ինքը կարողանա անմիջապես օգնության հասնել ու հանգցնել:

Ինչ ես դառնալու հարցին հետևող մեկ այլ պատասխան էլ զավեշտալի է հնչում ոչ թե իր առջև դրած նպատակի, այլ դրա հիմնավորման ու հաստատակամության համար.

— *Ինչ ես դառնալու*, — *հարցնում ա մանկական սրճարանի աշխատողը 5 տարեկան Աննային:*

— *Բժշկուհի:*

— *Աննս ջան, ավելի լավ չի՞ նկարիչ դառնաս, ես բժշկից վախենում եմ:*

— *Ինչ ա, հիմա որ դու վախենում ես, ես բժշկուհի չդառնամ:*³⁷

Իսկ մի ուրիշ երեխա *Ինչ ես ուզում դառնալ* հարցին իր և եղ-

34 Մանկական խոսք, Կազմող՝ Ասահիտ Գալստյան, Երևան, «Զանգակ-97», 2006թ., էջ 5:

35 Պաժառնիկ (ռու.) – հրշեջ:

36 Պաժառ (ռու.) – հրդեհ:

37 Այս և 2 կետում ներկայացված բոլոր նմուշները մեր հավաքածուից են:

բոր անունից է պատասխանում. «Այսպես՝ դիրեկտոր, ես էլ իրա շնֆերը»³⁸:

Երբեմն էլ հակասության մեջ են երեխայի և ծնողի ցանկությունները. Նախակրթարանի երեխաներին՝ դաստիարակի ուղղած՝ *նվ՛ ինչ է ուզում դառնալ* հարցադրումը հինգամյա աղջիկը յուրովի է ընկալում, և մանկան անկեղծ ու միամիտ խոսքն էլ զվարճախոսության մեջ դառնում է անսպասելի զավեշտի առաջացման պատճառը.

—Երբ մեծանամ,—ասում է 5-ամյա Մոնիկան,—ուզում եմ ամուսնանամ, բայց մամա ուզում ա, որ ես բժիշկ դառնամ: (ԱՄՇՀ) Տեն էջ 102, թիվ 182:

Այսպիսով, վերը բերված օրինակները ցույց են տալիս, որ մանկական զվարճախոսություններն իրենց թեմատիկ դրսևորումներով բազմազան են ու բազմաբնույթ: Դրանցում արտացոլված են մանկաշխարհի ներկայացուցիչների ինքնատիպ մտածելակերպը, հայրենիքի, մայրենի լեզվի, ժողովրդական և կրոնական ծիսակարգերի ու մարդկության գիտատեխնիկական նվաճումների հանդեպ ունեցած յուրօրինակ վերաբերմունքը, բնության և մարդկային հարաբերությունների վերաբերյալ դրսևորած մոտեցումներն ու արված «վերլուծություն-մեկնաբանությունները», և այդ ամենը՝ երեխայի՝ անսպասելի ծիծաղ առաջացնող ու խորհել տվող անկեղծ, պարզ ու շիտակ խոսքի միջոցով:

38 Բալյան Լ., Ականջդ բեր ասեմ. Աֆորիզմներ, անեկդոտներ, բանաստեղծություններ, Երևան, ՀԳՄ հրատ., 2008թ., էջ 413:

Բ. ՉԱՎԵՃՏԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՄԱՆԿԱԿԱՆ ՉՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Առ այսօր մանկական խոսքին նվիրված ոչ մեծ քանակությամբ հոդված-ուսումնասիրություններ են գրվել, որոնք, գրեթե առանց բացառության, նվիրված են եղել երեխայի խոսքի զուտ լեզվական-բառապաշարային խնդիրներին: 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած անելդոտների որոշ ժողովածուներում ընդգրկվել են նաև հատ ու կենտ մանկական զվարճախոսություններ³⁹: Վերջին տասնամյակների ընթացքում մի քանի հեղինակների հրատարակած երգիծապատումների և զվարճախոսությունների գրքերում առանձին բաժիններով ընդգրկվել են նաև իրենց և այլոց երեխաների, թոռների զվարճալի խոսքերը⁴⁰: Հրատարակվող տարատեսակ պարբերականներում երբեմն-երբեմն մանրապատումների հետ տեղ են գտնում մանկական մտքի նմանատիպ առկայծումներ, իսկ

39 Անելդոտներ, հատոր 1, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, (էջ 3, 12, 19, 38, 52, 88, 91, 107-108, 111, 13), հատոր 2, 1877 (էջ 5, 31), հատոր 3, 1883 (էջ 20):

Ծիծաղի տոպրակ, Անելդոտներ հայ և օտարների կենսքից, Աշխատասիրեց դպիր Ս. Ս. Շահագիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեանի, 1892թ. (էջ 20, 33, 38, 53, 96-97, 116, 122) և այլք:

40 **Ահյան Մ.**, Ծիծաղի հարյուր ակնթարթ (Զվարճապատումներ): «Ակամա երգիծաբաններ» բաժինը, էջ 48-51, «Մարտիկ» թերթի հավելված, Ստեփանակերտ, 1995:

Մուրադյան Ա., Ուրախ երգիծանի, «Մանկական ժպիտներ» բաժինը, էջ 123-133, Երևան, 1999:

Ծիծաղենք միասին, Կազմեց Սարինէ Ամիրխանեանը (Ղևոնդեան), Բ տպագրություն, էջ 100-114, «Նայիրի» հրատ., Թեհրան, 2007:

Քոչարյան Ա., Զվարճապատումներ և իրապատումներ, «Թոռնիկներիս հետ» բաժինը, էջ 70-73, Երևան, «Ատողիկ» հրատ., 2008:

Բալայան Գ., 55+ (Հիսունհինգ պլյուս): Երգիծանք, «Մանկական սրամտություններ», էջ 41-42, Երևան, «Վան Արյան», 2009:

Գյուրջիյան Հ., Մի բուռ ժպիտ, «Կատակում են փոքրերը» բաժինը, էջ 151-227, Վանաձոր, Միմ տպագրատուն, 2012, և այլք:

«9-րդ հրաշալիք»-ում «Խոսում են երեխաները» խորագրով բաժին է բացված, որտեղ պարբերաբար ներկայացվում են նաև փոքրիկների անմեղ արտաբերումները⁴¹: Լեզվաբան Անահիտ Գալստյանն անձամբ և այլոց միջոցով հավաքել և 2006 թվականին հրատարակել է 1-7 տարեկան երեխաների մտքի առկայծումների մի հետաքրքիր գիրք⁴², որտեղ, մանկական խոսքի բառապաշարային տարատեսակ դրսևորումներից զատ, ընդգրկել է նաև երեխաների կողմից արտաբերված անկեղծ ու շատ սովորական, սակայն ունկնդիրների համար անսպասելի ծիծաղ առաջացնող հարցեր, արտահայտություններ և յուրօրինակ «վերլուծություն-մեկնաբանություններ»: Շուրջ 10 տարիների ընթացքում մեր կողմից և մեր նախաձեռնությամբ՝ այլոց միջոցով, ևս գրառվել են 418 մանկական զվարճախոսություններ: Այդ գավեշտալի արտաբերումները երեխայի անմիջականության, աշխարհընկալման առաջին քայլերի դրսևորման, տեսածը հնարավորությունների սահմաններում վերլուծելու և լսածը ուղիղ իմաստով ընկալելու արդյունք է: Ունկնդիր և ակնդիր լինելով երեխայի անմեղ արտաբերումներին՝ մարդիկ այդ զվարճալի միջադեպ-եղելությունները վերապատմում, փոխանցում են նաև այլոց:

Եկեք մտաբերենք մեր փոքրիկներին որևէ հանձնարարություն տալուց հետո նրանց արտաբերած գավեշտալի հարցերն ու մեր տված հարցերի պատասխանները: Հովհ. Թումանյանի «Գիքորը» պատմվածքը հրատարակվելուց ավելի քան 110 տարի անց, մանկական զվարճախոսությունների մեր գրառումների ժամանակ հանդիպել ենք նաև Գիքորի նախատիպերի՝ «գիքորացու» կերպարների: Ահա *բայր թանգ ա*-ի նմանությամբ մի նմուշ՝ գրառված կրկին Լոռու տարածաշրջանում՝ Վասաձորում, և կրկին մանկան անմեղ խոսքը դառնում է ճշմարտության բացահայտման և ծիծաղի առաջացման պատճառը.

41 «9-րդ հրաշալիք» պարբերական ՄՊԸ, հրատարակվում է 1994 թվականից, հիմնադիր խմբագիր՝ Վաչագան Սարգսյան:

42 Մանկական խոսք, Կազմող՝ Անահիտ Գալստյան, Երևան, «Զանգակ-97», 2006թ:

— Գնա մի տասը հատ կրիշկա առ բի, — ասում է մայրը իր ինը տարեկան տղային:

— Էլ յետ էն էժանիցըըը, — հովեկների ներկայությամբ հարցնում է երեխան (ԱՄՇ):

«Մեր մեջ ամեն լավ բան մանկականն է»⁴³, — գրում է Պարույր Սևակը:

Գյուղացիների մեջ, մասնավորապես լեռնաբնակների, այդ մանկականը, անմեղ ու անկեղծ խոսքը ավելի շատ է: Գիտատեխնիկական առաջընթացն անգամ դժվարությամբ է ներգործում նրա բնավորության և անկեղծ ու անմիջական խոսքի վրա: Քաղաքաբնակների համեմատությամբ նրանք առավել մաքուր են մնացել, շատ դեպքերում նաև՝ անհաղորդ աշխարհի աղտեղություններին: Ե՛վ երեխան, և՛ լեռնական գյուղացին ասում են այն, ինչ զգում ու մտածում են, դրանով իսկ ակամա զվարճացնում մեծերին (եթե երեխան է արտաբերում), և ունկնդիրներին (եթե վերջիններս այլ տարածաշրջանի և բարբառի կրողներն են): Ակամա հիշեցի իմ հարգարժան դասախոս, լեզվաբան Հովհաննես Բարսեղյանի՝ ինքնաթիռով Մոսկվա թռչելու հետ կապված մի պատմություն: Հորդառատ անձրևից հետո տարեց ամուսինները ինքնաթիռում տեղավորվում են նրա կողքին, ու երբ ինքնաթիռը օդ է բարձրանում, կինն ամուսնուն ասում է. «Ի՛նչ լավ ա, չէ՛»: «Ի՛նչը», — հարցնում է ամուսինը: «Որ ըստեղ կաթըմ չի»...Սա անկեղծ խոսք է, բայց նաև զավեշտ՝ այլոց համար:

Սևակյան հուշապատումներից մեկում ներկայացված երկխոսությունը ևս 20-րդ դարի երկրորդ կեսի գյուղաշխարհի մանկան հոգու զուլալության խոսուն վկայությունն է:

Մտերիմների հետ Չանսիսչի գնալու ճանապարհին մի դույլ ծիրան առնելու համար Պարույր Սևակը կանգնեցնել է տալիս մեքենան և մոտենալով ծիրան վաճառող երեխային՝ հարցնում է.

— Բալիկ ջան, ի՞նչ արժի ծիրանի դույլը:

43 **Սևակ Պ.**, Երկերի ժողովածու՝ 6 հատորով, հատոր 3, «Հայաստան» հրատ., Երևան, 1973, էջ 126:

—Հինգ կամ երեք (նուրի-ԱՍ):

Հո չենք ծիծաղում:

—Ո՞վ ասաց, որ այդ գնով վաճառես, — հարցրեց Պարույրը:

—Ազին ասաց, որ հինգով չառնեն, երեքով տուր:

—Գուցե հինգով էինք առնում, ինչո՞ւ երեք ասացիր:

—Մոտ ասեմ:

—Քո ճշտի համար սն քեզ հինգ նուրի, — փողը պարզեց Պարույրը:

—Ինչո՞ւ հինգ տվեցիր, — նետեց Էմման:

—Բա այսքան ծիծաղը երկու նուրի չարժե՞ր, — պատասխանեց

Պարույրը:

—Հիմար երեխա էր, — ասաց Էմման:

—Մաքուր երեխա էր, — ասաց Պարույրը⁴⁴:

140 տարիներն ասես ոչինչ չեն փոխել լեռնաքնակ երեխաների մտածողության մեջ: Թե՛ 1876 թվականին հրատարակված անեկդոտների ժողովածուի՝ «Հայր մեր»-ին վերաբերող զվարճախոսության, թե՛ 2016 թվականին իրական միջադեպի վրա ստեղծված երգիծապատումի հենքը արտաբերված խոսքի ուղիղ ընկալումն է: Առաջինի ժամանակ «Հայր մերը» կարդալուց հետո քահանայի տված հարցին, թե «Որտե՞ղ է քո հայրը» (իմա՝ Աստված), աշակերտի՝ «Մարաքումն է» պատասխանն է անսպասելի ծիծաղ հարուցում (ՏՆՆ ՅՆԱ-1, 52, էջ 130, թիվ 3): Երկրորդ պատումում արքեպիսկոպոսի հարցին, թե ո՞վ կարող է «Հայր մեր»-ը ասել, հետևում է առաջին դասարանցի աշակերտի՝ «Հերբս Գարեգինն ա, մերբս՝ Վարթիշաղը» պատասխանը: (ԱՍՇ) ՏՆՆ էջ 137, թիվ 335:

Մանկական զվարճախոսությունների մեծ մասը երկխոսական բնույթի է, և զավեշտն ստեղծվում է կան հանձնարարականներ կատերելիս բառերն ու դարձվածները ուղիղ իմաստով ընկալելու, կան տրված հարցերին անսպասելի ծիծաղ առաջացնող պատասխանների միջոցով:

Երեխայի տրամաբանությունն ստուգելու համար մեր տված հարցերին բոլորս էլ բազմաթիվ զավեշտալի պատասխանների

44 **Չալիկյան Գ.**, Ալրեղի սիրահարը, ՀԳՄ հրատ., Երևան, 2000, էջ 103-104:

ունկնդիրն ենք դարձել: Դրանք մանկան համար անմեղ ու անկեղծ խոստովանություն-մեկնաբանություններ են, իսկ շրջապատի համար՝ ինքնաբերիկ ծիծաղ առաջացնող զվարճախոսություններ:

Երեխայի մտածողության հնարավորության սահմաններում արտաբերված խոսքն էլ դառնում է զավեշտի աղբյուրը, որն արտահայտվում է՝

ա) Անկեղծ ու միամիտ խոսքով և լոռեցիների խոսվածքում առկա հարցման երգեցիկ-երկարացման հնչերանգով.

Վանաձորի դպրոցներից մեկի տնօրենը ուզում է իր ծանոթի՝ յոթ տարին չլրացած երեխային 1-ին դասարան ընդունի և ընդունակությունը ստուգելու համար հարցեր է տալիս.

— *Բալիկ ջան, ենթադրենք՝ տասը խնձոր ունես, որ էրկուսը ինձ տաս, քո մոտ քանիսը կմնա:*

— *Իննը, — անմիջապես պատասխանում է երեխան:*

Հուսախաբ տնօրենն ասում է.

— *Տղմ ջան, հըլա լավ մտածի:*

— *Խի՛, մինն էլ ես ուզըըըմ... — անկեղծ հարցնում է փոքրիկը:*
(ԱՍՇ)

բ) Անսպասելի ծիծաղը դրսևորվում է թվաբանական ճիշտ հաշվարկով արված ճկուն պատասխանի միջոցով.

Յոթ տարեկան Վահագնին դպրոց ընդունելու համար տնօրենը հարցեր է տալիս.

— *Բալիկ ջան, երեքին եթե գումարես երկուս, ինչքան կանի:*

— *Հինգ, — պատասխանում է Վահագնը:*

— *Ապրես, իսկ եթե 3 խնձորին գումարես 2 տանձ, ինչքան կլինի, — երեխայի հոգու հետ խաղալու համար հարցնում է տնօրենը:*

— *Հինգ հատ խնձորատանձ, — անմիջապես պատասխանում է Վահագնը:* (ԱՍՇ)

գ) Մեկ այլ զվարճախոսության մեջ զավեշտի հենքը թվաբանական գործողության անհետքեր պատասխանն է: Գումարմանն առնչվող՝ «Էրկու ձեռների մատները որ իրար գումարես, ինչքան կանի» հարցմանը հետևող 5 տարեկան Թաթուլի՝ «Նայած. մարդ

կա՝ յոթ մատ կանխ, մարդ կա՝ տասը մատ կանխ» պատասխանը արտաքրուստ սխալ և անտրամաբանական է, բայց երեխայի կարծիքով այն տրամաբանորեն հիմնավորված է, քանզի հարևանությամբ ապրող հոր հորեղբոր տղա Արտակի 3 մատները կտրված են...(ԱՄՇ) Տես էջ 112, թիվ 229:

դ) Զավեշտ է ստեղծվում նաև ոչ թե երեխային տրված հարցերի պատասխանների, այլ հենց իր՝ մանկան հարցման միջոցով, նրա ճկուն տրամաբանականության և անսպասելի արված ճիշտ հաշվարկների օգնությամբ.

*Մի օր 3-ամյա Տիգրանը հարցնում է հորաքրոջը.
— Հորաքրոյր, էսօրը էքուցվա էրեզն ա, չէ՛: (ԱՄՇ)*

ե) Զավեշտալին նաև երեխայի համար պատմած հեքիաթների (ինչպես, օրինակ, «Կարմիր գլխարկը» հեքիաթի) հերոսների քննադատությունն է՝ հենց իր՝ երեխայի կողմից.

— Տան, էդ կարմիր գլխարկի մաման խելք չունէր. ո՞նց ա իրա փոքրիկ աղջկան մենակ ուղարկել անտառ: (ԱՄՇՀ) Տես էջ 104, թիվ 193:

զ) Երեխաների համար օրորոցայիններ երգող մայրիկների երգացանկը սպառվելուց հետո նրանցից շատերը տարատեսակ երգեր են երգում, որ քնեցնեն իրենց բալիկներին, բայց բալիկներն էլ պասիվ ունկնդիրի դերում չեն. նրանք երբեմն նաև պատվերներ են տալիս, ինչն էլ շատ հաճախ վեր է ածվում զավեշտի.

Մայրը 3.5 տարեկան Մարիին և 1.5 տարեկան Յուրիին քնեցնելիս սկսում է Մարիի պատվին երգել Շարլ Ազնավուրի «Ավե Մարիա»-ն: Վերջացնելուց հետո Մարին մորն ասում է.

— Ման, դե հիմա էլ «Ավե Յուրիա»-ն երգի: (ԱՄՇ)

է) Երեխայի պատասխանը զվարճանք է պատճառում, երբ նրա խոսքի մեջ կիրառվող հարադիր բայի մի անդամը անջատվում և հանդես է գալիս իբրև ինքնուրույն միավոր (կաթ տալու գործառույթը *հարու փալ – պոզահարել* – ով ներկայացնելիս).

Դասատուն հարցընըմ ա..

— Տղա՛ ջան, կովն ի՞նչ ա տալի:

Բա թե՛

— Հարու: (ԱՄՇ)

ը Զավեշտի ստեղծման պատճառ է դառնում նաև հարադիր կատույցի անդամներից մեկի ուղիղ իմաստով ընկալելը.

Հինգ տարեկան Նարեն առաջին անգամ գնում է Երևան, հետո երբ գալիս է Կիրովական, հարցնում են.

— Նարե՛ ջան, Երևանում լիֆտ նստել են:

— Հա, բայց նստելու աթոռ չկար: (ԱՄՇ)

կամ՝

— Նարե՛, բա ամոթ չի՞, կանգնում ասում ես՝ դաս չեմ սովորել, — դիտողություն է անում ուսուցիչը 1-ին դասարանցի աշակերտուհուն:

— Ես կանգնած չեմ ասում, նստած եմ ասում, — ուսուցչին «ուղղում է» երեխան: (ԱՄՇ)

թ Զավեշտի աղբյուր է դառնում նաև մանկական խոսքի այնպիսի դրսևորումը, երբ երեխան, չընկալած փոխառյալ բառը, մասնատում է՝ դրանք ներկայացնելով իբրև երկու առանձին միավորներ.

3-ամյա երեխան, կտորի ծածկը ցույց տալով, մորը հարցնում է.

— Ման՛, էն ինչո՞վ ա ծածկած:

— Շիֆերով, բալիկ ջան:

— Շիֆերը ի՞նչ ձևի ա:

— Զիզզազ ա, բալիկ:

Մի երկու օր հետո գիշերը ձյուն է գալիս, իսկ առավոտյան երեխան, կտորին նայելով, ասում է.

— Ման՛, ման՛, նայի՛ . զիզի մեջ ձուն կա, զազի մեջ չկա... (ԱՄՇ)

ժ Երեխայի կողմից ժողովրդախոսակցականում առկա մոխրագույնի անվանման արտաբերումը ևս ակամա պատճառ է դառնում բառախաղով արտահայտված զավեշտի ստեղծման.

— Կարան՛ս ասես՝ էս կատուն ի՞նչ գույնի ա, — հարցնում են 5 տարեկան Աշոտիկին:

—Մկան գոյնի,— լուրջ-լուրջ պատասխանում է երեխան:
(ԱՄՇ)

Մեկ այլ դեպքում զբոսաշրջային ազդագրի օտար բառի հապավումն է չգիտակցված բառախաղով «հայացվում»՝ տեղիք տալով զավեշտ առաջացնող մանկան զարմանքին.

— Ման, գրել են Նանե փուր, բայց ինչը տամ: (ԱՄՇ) Տես էջ 59, թիվ 2:

ի) Զավեշտ է առաջանում նաև երեխայի կողմից բառերի և բառակապակցությունների սխալ արտաբերման՝ բառային կառույցների դասավորությունը խախտելու միջոցով.

Մայրը, գիրքը տալով 4 տարեկան Նանարին, ասում է.

— Էս տար դիր տեղը, արի:

Քիչ անց Նանարը վերադառնալուց հետո տեղեկացնում է մորը.

— Ման, գիրքը տարա դիր տեղեցի, էկա: (ԱՄՇ)

լ) Մանկական զվարճախոսությունների մի մեծ խմբում զավեշտի հենքը երեխաների կողմից պատկերավոր՝ փոխաբերաբար ասված խոսքի չընկալելն է դառնում.

Ձյուն է գալիս: 2.7 տարեկան Ռազմիկը մայրիկի հետ զբոսնում է: Մայրը երգում է. «Ձյունը գալիս է դանդաղ, ձյունը իր երգն է երգում...»:

— Մաման, ձյունը բերան ունի, — հարցնում է Ռազմիկը:

— Չէ, բալիկ ջան:

— Մաման, բա ո՞նց ա իրա երգը երգում... (ԱՄՇ)

խ) Մանկական զվարճապատումներում զավեշտն ստեղծվում է նաև երեխայի միամիտ խոսքի ու գործողության՝ դեմքի, ձեռքի շարժումների միջոցով, կամ էլ ժողովրդական դարձվածք բառացի՝ ուղիղ իմաստով ընկալելու հետևանքով.

Երեխայի համար անհասկանալի է *կեսրերան ասել*⁴⁵ ժողովրդական դարձվածի իմաստն, ու մարդկանց փոխհարաբերություններում դրա երկիմաստ կիրառությունը:

45 Կեսրերան ասել – իմիջիայլոց, թեթևակի ասել:

Նա ձեռքի արիվ բերանի կեսը փակած է քավորին հրավիրում հարիսա ուտելու՝ ինչին հետևում է վիրավորված քավորի պատասխանը.

— Է՛, է, լանվ, — պատասխանեց կնքահայրը, — գնա՛ հորդ ասա. «Կէսբերան էլ ասի՛ չէկա, բաց բերան էլ կրկնեցի, էլի չէկա», շնորհակալ եմ ձեր մարդավարութենից⁴⁶:

ծ) Զվարճախոսություններից մեկում էլ մոր՝ երեխային ուղղած «Աշկիս չիշիկ ա արել. խելոքացել ա» խոսքին հետևում է երկամյա Թաթուլի՝ «Ման, աշկիդ չեմ արել, տակիս եմ արել» զավեշտալի պատասխանը: (ԱՄՇ) Տեն էջ 112, թիվ 228:

կ) Մեկ այլ դեպքում առածների այլաբանական իմաստի փոխարեն ուղիղ իմաստն ընկալելն է անսպասելի ծիծաղի հենքը՝ անպայման համեմատության եզրեր տեսնելով կենդանու և գիտակից մարդու միջև:

Այսպես, *Էշն ինչ իմանա, թե նուշն ինչ է* առածի իմաստը այսպես է «մեկնաբանում» առաջին դասարանցի Դավիթը.

— Ա՛յ մամ, ըսկի ես չգիտեմ, թե նուշն ինչ ա, էդ էշը որտեղի՞ց իմանա⁴⁷: Տեն էջ 178-179, թիվ 66:

հ) Միշտ չէ, որ երեխայի ներկայությամբ պետք է ամեն ինչի մասին խոսել. բացախոսությունը շատ դեպքերում անմեղ երեխայի միջոցով փոխանցվում է տիրոջը՝ անհարմար վիճակի մեջ գցելով նրա ընտանիքի անդամներին.

Հրանտիկն իրենց տուն եկած հյուրին երկար գննելուց հետո զարմացած ասում է.

— Պարզն պապիկ, բա ո՞ր է քո երկրորդ երեսը:

— Ո՞նց թե, բա մարդ երկու երես կունենան:

— Բա ինչո՞ւ է իմ պապիկն ասում, որ դու երկու երեսանի ես⁴⁸:

46 Անեկդոտներ, հատոր 3, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի և ընկ. տպարան, 1883թ., էջ 20:

47 **Գյուրջինյան Հ.**, Մի բուռ ժպիտ, Վանաձոր, Սիմ տպագրատուն, 2012թ., էջ 209:

48 Նույն տեղում:

ձ) Անսպասելի ծիծաղ է առաջանում, երբ հատուկ և հասարակ անունների համանունությունն է դառնում զավեշտի հենքը.

Մինը իր կնոջը նոր լուրեր էր ասում, ի վերջոյ ավելացրեց.

— Միրմանենց Շաքարը մեռաւ:

9 տարեկան որդին որ լսեց, ասաց.

— Հայրիկ, եթէ շաքարը մեռնի, այսուհետև թէյն ինչո՞վ պէտք է խմենք⁴⁹:

դ) Զավեշտի պատճառ է դառնում նաև բազմիմաստ բառի՝ մի- այն երեխայի իմացած իմաստով մեկնաբանությունը.

Հեռուստացույցով հաղորդում են. «Ելույթ է ունենում փողային նվագախումբը»: Փոքր տղան հարցնում է.

— Հայրիկ, ինչ է նշանակում փողային նվագախումբ:

Քույրը թե՛

— Չգիտեմ՝ ինչ է. էն, որ հարսանիքներում նվագելու համար փող են տալիս: (ԱՄՇ)

ճ) Երբեմն էլ դիմացինի հարցման ժամանակ արտաբերած բազմիմաստ բառի տվյալ իմաստը չընկալելը կարող է զավեշտի պատճառ դառնալ. երեխաներին դեռ հասու չեն համանունային կառույցները, և այդ չիմացությունն էլ շատ դեպքերում նրանց զավեշտալի իրավիճակների մեջ է գցում.

Պապին թիկունք կանգնած թոռը չի հանդուրժում, երբ ինչ-որ մեկը, թեկուզև մեծահասակը, փորձում է հարցնել. «Բայի՛կ ջան, պապդ կենդանի է՞», և հետևում է վիրավորված թոռան «Էդ դու ես կենդանին, իմ պապը կենդանի չէ»⁵⁰ պատասխանը: Տե՛ս էջ 177, թիվ 60:

մ) Երեխաները ասածը հաստատելիս, ասելիքը առավել հավաստի դարձնելու համար հաճախ են երդվում՝ իբրև ամենաթանկ

49 Ծիծաղի տուարակ, Անեկոտներ հայ և օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Տ.Ս. Շահագիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսես Վարդանեանի, 1892թ., էջ 164:

50 **Գյուրջիկյան Հ.**, Մի բուռ ժպիտ, Վանաձոր, Սիմ տպագրատուն, 2012թ., էջ 171:

անձնավորություններ՝ մատնանշելով ծնողներին, մասնավորապես հորը՝ «հորս արև», «պապայի արև»։ Երդման խոսքում արևի առկայությունն էլ, ըստ երեխայի մտածողության, հիմք է հանդիսացել նրա ամենակարևոր գործառույթը համարել հենց երդվելու ժամանակ կիրառությունը, որն էլ մանկական խոսքում անսպասելի ծիծաղի առաջացման հիմքն է դառնում։

Ստորև ներկայացվող մանկական զվարճախոսությունը արտաբերողի հավաստիությունը որոշ չափով կասկածի տակ է դնում, քանզի այն, առնչվելով մանկաշխարհին և պատկանելով անեղդոտների ապարանյան շարքին, ինչ-որ տեղ կրում է նաև մեծերի միջամտության կնիքը.

Ապարանցի երեխային հարցնում են.

— Բալիկ ջան, արևն ինչի՞ համար ա:

— Երդվելու: (ԱՄՇՀ)

յ) Մանկական զվարճախոսությունում զավեշտի հենք կարող է դառնալ նաև նախազգուշական բնույթի *բանը մի անգամ կըլի* ժողովրդական ասույթի կիրառությունը.

Երեխան բարձրանում է ծառը: Տատը տեսնում, անհանգստանում է.

— Ծառիցը իջի՛, ջանիդ մատաղ, բանը մի անքամ կըլի, վեր կընգնես:

Թողը չի լսում ու ծառից ընկնում է, բայց բան չի լինում: Թողը նորից է բարձրանում ծառը, տատը նորից է խնդրում.

— Բանը մի անքամ կըլի, ջանիդ մեռնես, իչի՛ ցած:

— Տատի՛ ջան, «բանը մի անգամ կըլի»-ն արթեն էլել ա, վախիլ մի: (ԱՄՇ)

ն) Երեխան շրջապատում ինչ տեսնում, արագ կապկում է, ինչ լսում, յուրացնում է և անհրաժեշտության դեպքում օգտագործում այն: Անգիտակցաբար յուրացրածն էլ հետագայում կիրառելիս բազմաթիվ զվարճալի միջադեպերի և զվարճախոսությունների առաջացման պատճառ է դառնում: Անսպասելի ծիծաղ առաջացնող խոսքի և գործողության նմանակման հրաշալի օրինակ է հետևյալ իրողությունը.

Ձմռան օրերին 4-ամյա Շավարշիկը հենց որ Կարո պապի տուն էր գնում, Նարգիզը մոտենում էր հորքրորի տղային, ձեռքերի ակերով ականջների սառնությունն էր ստուգում ու ասում.

— Ապեր ջան, լոշտակներդ էս ճնց են սառել:

Մի օր էլ երբ հայրը աշխատանքից տուն է գալիս, Շավարշիկը, հոր գրկին նստելով, քեռու աղջկա պես ականջների սառնությունն է ստուգում ու զարմացած ասում.

— Պանյ, լոշտակներդ էս ճնց են սառել... (ԱՄՇ)

Ընտանիքում երեխան ծնողների միջև փոխհարաբերությունների ժամանակ օգտագործվող բառապաշարի ունկնդիրն է դառնում, որը «քսերոքսվելով»՝ իր արտացոլանքն է գտնում փոքրիկի խոսքում ու, հարկ եղած դեպքում, բուներանգի պես այդ նույն արտահայտությունը հակադարձվում է ծնողներին՝ զավեշտ առաջացնելով, բայց միաժամանակ խորհելու տեղիք տալիս.

Երկու տարեկան Նարեկը դրսում խաղալիս է լինում, մայրը ձայն է տալիս և կանչում է տուն: Չցանկանալով տուն գնալ, Նարեկն իր հերթին գոռում է.

— Դու տո՛ւս, այ՛ Եվայի ցեղ...⁵¹

շ) Զավեշտի աղբյուր է դառնում խոսքային այնպիսի նմանակումը, երբ ծնողներից մեկի՝ մոր՝ զավակին ուղղված հոգատար խոսքը (փորի ցավը մայրը բացատրում է որդու ստամոքսի դատարկությամբ) երեխան հակադարձում է հորը:

Աշխատանքից տուն եկած և գլխացավից տրտնջացող հորը երեխան նույն «մասնագիտական» հիմնավորմամբ էլ հուսադրում է.

— Հոգ մի՛ ընէր, հայրիկ... երբ գլուխդ ցախի, կը նշանակէ թէ գլուխդ դատարկ է⁵²: Տեն էջ 169, թիվ 32:

ո) Թե՛ վերը բերված օրինակում, երբ երեխան ոչ թե կապկում, այլ սրտացավ վերաբերմունքով իր «եզրակացությունն» է հայտ-

51 Ուրախության դասագիրք, Կազմեց Աննա Չոբանյանը, Եր., «ՎՄՎ-ՊՐԻՆՏ», 2015, էջ 12:

52 Գիրք առակաց, Կարապետ քահանայ Գալֆայեան, Լիբանան, 1957թ., էջ 123:

նում, թե՛ ստորն ներկայացվող նմուշում, երբ վիրավորական թվացող խոսքի հակադարձման մեջ «մեղավորության» իր բաժինն ունի նաև թոռան հոգու հետ խաղացող պապը, անսպասելի ծիծաղ է առաջացնում անմեղ երեխաների խոսքային նմանակումները.

5-ամյա թոռանը Սարո պապը ամեն անգամ «կոզլիկ⁵³ ջան» էր ասում: Մի օր էլ նեղսրտած թոռը պապից բացատրություն է պահանջում:

— Գիտե՞ս՝ ինչի եմ կոզլիկ ասում, Կարեն ջան, կոզլիկը ուլիկն ա, բայց որ ուլը մեծանում ա, ասում են կազոռ, — կատակի է տալիս պապը:

Մի քանի օր անց պապը տնից դուրս գալիս կրկին թոռանն է դիմում՝ ասելով.

— Հաջո՞ղ, կոզլիկ ջան:

— Հաջո՞ղ, կազո՞ղ ջան, — անմեղ տոնով պատասխանում է թոռը: (ԱՄՇ)

յ) Աղջիկ երեխաները խոսքային և գործողությունների նմանակումների համադրմամբ ճաշ են եփում, տիկնիկների հետ խաղալիս խոսում, «քնեցնում», «օրորոցային» են ասում, «դաստիարակում», երբեմն էլ դրանց մասնակից են դարձնում մեծերին՝ խինդ ու ծիծաղով լցնելով նրանց հոգին.

— Պապիկ, երեխաներիս նայի, գնամ հաց առնեմ՝ գամ, — ասաց թոռնիկս, ապա մահճակալի վրա շարեց «երեխաներին»՝ արջուկին, նապաստակին, տիկնիկներին ու շարունակեց, — մի՛ վախեցի, պապիկ ջան, չի՞շիկ չեն անի: Իրանք արդեն մեծ են. որ ունենում են, ասում են⁵⁴: Տեն էջ 171, թիվ 40:

պ) Մանկական գվարճախոսություններում զավեշտի հենք է դառնում տեսածի (երեխան գյուղում շատ էր տեսել, որ խմած մեկին երկու հոգով թևերն ընկած տուն են ուղեկցում) և Այբբենարանում կարդացածի («Աննան և Արան Սուրիկին տուն տարան») հիման վրա՝ Մեսրոպի եզրակացությունն ու մորն ուղղված հարցումը.

53 Կոզլիկ (ռուս.) – այծուկ, ուլիկ:

54 **Քոչարյան Ս.**, Զվարճապատումներ և իրապատումներ, «Ատողիկ» հրատ., Երևան, 2008, էջ 70:

— Ման, հընչի Սուրիկը խմոնկ էր...⁵⁵: Տեն էջ 189, թիվ 108:

ջ) Ընտանիքում նիստուկացի, մաքրության դասեր ստացած երեխան «դասեր» է տալիս նաև նույն ընտանիքի անդամներին. հանուն մաքրության՝ նույն համառությամբ ու հարկադրանքով էլ երեխան է հետևում նրանց «մաքրությանը»՝ ծիծաղ առաջացնելով ներկաների շրջանում.

Պապը օղի էր քաշում: Նրան կանչում են հաց ուտելու:

— Պապի՛, ձեռքերդ կեղտոտ ա, — ասում է 3 տարեկան Մարի թոռնիկը:

Պապը լվանում է ձեռքերը, բայց սևությունը լրիվ չի անցնում:

— Պապի՛, գդալը տուր ես կերցընեն, — ասում է Մարին: (ԱՄՇ)

ո) Փոքրիկ Հրանտիկը գյուղում տեսել է մեղուներին «ծուխ տալը» և գիտի, որ մեղվաբույծը դա անում է, որ մեղուները չկծեն, ու նա, ինչպես հարկն է, հանգիստ կարողանա փեթակի ներսում մեղուների վիճակը ստուգել: Հենց այդ «իմացության» հիման վրա էլ անսպասելի ծիծաղ է հարուցում եկեղեցում ժամերգության ժամանակ բուրվատից դուրս եկած ծխի՝ պապին տված թոռան յուրովի բացատրությունը.

«Ծուխ էր անում, որ մեղուները մեծ տերտերին չկծեն»⁵⁶: Տեն էջ 178, թիվ 62:

ս) Բոլոր ընտանիքներում երեխաներին սովորեցնում են արտաբերել իր անունը, ազգանունը և հայրանունը: Այդքանը գրեթե ամեն փոքրիկ կարողանում է ասել, բայց դժվարանում է ընտանիքի մնացած անդամների կապերը ճիշտ ներկայացնել, ներկայացնելիս էլ ասելիքը զավեշտի է վերածվում.

— Անդի՛կ, ի՛նչ է ազգանունդ, — հարցնում են 7 տարեկան երեխային::

55 Նիկողոսյան Տ., Իրական դեպքեր բայագետցիների կյանքից, Եր., «Լուսարաց» հրատ., 2016, էջ 38:

56 Գյուրջիյան Հ., Մի բոռ ժպիտ, Վանաձոր, Միմ տպագրատուն, 2012թ., էջ 180-181:

- Խաչատրյան Անդրանիկ Սերոբի:
- Իսկ հայրիկիդ ազգանունը:
- Չգիտեմ:
- Իսկ պապիկիդ ազգանունը:
- Խաչատրյան Պապիկ տատիկի⁵⁷:

Վ) Կան նաև մանկական այնպիսի գվարճախոսություններ, որոնցում զավեշտը դրսևորվում է հնչյունարտաբերման միջոցով: Խոսել սկսելու առաջին իսկ օրերից երեխաները միշտ էլ բառերը վերարտադրելիս դժվարությունների են հանդիպում, մանավանդ բաղաձայններն արտաբերելիս: Հենց այդ ժամանակ էլ թոթովախոս գրեթե բոլոր մանկիկների «բառապաշարում» օգտագործվող նորահայտ բառերը սկզբնական շրջանում ծնողների ու հարազատ-մտերիմների համար և՛ հաճելի է, և՛ դժվարընկալելի: Ինքնատիպ վերարտադրվող այդ արտաբերումներին, ինչպես նշեցինք շարադրանքի սկզբում, առաջին անգամ անդրադարձել է Հրայր Աճառյանն իր «Մանկական բարբառ»-ում⁵⁸, սակայն այստեղ մենք կանդրադառնանք հնչյունարտաբերման այնպիսի դրսևորումներին, որոնք հենք են դարձել մանկական գվարճախոսությունների առաջացման: Դրանք հիմնականում մանկական խոսքի թոթովախոս-թվատ դրսևորումների հենքի վրա ստեղծված գրառումներ են:

Եթե մեծերի թվատությանն առնչվող երգիծապատումներում թվատությունը լեզվական արատ է, և զավեշտի հենքը այդ արատի վրա կառուցված պատումներն են, ինչպես 3 թվատ քույրերինը⁵⁹,

57 Մանկական խոսք, Կազմող՝ Ասահիտ Գալստյան, Երևան, «Զանգակ-97», 2006թ., էջ 31:

58 **Աճառյան Հր.**, Մանկական բարբառ, «Բանասեր» հանդես, հատ. 3, պրակ Ա, Պարիս, 1901, էջ 3-28:

59 Ծիծաղում են վանեցիները (Հավաքել, կազմել են Վարազդատ Հարությունյանը և Նորա Մելիքյանը), Երևան, «Զանգակ -97», 2006թ., էջ 129:

Աճառյան Հր., Պոլսահայ անգիր բանահյուսություն, ԵԴՀ հրատ., Եր., 2009, էջ 163:

ՀԱԻ-ի արխիվ, Իրեք աղջիկը, Լոռի, Համգաչիման (այժմ՝ Մարգահովիտ), Վ

ապա մանկականում անսպասելի ծիծաղի առաջացման պատճառը երեխայի թոթովախոսությունն է.

— Հարությունը քո ինչն է, — հարցնում են 4-ամյա Սարգիսին:
— Հարություն չի, Հայություն է, — «տողում է» Սարգիսը: (ԱՄՇ)

Ծիծաղ է առաջանում, երբ զավեշտի հենք դարձած մանկան թոթովախոսությունը չի ընկալվում, ինչպես ստորև մեջբերվող օրինակում.

...Տղան, առնելով այրբենարանը, նստաւ հօրը ծունկերուն վրայ, և այրբենարանի առաջին գրին վրայ դնելով մատը՝

Տղան. — Աբան, անը ըստ:

Հայրը. — Այր:

Տ. — Ատի չեղաւ, արան, անը ըստ:

Հ. — Տղան, իշտէ կ'ըսես, այր, այր:

Տ. — Չէ, արան, ինծի պէս մի՛ ըսէր, վարժապետին պէս ըստ:

Հ. — Տղան, վարժապետը ինչի՞ն կ'ըստ:

Տ. — Վարժապետը այր կ'ըստ, անը:

Հ. — Տղան, իշտէ ես ալ վարժապետիդ քիմի⁶⁰ կ'ըսես այր, այր...

Հայր ու տղայ քրտինքներու մէջ մտան, ժամերով այր, այր ըսելէն⁶¹: Տեն էջ 185-186, թիվ 96:

Սկզբնական շրջանում թոթովախոս մանկիկը չի ընկալում իր թվատ խոսքը, և մի 2-3 ամիս անց միայն, հաղթահարելով արտաբերման նախկին դժվարությունները, 4-ամյա Նանեն ինքնագոհ, մի մեծ գործ արածի պես, հեռախոսով տեղեկացնում է իր առջընթացի մասին, ինչ խոսք, դեռևս չընկալելով ծիծաղ առաջացրած հարանունային բառի իմաստը.

— Ֆլորա տատիկ, գիտես, որ ես փոքր էի, քեզ ասում էի Պլորա տատիկ: (ԱՄՇ)

Ղազարյանի ֆոնդ, 87 թղթապանակ, էջ 73 և այլն:

60 Քիմի-նման, պես:

61 **Գեորգեան Գ.**, Չնքուշապատում, 1-ին հատոր, Երուսաղեմ, տպարան Ս. Հակոբեանց, 1970թ., էջ 309:

Մեկ այլ գրառման մեջ բաղաձայնների փոփոխություններն են դառնում զավեշտի հենք.

—Ման, մի քից հաթիս վրա տրեմ թսի (իմա՝ կրեմ քսի), հա՛,—ասում է 3 տարեկան Տիգրանիկը: (ԱՄՇ) Տեն էջ 76, թիվ 72:

Իհարկե, ոչ բոլոր ծիծաղելի թոթովախոսություններն ու թվատարտաբերումներն են մանկական զվարճախոսություն համարվում, անկախ նրանից, դրանք փոքրերն են արտաբերում, թե մեծերը: Այսպես, օրինակ, մեր գրառած «Էրեխի լեզուն էրեխեն կհասկանա» զվարճապատումը, ճիշտ է, թվատ լեզվով խոսող երեխաների մասին է, սակայն մեծերի կողմից է ստեղծված, և որոշակի սյուժե ունեցող երգիծական մանրապատում է.

Մեկի մեկուկես տարեկան էրեխեն լաց ա ըլըմ ու անընդհատ ասըմ ա՝ «բըթա, բըթա, բըթա»: Տնեցիք բան չեն հասկանըմ՝ ինչ ա ասըմ: Ստիպված գնըմ են հարևանի նույն տարիքի էրեխին են կանչըմ, որ իմանան՝ ինչ ա էղել: Որ գալիս ա լըըմ դրա «բթա-բթա»-ն, ասըմ ա.

—Թեզ ով էլ ասըմ ըտթան ոտես, ոլ հըմի էլ «բթա-բթա» ես դուըմ... (ԱՄՇ)

տ) Մանկական բանահյուսական ստեղծագործությունների համատեքստում իրենց առանձնահատկություններով տարբերվող երկխոսական բառախաղ-զվարճախաղ-զայրախաղը (ռուսերեն՝ *дразнилка* – զայրախաղ եզրույթըը ռուս բանագետների բնորոշումն է) առնչվում է երեխայի մտավոր ունակություններին և ստուգում, բացահայտում է մարդկային փոխհարաբերություններում առաջին քայլերն անող մանկան մտավոր կարողությունները: Մանկական բանարվեստի այս տեսակի կիրառությունը խաղը ասես վեր է ածում ստուգատես-մրցույթի, որն ուղեկցվում է երկխոսության միջոցով: Այդպիսի բառախաղերն իրենց որոշակի կանոններն են առաջադրում մասնակիցներին, այն է՝ առաջադրած բառից բխած պատասխանով պետք է դիմացինին կան «հաճելին» մատուցվեր, կան էլ «խոսքակոխ անելով»՝ անհարմար ու ծիծաղելի դրության մեջ գցեր նրան: Այսպես, օրինակ՝

- Ասա՛ վերջ: — Վերջ:
- Ընկնես փեջ, վառվես մինչև վերջ:
- Ասա՛ վրացի: — Վրացի:
- Տամ քացի, թոնես հացի: (ԱՄՇ)

կամ՝

- Ասա՛ կաշտան: — Կաշտան:
- Շները քեզ քաշ տան:
- Ասա՛ ակնոց: — Ակնոց:
- Բըռթեմ քըցեմ ք...անոց:
- Ասա՛ կանաչի: — Կանաչի:
- Կապիկի ոռը պաչի: (ԱՄՇ)

Նմանատիպ կառույցներում հանդիպում են նաև գոեհիկ պատասխանների (ինչը հատուկ է հատկապես բարձր տարիքի երեխաներին), երբեմն էլ՝ խաղի վերոնշյալ կանոնները չպահպանած իմաստագուրկ խոսքախաղերի՝ կապված պատասխանողի մտածողությունից ու տարիքային որոշակի սահմանափակությունից:

Պատահում են նաև այնպիսի իրադրություններ, երբ մանկական *զվարճահասող-գայրահասողի* կիրառության ժամանակ մասնակիցներից մեկի տարիքային և դիրքային տարբերությունը ոչ թե անհարմար դրության մեջ կարող է գցել մասնակցին, ինչպես վերը նշված նմուշներում, այլ անսպասելի ինքնաբերվա ծիծաղ առաջացնել՝ դառնալով մանկական զվարճախոսության ինքնատիպ դրսևորումներից մեկը: Այսպես, օրինակ.

Տավուշի մարզի գյուղերից մեկի դպրոցի տնօրենը առաջին դասարանում սովորող իր ազգականի երեխայի հոգու հետ խաղալու համար ասում է.

- Տղա՛ ջան, հըլա ասա /:
- Ասիլ չըտյեմ, — անհարմար զգալով՝ վրա է բերում երեխան:
- Քեզ ասում եմ՝ ասա /, — փոքր-ինչ ձայնի հնչերանգը իբր քարձրացնելով ու խստացնելով՝ կրկնում է տնօրենը:
- Ասիլ չըտյեմ:
- Իսի՛, այ՛ բալա::
- Ասեմ, որ դուն էլ յետ դառնաս ասես՝ ծակըս կի՞... (ԱՄՇ)

բ) *Մանկական* գվարճախաղի մեկ այլ տեսակ՝ շուտասելուկը ևս, որոշակի բաղաձայնների (կոնկրետ՝ Ճ-ի) կուտակումով, սակայն այլ միջավայրում և այլ տարիքային խմբի հետ կիրառվելիս (երբ «խաղընկերներից» մեկի տարիքային և դիրքային տարբերությունն ակնառու է) կարող է զավեշտի հենք հանդիսանալ և անսպասելի ծիծաղ առաջացնելով՝ վերածվել մանկական գվարճախոսության.

Առաջին դասարանցիների հետ իր վերջին դասն անցկացնող թոշակառու դասվարը, ամփոփելով հայերենի այբուբենի տառերը, երեխաներից պահանջում է յուրաքանչյուր տառ կիրառել համապատասխան բառերով արտահայտված նախադասություններում:

Երբ հերթը գալիս է Ճ տառին, ակտիվություն է դրսևորում նաև դասարանի ամենաթույլ առաջադիմությամբ աշակերտներից մեկը: Ուսուցչուհին, ոգևորված տղայի ակտիվությունից, նրան է հարցնում, և ...հետևում է երեխայի «անմեղ» ու ճիշտ պատասխանը.

—Ճլորած ճուճուլըս ճըտորըցընեմ ճակատիտ...

Քար կտրած երեխաներին և անհարմար վիճակում հայտնված ուսուցչուհուն օգնության է հասնում դասամիջոցի զանգը...(ԱՄՇ)

գ) Ծտողները, տատիկ-պապիկները հաճախ են տղա երեխաներին սիրելիս իրենց սերն արտահայտում մանկիկի պուպուլը (սեռական օրգանը) «ուտելու» պատրաստակամությամբ: Սակայն անմեղ երեխայի՝ «վտանգը» իրենից հեռացնելու պաշտպանական խոսքը երբեմն վերածվում է զավեշտի, և ծիծաղն անհագնանում է մասնավորապես այն ժամանակ, երբ այդ սերն արտահայտողը իգական սեռի անձնավորությունն է: Լոռու գվարճախոսություններից մեկում թոռանը սիրող տատը երբ ասում է. «Էսա տատին ճուճուլըտ կուտի», թողը լաց լինելով՝ խնդրում է. «Տատի ջան, իմը *մեխկ* ա, պապայինը կեր, էլի»: (ԱՄՇ) Տեն էջ 126, թիվ 284:

Մեր գրանցած մեկ այլ նմուշում անհանգստացած երեխան «վտանգը» իրենից վանելիս այլ պատճառաբանություն է գտնում. «Տատի ջան, իմը պուճուր ա, պապայինը կեր, էլի»: (ԱՄՇ) Տեն էջ 126, թիվ 285:

Ընդ որում, հանկարծակիի եկած ավանդապահ տատը աղջ-

կան երդվել է տալիս, պատվիրում, որ մինչև իր մահը այդ խայտառակ արտահայտության մասին ոչ ոք չպետք է իմանար:

ու) Երեխան խոսակցի խոսքում զեղչումը չի ընկալում. հոր արտաբերած պատկերավոր խոսքը նրան զարմանք է պատճառում.

— Էրիկ, քանի՞ անգամ եմ ասել, որ գնաս քնելու: Քո տարիքում ես հավերի հետ էի քնում (իմա՝ հավերի թառ լինելու ժամանակ-ԱՍ), — ասաց հայրը:

— Իսկ ինչպե՞ս էիր տեղատրում թառի վրա⁶²:

փ) Մանկական զվարճախոսությունների մի խումբ էլ կա, որոնցում զավեշտը դրսևորվում է կամ երեխաների կողմից անծանոթ բառերի ստուգաբանության ժամանակ, ինչպես, օրինակ, հետևյալ նմուշում.

Խոսակցության մեջ «խեղկատակ» բառը լսելով՝ 6 տարեկան Բաբկենը հարցնում է.

— Տատի՛կ, խեղկատակը խեղդած կատակն է: (ԱՄՇՀ) Տես էջ 99, թիվ 170:

Կամ էլ՝ բառամասնատմամբ և դրանցով զուգաձևեր ստեղծելով.

2.8 տարեկան Քրիստինեին չարություն անելու համար մայրը «դիտողություն» է անում.

— Ամո՛թ քեզ, անդաստիարակ:

Մի քիչ մտածելուց հետո Քրիստինեն ասում է.

— Ման, դո՛ւ ես անընկեր+Աննան:

(Քրիստինեի մանկապարտեզի դաստիարակչուհու անունը Աննա է. ան+դաստիարակ – ան+ընկեր+Աննա – ծանոթությունը՝ ասացողի): (ԱՄՇՀ):

ք) Երբեմն էլ երեխայի ծնողի, հարազատի հանդեպ տածած անսահման սերը՝ արտահայտած նկարի տակի մակագրությամբ, զվարճախոսության մեջ դառնում է զավեշտի հենքը.

Երրորդ դասարանցիները նկարչության դասին տարատեսակ բաներ են նկարում, որ մարտի 8-ի կապակցությամբ նվիրեն իրենց

62 Ծիծաղենք միասին, Կազմեց Սարինե Ամիրխանեանը (Գևորգեան), Բ պապագրություն, «Նայիրի» հրատ., Թեհրան, 2007, Մանկականը՝ էջ 110:

մայրիկներին: Սուրենը մի երփներանգ գորգ էր նկարել ու գրել.
«Մորս հիշատակին»: (ԱՄՇՀ) Տեն էջ 99, թիվ 172:

օ) Մեկ այլ դեպքում էլ տատի ծննդյան օրը շնորհավորող մանկան՝ «զեղարվեստական պատկերով» արտահայտված անկեղծ բարեմաղթանքի խոսքն է ակամայից անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ դառնում.

«Տատիկ ջան, շնորհավորում եմ քո ծննդյան տոնը, ցանկանում եմ քեզ առողջություն, երջանկություն և կանաչ ճանապարհի դեպի կապույտ երկինք»: (ԱՄՇ), Տեն էջ 134, թիվ 321:

Ֆ) Փոքրիկները անգիրներ ու երգեր են սովորում, արտասանում, երգում են, հանպատրաստից վերափոխում բառերն ու բառակապակցությունները՝ դրանց փոխարեն, ըստ իրավիճակի ու ըստ ցանկության, օգտագործելով այլ բառեր ու արտահայտություններ՝ խինդ ու ծիծաղ առաջացնելով շրջապատում...

Երեք տարեկան Մանեն, որ հաճախ էր խոսվում ու պատկած լաց լինում, երգելիս այսպես է փոխում թումանյանական խմբերգի բառերից մեկը.

*Ամպի տակից ջուր է գալիս,
Ջուր է գալիս, փրփրում,
Էն ում յարն է պատկած լալիս
Հոնգուր-հոնգուր էն սարում... (ԱՄՇՀ)*

Իսկ Աշոտիկը, որ իրեն բաց կանաչ առյուծ է երևակայում, Հովհ. Թումանյանի «Շունն ու Կատուն» այսպես է ներկայացնում.

*Ժամանակով Վազրը ճոն էր,
Առյուծն էլ գլխին գդակ չունէր,
Միայն գիտեմ ոչ որդիանց որդի,
Ճանկել էր մի հովսազի մորթի... (ԱՄՇՀ)*

Ակնհայտ է, որ մանկական խոսքում, մասնավորապես զվարճախոսություններում, պատկերավորման տարատեսակ միջոցները գրեթե բացակայում են (դրանք պարզ, անպաճույճ կառույցներով են ներկայանում): Այնուամենայնիվ փոքրիկները անկեղծ մղումով երբեմն մտքի այնպիսի փայլատակումներով են հանդես գալիս, որ ասելիքի խորությամբ զարմանք ու հիացմունք են պատճառում:

Ծնողի, հարազատի հանդեպ մանուկներն իրենց սերն ու կարոտն արտահայտելիս յուրօրինակ «արտահայտչաձևեր» են կիրառում, որի մասին կերպագեղին անգամ որոշ գրողներ: Մեր գրառումներում դրանք քիչ չեն, այսպես, օրինակ.

Մի քանի ժամով մոր բացակայությունը 4-ամյա Տիգրանն արտահայտում է «Կարոտս տան մեջ քեզ ա ման գալի» (Տեն էջ 132, թիվ 313), իսկ մի քանի ամիս մորաքրոջ բացակայությունը 3 տարեկան Վիկտորյան՝ «Աչքերս քեզ էսքան էին կարոտել...» (Տեն էջ 133, թիվ 316) ապրված պատկերներով: 3-ամյա Սիրանույշն էլ երբ ուզում է «ամալի չափ»-ով ներկայացնել քեռու հանդեպ տածած սիրո աստիճանը, որին հակադարձվում է քեռու «դժգոհությունը», անմիջապես հետևում է երեխայի «փիլիսոփայական» հիմնավորումը. «Քեռի՛ ջան, ինքը քիչ ա, բայց միշտ կա»... (Տեն էջ 139, թիվ 340): Եկեղեցում խաչը գլխին դնելուց հետո զգացած-ապրածը տատին այսպես է ներկայացնում 5.6 -ամյա Աշոտիկը. «Հասմի՛կ տատի, խաչը դրեց գլխիս, կպավ սրտիս»: (Տեն էջ 143, թիվ 360):

Կարոտի ինքնատիպ դրսևորման մեկ այլ նմուշում 7-ամյա Գրիգորը, սևեռուն հայացքով նայելով 6 ամսականում իրեն նկարահանած կինոժապավենը, իր *գղզղալը*, թմրիկ մարմինը, տոտիկները բերանը տանելը, ասում է. «Ման, ինձ ընենց եմ կարոտել...» (Տեն էջ 106, թիվ 202):

Մարդ արարածի վերաբերյալ 6 տարեկան Հայկի «փիլիսոփայական մտորումն» էլ, թե «Ամենամեղքը փոքրիկ երեխաներն են, մեկ էլ՝ ծերերը», հիմնավորվում է նրանց ցանկությունների անիրագործելիությամբ. «Ինչ ուզում են, չեն տալիս, ինչ ցանկանում են, չեն կարողանում անել...» (Տեն էջ 128, թիվ 294):

Մանուկների անկեղծ արտաբերումներում մտքի նմանատիպ առկայծումները անսպառ են և բնորոշ են աշխարհի բոլոր երեխաներին:

Այսպիսով, մանկական խոսքում զավեշտի և թեմատիկ դրսևորումների ձևերը շարադրվածով չեն սահմանափակվում, դրանք բազմազան են, ինչպես բազմազան ու յուրատեսակ են մանուկների մտածողությունն ու հետաքրքրությունների շրջանակները: Տարբեր տարիքային խմբերի երեխաների խոսքի՝ վերը բերված

բոլոր օրինակները մեկ անգամ ևս հավաստում են, որ մանկական գվարճախոսություններում անսպասելի ծիծաղը արտահայտվում է երեխաների անկեղծ խոսքի, իրերն ու երևույթները, մարդկային փոխհարաբերությունները իրենց հնարավորությունների սահմաններում գնահատելու, բառային կառույցները ուղիղ իմաստներով ընկալելու և ասելիքը յուրովի վերարտադրելու միջոցներով:

Մանկական գվարճախոսությունների ստորև ներկայացվող հավաքածուն տարատեսակ մասնագետների համար հետաքրքիր ու արժեքավոր կարող է լինել թե՛ բանահյուսական այս յուրօրինակ ժառանգության նորովի գնահատման, թե՛ փոքր տարիքի երեխաների լեզվամտածողության, «փիլիսոփայական վերլուծությունների», հոգեբանության, աշխարհընկալման կարողությունների խորքերը թափանցելու և չբացահայտված շատ ու շատ գաղտնիքներ վեր հանելու, ինչպես նաև ընտանեկան, կենցաղային ու մարդկային փոխհարաբերությունների վերաբերյալ պատկերացում կազմելու տեսանկյունից:

Մանկական մտքի փայլատակումների այսպիսի նյութերի հրատարակությունը, անշուշտ, մեր մանկագիրներին կօգնի երեխաների համար գործեր գրելիս օգտվել նմանապիպ կառույցներից, ուղղորդվել դրանցով, խորամուխ լինել և լիարժեք հաղորդակցվել փոքրիկի խոսքի «երգիծական» շերտերի տարատեսակ դրսևորումներին, ինչը էլ ավելի հետաքրքիր, բնական ու գրավիչ և դյուրընկալ կարող է դարձնել մատուցվող ստեղծագործությունը:

Այստեղ տեղին է հիշել մանկագիր Մարո Աբրահամյան-Թաթևյանի սևակյան հուշագրությունից մի պատատիկ, որտեղ Պ. Սևակին գրած նամակում Մայան (Պ. Սևակի առաջին կինը–ԱՍ) հայտնում է, թե՛ «Հրաչուն կտրականապես չի ընդունում, որ երկրագունդը կլոր է և պտտվում է իր առանցքի շուրջը», ասպա ներկայացվում է Սևակի որդու անկեղծ «ըմբոստությունն» ու «հիմնավոր» բացատրությունը, թե՛ «Սուտ է, երկրագունդը ոչ մի անգամ էլ չի պտտվում: Թե չէ մեր պատուհանից երևացող այն ազդագիրը ամեն օր իր տեղում չէր լինի...»⁶³:

63 Աբրահամյան-Թաթևյան Մարո, Փառք և օրհնություն հիշատակին քո,

Այնուհետև հուշագիրը մեջ է բերում Պարույր Սևակի արձագանքը դրան.

—Լավ է, չէ՛, մանկական հիանալի պատմվածք կլինի:

Եվ, իրոք, մանկագիր Մարո Աբրահամյան-Թաթևկյանը, այս փաստը հիմք ընդունելով, գրում է «Այսպես էլ հանելու՛կ» պատմվածքը, որը Մոսկվայում հաղորդվում է ռադիոյով, այնուհետև Երևանում տպագրվում հեղինակի «Նարինջ» մանկական գրքում⁶⁴:

Մեկ այլ առիթով ևս Մեծ եղեռնի հուշահամալիրը կառուցելու ժամանակ Ծիծեռնակաբերդի բարձունքից մի քանի գրողներով (Պարույր Սևակ, Համո Սահյան, Մկրտիչ Սարգսյան, Վիգեն Խեչումյան, Գևորգ Արշակյան) իջնելիս աստղագարդ երկնքին նայելուց հետո 3-ամյա Վահագնի արտաբերած պատկերն է հիացնում Սևակին, և նա անմիջապես արձագանքում է՝ դիմելով իր գրչակից ընկերներին.

—Լսեցի՞ք, տեսա՞ք՝ Մկրտիչի տղան ինչ գեղեցիկ գեղարվեստական պատկեր նկատեց...⁶⁵

Հենց նմանատիպ դրսևորումներն է նկատի ունեցել ռուս մեծ մանկագիր Կորնեյ Չուկովսկին իր «2-ից մինչև 5» գրքի վերջում բոլոր մանկագիրների համար 13 պատվիրանները գրելիս:

Այդ նույն բանը՝ իբրև պատվիրան, այլ ձևակերպմամբ, համայն մարդկությանն է հղում համաշխարհային գրականության մեջ իր հաստատուն տեղը նվաճած Վիլյամ Սարոյանը՝ հարցազրույցներից մեկի ժամանակ ասելով. «Ամենն հետաքրքիր ցեղը պզտիկներն են, մեկ ալ՝ ծերուկները: Անոնցմե շատ բան պիտի սորվինք»:

«Լույս», Երևան, 1993, էջ 20:

64 Նույն տեղում, էջ 21:

65 Մկրտիչ Սարգսյանը մանուկների հուշերում, Երևան, «Հայաստան» հրատ., 2011թ., էջ 333:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՆԿԱԿԱՆ ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու)

1

5-ամյա Արմենը հորը՝ Պարույր Սևակին, ցույց տալով նկարչության բնագավառում հերթական անհաջող փորձը, սրտնեղած ասում է.

— Հայրիկ, ինչից է՝ ինչքան փորձում եմ Լենինին նկարեմ, չի ստացվում, Ստալին է դուրս գալիս:

Բանաստեղծը քահ-քահ ծիծաղում է՝ հրճվելով որդու անմեղ «հայտնագործությամբ»:

2

Մայր ու աղջիկ փողոցով անցնում են, իսկ այբուբենը նոր ավարտած 6.6-ամյա Նանեն հայերենի տառերի իմացությունը ամրապնդում է տարատեսակ ազդագրերն ու ցուցանակները կարդալով: Քիչ անց տեսնելով զբոսաշրջության ազդագիրը՝ տարակուսած դիմում է մորը, թե՛

— Ման, գրել են *Նանե Կոուր*, բայց ինչը տամ:

3

3.6 տարեկան Սեդրակը համակարգչից կարողանում է ավտոմեքենաների մասին տեղեկություններ «քաղել»։ յուրացրել էր մի շարք մեքենաների մակնիշները, այն էլ... ոռուսերեն հաղորդումներից: Մի օր էլ երեխան ընկերավարի դիմում է հորը.

— Պա՛շ, կարա՞մ ասես՝ մետալալոմը¹ ի՞նչ ավտո ա...

1 Ըստ երևույթին հաղորդվել էր, թե որոշ մեքենաներ դարձել են մետաղի ջարդոն, ռուս.՝ металлом:

4

3.7 տարեկան Սեդրակին հայրը ավտոմեքենայով մանկապարտեզ է տանում: Մուտքի մոտ որ մեքենան կանգնեցնում է, Սեդրակը, մատը թափ տալով, հորը պատվիրում է.

— Պա՛նջ, չմոռանաս մայրիկին ասեն, որ ինքը չմոռանա քեզ ավի՛, որ ինձ համար մոտոցիկլետ առնես:

5

Մի օր 3-ամյա Տիգրանը հարցնում է հորաքրոջը.

— Հորաքրո՛յր, էսօրը էքուցվա էրեգն ա, չէ՛:

6

3-ամյա Տիգրանի մայրն աշխատում էր, իսկ հայրը 3 տարի ոչ մի տեղ չէր աշխատում, պարապ-սարապ ման էր գալիս: Վերջապես Տիգրանի հայրն էլ է գործ ճարում ու երբ առավոտ ծեգին ուզում է տնից դուրս գալ, — տղան հարցնում է.

— Էդ ու՛ր ես գնըմ, հայրի՛կ:

— Գործի, տղա՛ ջան:

— Խի՛, դու խու կնի՛կ չես, որ գործի ես գնըմ, — զարմացած հարցնում է Տիգրանը:

7

Չորսամյա Հարութը դիմում է մորը՝ Սուսանին.

— Ա՛յ մամ, ինձ կըտանեն քյաչալախուզարան (իմա՛ վարսավիրանոց-ԱՍ):

8

Արփինեն նոր էր ծնվել: Երեք տարեկան Սաթենիկն ուրախ թովոտում էր ու անընդհատ կրկնում.

— Ու՛խ, էսա Արփինեն հիվանդանոցից կըգա՛, իրար հետ խանդ կանենք...

Երբ հիվանդանոցից տուն են բերում, Սաթենիկը, խաղը թողած, իրեն զցում է տուն՝ «խաղընկերոջը» տեսնելու: Բայց երբ նա օրորոցում տեսնում է բարուրը, ձեռքերը դեպի նորածինը մեկնած, հիասթափված ասում է.

— Իիիի՛, էս ա՛ Արփինեն...

9

Վեց ամսից ավելի 2.6 տարեկան Սաթենիկի հայր Արսենը անընդհատ բանվորական շորերով էր. «Վուզա» ավտոմեքենան քանդել, նորից հավաքել էր, ու ընտանիքով պատրաստվում էին ինչ-որ հավաքույթի գնալ:

Երբ Սաթենիկը տեսնում է հորը՝ կոկիկ հագնված, հրճվանքով թովոում է ու բացականչում.

— Ո՛վիս, իմ պապան էլ ա թագա² շոր հագել, իմ պապան էլ ա թագա շոր հագել...

10

— Ման, ման, հըլա դ՛որս արի, — կանչում է 3-ամյա Արփինեն, ապա ցույց տալով կիսալուսինը՝ շարունակում է, — տէն, ման, լուսինը կոտորվել ա...

11

— Ա՛յ մամ, — նեղսրտում է 10-ամյա Արփինեն, — պաղպաղակն արժի 13 կոպեկ, մենք պետկ ա տանք 15 կոպեկ, խանութպանն ինչի՞ ա մեզանից 20 կոպեկ վերցընում...

12

— Ման, մեր դպրոցի անցած մաթեմատիկան խանութներում ինչի՞ չի անցնում, — հարցնում է 11-ամյա Արփինեն:

— Ինչո՞ւ, աղջիկ ջան:

— Մածունն արժի 16 կոպեկ, իրեք շիշ մածունի համար պետկ ա տայի 48 կոպեկ, տվել են 50 կոպեկ, խանութպանն ինչի՞ ա ասը՝ 10 կոպեկը պակաս ա, գնա բեր:

13

— Արփինե՛, գնա կուխնյայից աղը բեր, — 4.7 տարեկան երեխային է դիմում հորեղբոր կինը:

— Լյուդա՛, կուխնյա չեն ասում, *խոզանոց* են ասում (իմա՝ խոհանոց-ԱՍ), — հորեղբոր կնոջը «ոտդում է» Արփինեն: (ԱՍՇ)

2 Թագա – նոր:

14

Միրանուշ տատը մեծ թոռ Արփինեին սիրելիս *իմ շարմաղ, իմ խրոստրայ* էր ասում, իսկ փոքրին՝ Աստղիկին՝ *իմ սևուկ, իմ թոխասն, իմ սևուկ-թոխասն*։ մեկի մաշկը սպիտակ էր, մյուսինը՝ մի քիչ թուխ։

Ամռան մի օր էլ 3-ամյա Աստղիկը թախասնձագին դիմում է մորը, թե՛

— Ման ջան, ինչ կըլնի, տաշտի մեջ ջո՛ր լցրու, դիր արևի տակ՝ տաքանա, մի քիչ էլ ժավել լցրու, որ լողանամ, սիպտակեմ, հա՛...

15

Ձմռան օրերին 4-ամյա Շավարշիկը հենց որ Կարո պապի տուն էր գնում, Նարգիզը մոտենում էր հորքուրի տղային, ձեռքերի ավերով ականջների սառնությունն էր ստուգում ու ասում.

— Ապեր ջան, լոշտակներդ էս ո՛նց են սառել։

Մի օր էլ երբ հայրը աշխատանքից տուն է գալիս, Շավարշիկը, հոր գրկին նստելով, քեռու աղջկա պես ականջների սառնությունն է ստուգում ու զարմացած ասում.

— Պանպ, լոշտակներդ էս ո՛նց են սառել...

16

Ամեն անգամ երբ 4-ամյա Սարգիսը փողոց էր դուրս գալիս, ձեռքերը հետևին էր դնում ու ծանր-ծանր քայլում։ Մի օր էլ մայրն ասավ.

— Տղա՛ ջան, էնպես ես քայլում, ոնց որ պապըս *ըլես*։

— Խի՛, ման, պապըս էլ է՛ր ինձ նման քայլում։

17

Մի օր Միրանուշ տատը գրպանից մի քաղցր հանեց ու տվեց Սարգիսին։

— Տատի՛, — ասավ 4 տարեկան Սարգիսը, — բա դու չես ուտըմ։

— Չէ։

— Ինչի՛, տատի՛, զըզվըմ ես։

18

3-ամյա Նանեն, մի ամպամած օր նայելով պատուհանից դուրս, սխտոր հարցրեց.

— Ման, արևը մեզանից նեղացել ա՞:

— Չէ, ինչի՞ պիտի նեղացած լինի:

— Բա ինչի՞ ա ամպերի ետևում թաքնվել:

19

Մի քանի օր շարունակ հայրն աշխատանքից տուն էր գալիս այն ժամանակ, երբ Նանեն արդեն քնած էր լինում: Շաբաթ օրը Նանեն երբ արթնացավ, հայրը դեռ քնած էր: Պաչիկներով արթնացրեց հորն ու հարցրեց.

— Պապա՛, դու գիշերը տանը չես քնում:

— Տանն եմ քնում, բալեն:

— Պապա՛, բայց դու գիշերը տանը չես քնում:

— Բալեն, բա որ դու արթնացար, չտեսա՞ր՝ ես տանն եմ, նոր արթնացա, չէ՞:

— Պապա՛, դու գիշերը տանը չես քնում, պայգապես արթնանում ես տանը:

20

1.5 տարեկան Նանեն հոր հետ խանութից վերադարձավ տուն: Երբ մոր հետ երկուսով էին, ասաց.

— Մամա՛, պապան ույիշ մամայի ասեչ՝ այի գնանք մեյ տուն:

— Ի՞նչ:

— Պապան ույիշ մամայի ասեչ՝ այի գնանք մեյ տուն:

Ամուսինները երկար ժամանակ փորձում էին հասկանալ փոքրիկի ասածի պատճառը: 2 օր հետո վերջապես պարզվում է գաղտնիքը. երբ խանութում վաճառողուհին ասել էր, թե՛ «Ի՞նչ խելոք երեխա է», հայրը պատասխանել էր. «Էստեղ է խելոք, հլը էկեք մեր տուն, կտեսնեք՝ խելոք է՞, թե՛ ոչ»:

21

Ինչքան Նանեին համոզում էին, որ փոքրիկ եղբայր ունենա, չէր համաձայնվում, ասում էր .«Քուրիկ եմ ուզում, անունն էլ Անի եմ դնելու»:

— Մամմ, մի բան ասեմ, որ գնացիք հիվանդանոցից ինձ առնելու, ինչի՞ տղա չառաք:

— Ինչի՞, լավ չի որ դու աղջիկ ես:

— Չէ, լավ ա, ուղղակի Լևոնը տղա ա, Մարկը տղա ա, Նարեկը տղա ա, Ալեքսը տղա ա, մենակ ես եմ աղջիկ:

— Նանե՛ ջան, դու որ տղա լինեիր, բա իմ օգնականն ղվ էր լինելու:

— Ինչի՞, տղաները օգնական չեն լինում:

— Լինում են, ուղղակի տղաները հայրիկների օգնականն են, աղջիկները՝ մայրիկների:

— Բա հիմա պապան օգնական չունի:

— Փաստորեն՝ չէ:

Մի քանի օր անց հարազատներից հարցրին.

— Նանե՛ ջան, ապերիկ ես ուզում, թե քուրիկ:

— 2 ապերիկ, 2 քուրիկ:

— Ինչո՞ւ:

— Որ երկուսը մամային օգնեն, երկուսը՝ պապային:

22

— Պապիկ, էս դռոց ա, չէ՞, մենք էլ ունենք էդ դռոցից, — ասում է 5 տարեկան Նանեն՝ ցույց տալով շաղափիչը³:

23

Տառը անանուխի ծամոն է տալիս թոռանը: Ծամոնը փորձելուց հետո 5-ամյա Նանեն հրաժարվում է ծամել՝ ասելով.

— Անահի՛տ տատիկ, ես սրանից չեմ ուզում, ես չմոռ (իմա՛ ոչ կծու) ծամոն եմ սիրում...

3 Շաղափիչ – ռուսերեն՝ дреель:

24

Մի 2-3 ամիս անց հաղթահարելով լեզվական արտաբերման անհարմարությունները՝ 4-ամյա Նանեն ինքնագոհ, մի մեծ գործ արածի պես ասում է.

— Ֆլորա տատիկ, գիտե՞ս, որ ես փոքր էի, քեզ ասում էի Պլորա տատիկ:

25

— Արամ պապի, արի մտնենք խանութ՝ բուլկի առ, հա՛, — մանկապարտեզից բերելիս ասում է 4-ամյա Նանեն:

— Տնային շորերով եմ, Նանե՛ ջան, փող չկա մոտս, — մեղավորի պես արդարանում է պապը:

Հաջորդ օրն առավոտյան երբ մայրը երեխային հագցնում էր, որ տանի մանկապարտեզ, Նանեն շրջվում է դեպի պապը, թե՛

— Պապի՛ ջան, էսօր որ գաս ինձ մանկապարտեզից բերելու, տնային շորերով չգաս, հա՛...

26

Հեռուստատեսությամբ աֆրիկյան սևամորթներին էին ցույց տալիս:

— Ման, էդ մարդիկ ինչի՞ են սև, — հարցնում է 4.5 տարեկան Նանեն::

— Որովհետև սևամորթներ են:

— Ման, իսկ եթե իրենք լվացվում են, էլի սև են մնում...

Դրանից հետո ինչքան հեռուստատեսությամբ սևամորթի էին ցույց տալիս, Արամ պապը ձայն էր տալիս.

— Նանե՛ ջան, արի՛, անլվա նեգր են ցույց տալիս:

27

— Անահիտ տատիկ, փորըս ջուր ա ուզըմ (ուզում է ասել՝ ծարավ եմ), — ասում է 5.4 տարեկան Նանեն:

— Չէ՛, ջուր չի ուզում, — պատասխանում է տատը:

— Եթե դու նս լինեիր, կտեսնեիր (իմա՛ եթե իմ տեղը լինեիր, կզգայիր), — իրավիճակը յուրովի է ներկայացնում Նանեն:

28

—Նանն, ուրքերդ մի քստքստացնի, ամոթ ա, դու հո տղամ չես,— դիտողություն է անում հայրը 5.6 տարեկան Նաննին:

—Պանպ, տղաները կարող են քստքստացնել:

—Դե... տղաները դող են:

—Պապան, դու էլ են դող:

—Չէ, Նանն ջան, ես մեծ եմ, խոսքը փոքր տղաների մասին ա:

29

Նաննն երրորդ ամիսն էր, որ դպրոց էր գնում, բայց երկրորդ անգամն էր տեսորը թողնում դասարանում:

—Նանն, աղջիկն էդքան թափփված չի լինի, զգույշ եղիր, էլի,— սրտնեղում է մայրը:

—Ման, նորից կզանգեն ընկեր Վարդանյանին,— խնդրում է երեխան:

—Ամոթ է, չեմ կարող, արդեն ամաչում եմ:

Նաննն քիթը կախում է ու հեռանում: Քիչ անց նորից է գալիս մոր մոտ, թե՛

—Ման, ամոթդ դեռ չի անցել...

30

—Երեխաններ, ինչպես տեսնում եմ, այսօր ձեզ միայն հայրիկներն են բերել,— ասում է դասվարը:

—Ընկեր Վարդանյան, ինձ հոպարս ա բերել. հայրիկս մտավ գուգարան, հոպարս տեսավ ուշանում եմ, ինքը բերեց,— անկեղծ իրավիճակն է ներկայացնում 6.5 տարեկան Նաննն:

31

Մի անգամ 3-ամյա Դավիթը տարիքով իրենից մեծ հորեղբոր աղջկա հետ խոսելիս ասում է.

—Խոմ խելամո չես:

—Խելառը տատմերդ⁴ ա,— հակադարձում է Արփիսեն:

4 Տասմեր – ծննդկանին առաջին օգնություն ցույց տվող փորձառու կին:

Քիչ անց Դավիթը մորը հաղորդում է.

— Ման, էս Արփիինն համ տատիկին վատ բան ասավ, համ՝
քեզ:

32

3.5 տարեկան Գուրգենի մայրը հղի էր: Մի օր տղային հարց-
նում է.

— Գուրգեն ջան, քեզ համար ի՞նչ ես ուզում բերենք, ապերիկ
թե քուրիկ:

— Սկզբում շունիկ էի ուզում, հետո՝ ապերիկ, հիմի՝ քուրիկ: Չէ,
չէ՛, ապերիկ-քուրիկ չեմ ուզում, շունիկ եմ ուզում և վերջ, — իր վերջ-
նական ցանկությունն է արտահայտում Գուրգենը:

33

Մի օր 3 տարեկան Դավիթը լաց լինելով դիմում է հորը.

— Ինչի՞ ես դու մամայի հետ ամուսնացել, է՛ս էի ուզում ամու-
սանամ:

— Որովհետև ես մամային սիրում եմ, — ասում է հայրը:

— Ե՛ս եմ սիրում մամային, է՛ս եմ ուզում ամուսնանամ, դու գնա
քեզ համար սիրուն գտի:

— Ինչի՞, Դավիթ ջան, մաման սիրուն չի՞:

— Սիրուն ա, բայց դու գնա ուրիշ սիրուն գտի:

34

4-ամյա Աշոտիկը ընկնում ու սկսում է լաց լինել: Տնեցիները
հանգստացնում են.

— Ոչինչ, ոչինչ, լաց մի լինի:

— Ոչինչ չի, ցավում ա, — ասում է Աշոտիկն ու սկսում ավելի
բարձր լաց լինել:

35

— Երեխաներ, ո՞վ կարող է բռնակալ բառով նախադասություն
ասել, — հարցնում է ուսուցիչը:

Ութամյա Աշոտիկը ոգևորված ձեռք է բարձրացնում և ասում.

— Իմ հայրիկը բռնակալ է:

36

5 տարեկան Աշոտիկին հարցնում են.

— Աշոտիկ, կարան ասես, էս կատուն ինչ գույնի ա:

— Մկան գույնի⁵, — լուրջ-լուրջ պատասխանում է երեխան:

37

Այբուբենի տատերը սովորելուց հետո մի օր էլ 8-ամյա Աշոտը, դպրոցից տուն գալով, հայտարարեց.

— Էլ դպրոց չեմ գնալու:

— Ինչի՞, Աշոտ ջան, — հարցրին տնեցիները:

— Գրելը գիտեմ, կարդալը գիտեմ, էլ ինչի՞ դպրոց գնամ:

38

Երկու եղբայրների թռռնիկները խոսքակոծիվ են տալիս: Վերջապես Էմման հարձակման է անցնում և ասում է.

— Դե գնա՛, մենք պանպիկ ունենք, դուք չու՛նեք:

Փաստը փաստ էր, բայց հակառակորդ կողմը տեղի չի տալիս, և 3 տարեկան Քրիստինեն «հակահարված» է տալիս.

— Իսկ մենք պապիկի գերեզմանն ունենք, դուք չու՛նեք...

39

1988-ի երկրաշարժին հաջորդած տարին ընտանիքով Լեհաստան գնալիս երբ անցնում են ԽՍՀՄ սահմանը, հայրը ասում է.

— Ըհը, մտանք Լեհաստան:

— Պանպ, հիմի էն մարդիկ լեհ են, — ցույց տալով դաշտում աշխատող մարդկանց՝ հարցնում է 7-ամյա Քրիստինեն:

— Հա՛, լեհ են:

— Պանպ, դաշտում արածող էն կո՞վս էլ ս՛ լեհ...

40

7-ամյա Քրիստինեի հայրիկը ընկերոջ խնդրանքով մի քանի անգամ կեր էր տարել խոզանոց, ու այդ մասին խոսվել էր տանը: Դպրոցում ուսուցիչը հարցնում է երեխային.

5 Մոխրագույնին ժողովուրդը *մկան* գույն է ասում:

— Պատմի՛ր հայրիկիդ մասին, որտե՞ղ է նա աշխատում:
Քրիստիսենն սկսում է.

— Հայրիկս աշխատում է խոզանոցում, նա խոզերի համար կեր է տանում...

41

— Էքուոց-էլօր 4 տրդերքքս էլ կըմենձանան, կամուսնանան, կզընան բոլ-բոլ փող կըշխատեն, կըրերեն տուն, ես էլ խանըմ-խաթուն կեսուր կըլեմ, փողերը կըլըցնեն գոքքս, բոլ-բոլ կծախսեմ, — իր երագանքն է մի օր արտահայտում բազմազավակ մայրս՝ Մարուսը:

— Ման, հըմի որ պապան ըշխատի ու փողերը տանի տա Անուշ տատին, լավ կըլի՞, — իր անկեղծ խոսքով մոր երագանքների վրա սառը ջուր է լցրել 5-ամյա Արմենը:

42

— Իմ մերը մի ըրելսա էլ ա ունեցել, — իր խաղընկերներին պատմել է 4-ամյա Մարուսը, — անըմն էլ *Առչինեկ*⁶ ա էլել:

43

1-ին դասարանում հայերենի այբուբենը նոր յուրացնող Անուշը, տատերը կցելով ու վանկանկելով, կարդում էր: Երբ հասնում է հերթական բառակապակցությանը, կարդում է *Մասիս սար* ու մի պահ կանգ առնում:

— Հը՛, դե ասա՛, ի՛նչ էղավ, — հարցնում է մեծ եղբայրը:

— Քաչալ սար⁷, — հետևում է Անուշի պատասխանը:

44

— Մարո՛ս հոքիր, — ծառի վրայից ձայն է տալիս 5-ամյա Վանիչկեն:

— Էն ի՛նչ ա, չարքտ տանեմ:

— Հըլա ասա՛՛ էտ ու՛ր ես բըցրացել ծառը:

6 Առչինեկ – առաջնեկ՝ առաջին երեխան:

7 Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) Դիմաց թաղամասի սարը ժողովուրդը *Քաչալ սար* է ասում:

— Էտ ո՞ր ես բըրցացել ծառը, — հարցնում է հորաքույրը:

— Շատ էլ լավ եմ արել, — ինքնագոհ պատասխանում է երեխան:

45

1930-ականների սկզբների սովի տարիներին 4-ամյա Աթուլկանց Սաբոկը (Սարիբեկը) մորն ասում ա.

— Նանի՛, դու խի՛ չի Սումբաթ բիճուն ուզեիր, որ մենք էլ շատ հաց ունենայինք...

46

Ծանոթներից մեկի ծնունդին գնալիս Արմանի հայրը ավտոմեքենան կանգնեցնում է, մայրը իջնում, մտնում է խանութ:

— Պանայ, մաման ու՞ր գնաց, — հարցնում է 6-ամյա Արմանը:

— Գնաց ծնունդի համար նվեր առնի:

Վերադառնալուց հետո երբ ճամփա են ընկնում, ավտոմեքենան կտրուկ արգելակում է. վթարից հազիվ պրծնելով՝ հայրը զարույթից շարտում է.

— Պո՞ռնիկի ծնունդ...

Իսկ Արմանը, հրճվանքից ծափ տալով, բացականչում է.

— Ո՛ւխ, պոռնիկի ծնունդին ենք գը-նում, պոռնիկի ծնունդին ենք գը-նում...

47

Երևանի դպրոցներից մեկի առաջին դասարանում ուսուցչուհին այբուբենի տառերն է ամփոփում՝ ասեն մի տառով երեխաներին նախադասություններ կազմել տալով: Երբ հերթը հասնում է ճ տառին, թույլ սովորող աշակերտներից մեկը ձեռք է բարձրացնում՝ ճ տառով նախադասություն ասելու:

— Ասա՛, տղա՛ ջան, — ուրախացած երեխայի ակտիվությունից, դիմում է ուսուցչուհին:

— *Ճիրած ճուճուլըս ճըփըրըրնեմ ճըկարիտ,* — հպարտ հպարտ ասում 7-ամյա երեխան:

Ամբողջ դասարանը քար լոռությամբ նայում է ուսուցչուհուն, որը կարմրատակած՝ չգիտի՝ ինչ ասի: Դրությունը փրկում է գանգը, և ուսուցչուհին իրեն զգում է ուսուցչանոց ու հիստերիկ ծիծաղով պատմում գլխին եկածը՝ թոշակի գնալու կապակցությամբ վերջին դասին ստացած անմոռանալի նվերը...

48

Չորս տարեկան Աննան եկեղեցում հարսանիք է տեսնում, երբ բացատրում են՝ ինչ է հարսանիքը, սկսում է լաց լինել:

— Ինչի՞ ես լաց լինում, — հարցնում է մայրը:

— Ես չեմ ամուսնանա, ես մեր տանից չեմ գնա, տիկնիկը կդնեք պապայիս մեքենայի վրա, ես կամուսնանամ պապայիս հետ, կմնամ մեր տանը:

49

Մեքենայով ծնողների հետ Վանաձորի հին գերեզմանոցի մոտով անցնելիս 3-ամյա Էդուարդը, ճանապարհի կողքի գերեզմանաքարերի նկարների տակի ծննդյան և մահվան թվերը տեսնելով, հարցնում է.

— Ման, էդ նկարների տակի թվերը իրանց ստորվո՞ւ⁸ համարներն ա, չէ՞...

50

Լիֆտը չէր աշխատում, բարձրանալ — իջնելը, մանավանդ բարձրահարկերի բնակիչների համար, դժվար էր, շատ անգամ էլ պարանն էր տալիք-առնելիքի կապի միջոցը, մեկ էլ՝ բակից գոռալով հաղորդակցվելը:

— Մանման, մանման, — մի օր լսեցինք 4-ամյա երեխայի կանչը:

Արձագանք չկար: Երեխան նորից ու նորից էր գոռում, բայց արձագանքող չկար: Տղան ստիպված խոսքը կոնկրետացնում է, որ լսելի դարձնի մորը.

— Վեցերորդ հարկի մանման, վեցերորդ հարկի մանման...

8 Ստորվի-բջջային հեռախոս:

51

Մայրը, գիրքը տալով 4 տարեկան Նանարին, ասում է.

— Էս տար դիր տեղը, արի:

— Ման, տարա *դիր տեղեցի*, էկա,— վերադառնալուց հետո ասում է Նանարը:

52

Երկու տղաները նման էին գեղեցկատես մորը, իսկ աղջիկը՝ հորը: Ընտանիքը հյուրընկալել էր ամուսնու ընկերներին: Նրանցից մեկն ասում է ընկերոջը.

— Աղջիկդ էս ինչքան ա քեզ նման, ոնց որ քթիցդ թռած լինի:

Հյուրերի գնալուց հետո փոքրիկը լացակումած դիմում է մորը.

— Ման, ինչի՞ն ա ինձ պապան բերել, ինչի՞ն չես ինձ էլ դու բերել, որ ես էլ քեզ նման սիրուն լինեի...

53

Չորսամյա Քրիստոֆերը մորն ասում է.

— Ման, վախենում եմ, գամ ծոցդ պատկեմ:

— Մեծ տղա ես, ախպերդ էլ կողքիդ ա, ինչի՞ց ես վախենում:

— Բա պապան մեծ չի՞, վախում ս՛մ, որ քու ծոցում ա պատկում:

54

— Ա՛յ բալես, ինչի՞ն ես քեզ անկարգ պահել, — հարցնում է տատը 5-ամյա Քրիստոֆերին:

— Տատի՛կ, բայց դու տեսել է՛ս:

— Չէ:

— Բա քեզ ո՞վ ա ասել, — հետաքրքրվում է երեխան:

— Մայրիկդ:

— Տատի՛կ ջան, դե որ դու կտենաս, նոր կասես, — ասում է Քրիստաֆորը:

55

Բուժքույր Նատան երկու աղջիկ ուներ, ամուսինն էլ մի երկու տարի էր, բացակայում էր տանից: Մի օր տեքոր էրեխեն խնդրանքով դիմում է հորեղբոր կնոջը, թե՛

— Նատա՛ տոտա, մի հատ էլ ապերիկ բեր, է՛լի, հոպարս կգա, շատ կուրախանա...:

56

Մանեի մայրը խոհանոցում բրինձ էր մաքրում: 3-ամյա Մանեն գնում է, գալիս, տեսնում է՝ մայրը նույն գործին է, ասում է.

— Ման, կտանս մի քիչ էլ ես հաշվեմ...

57

Մայրը Ռուսաստանում գտնվող աղջկա հետ *սկայսյով* խոսում է, ապա ուզում է տատի հետ էլ խոսել: Էլենը վրդովված մորն ասում է՝

— Մարուս տատին իմ տատին ա, ինչի՞ ես դու տատի ասում:

— Էլեն ջան, Անուշ տատին իմ մաման ա, դու տատի ես ասում, Մարուս տատին էլ իմ տատին ա, բա ես ի՞նչ ասեմ:

— Չէ, Անուշ տատին էլ ա իմ տատին, Մարուս տատին էլ ա իմ տատին, — համառում է 3-ամյա Էլենը:

58

Տատը Ռուսաստանում գտնվող թոռան հետ *սկայսյով* խոսում է.

— Էլեն ջան, մի հատ տատիկի համար ոտանավոր կարտասանեմ:

— Անուշ տատի, չեմ կարա:

— Ինչի՞, Էլեն ջան:

— Որովհետև ես հիմա Ռուսաստանում եմ, հայերեն ոտանավորներս թողել եմ Հայաստանում, — ասում է 3-ամյա Էլենը:

59

Տատին հյուր եկած 3 տարեկան Անուշիկը օրվա ընթացքում մենակ կաթ էր ուզում:

— Ախչիկ ջան, ձեր տանը դուք մենակ կաթ ե՞ք խմում, — ջղայնադաժ հարցնում է տատը:

— Չէ, տանտ ջան, հաց էլ ենք ուտում, — ասում է Անուշիկը:

60

3.6 տարեկան Դավիթը, մորը շորերը փոխելիս մերկ տեսնելով, զարմացած հարցնում է.

— Վայ, ման ջան, էդ դու էլ ե՛ս ախչիկ:

— Հայ, գայրացած ու չոր վրա է բերում մայրը:

— Ո՛վիս, իմ մաման էլ ա ախչիկ, իմ մաման էլ ա ախչիկ... — ասում ու թըռվո՞ւմ է Դավիթը:

61

Երեքամյա Դավիթի՝ ծնողների անկողին մտնելու սովորությունը վերացնելու համար մայրը անընդհատ բացատրում է.

— Դավի՛թ ջան, ամեն մարդ իրա տեղն ունի և իրա տեղում էլ պիտի քնի. գնա քո տեղում քնի:

Հերթական անգամ երբ մերժվում է նրա ցանկությունը, Դավիթը ջղային դեմքով հարցնում է մորը.

— Հըմի պապան տեղ չունի՞, թե՛ մաման, որ իրար հետ եք քնըմ...

62

7-ամյա Համլետը սեպտեմբերի 1-ին առաջին անգամ դպրոց է գնում ու դասերից հետո երբ տուն է գալիս, տնեցիները ոգևորված հարցնում են.

— Հը՛, ո՞նց էր, դուրդ էկամ դպրոցը:

— Էո՞նակ էգուց մեր դասատուն դպրոց գալիս ընգնի ավտոբուսի տակը, մեռնի, — հոգոց հանելով՝ անկեղծանում է երեխան:

63

Սարի թաղում մեծահասակներից մեկի թաղումն էր, երբ հանգուցյալին դուրս են բերում, փողային նվագախումբը սկսում է նվագել: 3-ամյա Զավենը զարմացած պապին հարցնում է.

— Պապի՛, էս ընչի՞ չեն պարում:

64

— Սատկեմ քեզ, Զավենչո՛ ջան, — մեծ թոռանը սիրելիս ասում է տատը:

— Ինձ էլ սատկի, հա՛, տատի՛, — խնդրում է 3.5 տարեկան Սոնան:

65

1.7 -ամյա Միրանիկը առաջին անգամ գոմ է մտնում, տեսնում խոտ ուտող կովին ու զարմացած հարցնում է.

— Անահիտ տատի, էս օհոն (իմա՛ կովը) ծամոն ս՛ ծամում:

66

Երբեմն 3.5 տարեկան Դավիթը քրոջ *արարոկը*⁹ երբ գլխին էր դնում, հայրը ասում էր.

— Դավիթ, խոմ դու դգիկ¹⁰ չես:

Մի օր էլ բակի սառած ջուրը հավվել, ոտքի տակ էր լցվել: Հայրը շորով հավաքում, մզում է, Դավիթը մոտենում է հորը, թե՛

— Էդ ի՞նչ ես անում, պանայ:

— Ոտի տակ չորացրել եմ, հիմա էլ շորն եմ լվանում:

— Պանայ, դու խոմ դգիկ չես, որ շոր ես լվանում...

67

Սուրիկը միշտ եղբոր տղայի՝ 3.5-ամյա Դավիթի հոգու հետ խաղալու համար ասում էր.

— Դավիթ ջան, բեր պուպուլըդ կտրենք ուտենք:

Մի օր էլ Դավիթը զարթնում է քնից ու լացակոմած պատմում մորը.

— Մամա՛, էրազիս Սուրիկ հոպարը պուպուլս կտրել էր, լացում էի, ասում. «Բա ճնց եմ չիշիկ անելու»: Հոպարն ասավ. «Ոչինչ, շատ մի մտածի, թագեն կառնենք...»:

68

Հեռուստատեսությանը կենդանիների մասին հաղորդում էր. կենդանիներին կերակրում էին: Հայրն ասում է.

— Դավիթ ջան, դու էլ գնա կեր, — տղայի հոգու հետ խաղալու համար ասում է հայրը:

— Պապա՛, ճնց ուտեմ, դեմը շուշս ա դրած, — ասում է 3.5-ամյա Դավիթը:

9 Աբադոկ-մագակալ:

10 Դգիկ-կնաբարո:

69

Մեկի 1.6 տարեկան էրեխեն լաց ա ըլըմ ու անընդհատ ասըմ ա՝ «բըթա, բըթա, բթա»: Տնեցիք բան չեն հասկանըմ՝ ինչ ա ասըմ: Ստիպված գնըմ են հարևանի նույն տարիքի էրեխին են կանչըմ, որ իմանան՝ ինչ ա էղել: Որ գալիս ա լսըմ դրա «բըթա-բըթա»-ն, թիկ լեզվով ասըմ ա.

—Թեզ ով էլ ասըմ ըտթան ուտես, ոլ հըմի էլ «բթա-բթա» ես դոլըմ...

70

Մայրը դասից Մանեին վերցնում, ավտոբուսով տուն է տանում: Ամբողջ ճանապարհին Մանեն հերթ չտալով՝ խոսում, պատմում է իր դասերից, այդ օրվա դպրոցի եղելություններից ու մեկ էլ հանկարծ լուսամտուից տեսնելով տներից մեկի առաջ շարած ծաղկեպսակները, խոսքը կտրելով՝ դիմում է մորը.

—Ման, ման, հլա նայի, տես՝ ինչքան շատ *լուսամտուի* են շարեղ...

71

Դասարանցիներից մեկը պարծենում է, թե՛ մենք տանը դոլար ունենք: 7 տարեկան Մանեն զարմացած հարցնում է համադասարանցուն.

—Իսկականից դուք դոլար ունեք տանը:

—Խի դուք չունեք:

—Յոթհոգիանոց ընտանիքը բա դոլար կունենամ, — հակադարձում է Մանեն՝ ներկայացնելով իրենց բազմանդամ ընտանիքի վիճակը:

72

Մի օր 3 տարեկան Տիգրանիկը թիկ լեզվով մորը՝ Ծովիկին, խնդրում է.

—Ման, մի քից հաթիս վրա տրեմ թսի, հմ (իմա՝ կրեմ քսի):

73

— Ընկեր Մարգո, մի բան ասեմ:

— Ասա՛, Վարդանիկ:

— Ընկեր Մարգո, էս Համիկը թսեց:

— Չի կարելի, Վարդանիկ, ասա՛ հոտ հանեց:

Հաջորդ օրը Վարդանիկը էլի ա ձեռ բարձրացնում, թե՛

— Ընկեր Մարգո, էս Համիկը հոտ հանեց, երևի էլի թսեց...

74

4 տարեկան Դավիթն ու առաջին դասարան հաճախող Գրիգորը անընդհատ վիճում, տունը աղմուկ-աղաղակով էին լցնում: Մի օր էլ մայրը սրտնեղած ասում է.

— Մի օր մեռնեմ պրծնեմ ձեզանից...

— Ման, որ դու մեռնես, գերեզման կունենաս, չէ՛, — հետաքրքրվում է 4-ամյա Դավիթը:

— Հա՛, — զայրացած վրա է բերում մայրը:

— Ման, որ մենք ծաղիկներ բերենք դնենք քու գերեզմանին, դու կուրախանաս, չէ՛, — հարցնում է Դավիթը:

75

3 տարեկան Արմանին մեծ եղբայրը ուզում է ռուսերեն սովորեցնել:

— Գիտե՛ս, Արման, էս *մալակո*¹¹ ա:

Արմանը խմում է բաժակի պարունակությունն ու զարմացած եղբորն ասում է.

— Վայ՛, Վազգեն, էս *մալակոն* ոնց որ կաթիկ լինի...

76

9-ամյա Էլենը, մի օր հղի կին տեսնելով, մորն ասում է.

— Ես արդեն գիտեմ երեխաները որտեղից են ծնվում:

— Որտեղի՞ց, — հարցնում է մայրը:

— Մամաների փորիկից, բայց ո՛նց են հայտնվում փորիկում, էդ չգիտեմ:

11 Մալակո (ռուս.) – կաթ:

77

— Ես գիտեմ էրեխեքը որտեղից են լինում,— մի օր ասավ
6-ամյա Դավիթը:

— Որտեղից, — հարցնում են ծնողները:

— Մամաների փորից: Էդ էլ գիտեմ, մամաները ձմերուկ են կուլ
տալիս, որ էրեխեքը մամայի փորիկից լինեն:

78

4-ամյա Գուրգենին հորաքույրը հարցնում է.

— Մանկապարտեզ գնում ե՞ս:

Ասում ա՛ հա:

— Խմբում աղջիկներ շատ կա՞ն:

Ասում ա՛ հա:

— Աղջիկները սիրուն են:

Ասում ա՛ հա:

— Իսկ ամենասիրունն ո՞վ ա:

— Հորաքո՛ւյր, էդ ուզում ես իմանաս՝ ում եմ սիրում, դրա հա-
մար ե՞ս հարցնում:

79

Բարեկամուհու 3-ամյա երեխան, կտորի ծածկը ցույց տալով,
մորը հարցնում է.

— Ման, էս ինչո՞վ ա ծածկած:

— Շիֆերով, բալի՛կ ջան:

— Շիֆերը ի՞նչ ձևի ա:

— Զիզզազ ա, բալի՛կ:

Մի երկու օր հետո գիշերը ձյուն է գալիս, իսկ առավոտյան երե-
խան կտորին նայելով՝ ասում է.

— Ման, ման, նայի՛. զիզի մեջ ձուն կա, զազի մեջ չկա...

80

Կառվի ձագը ծառի վրա էր բարձրացել ու մի ճյուղի վրա հան-
գիստ նստել էր:

— Ման, ման, — մորը դուրս է կանչում 6-ամյա Դավիթը, — տեն,
խնձորի ծառի վրա վագրիկ է աճել:

81

Անձրևից հետո երբ ծիածանը կամար էր կապել, 6-ամյա Դավիթը, տեսնելով այն, ոգևորված ձայն տվեց մորը.

— Ման, տես՝ ինչ գունավոր աստիճան կա երկնքում:

82

5-ամյա Դավիթին հավի ճուտեր էին նվիրել: Նա ամեն օր կերակրում էր, ջուր տալիս: Մի օր էլ որոշում է ճուտիկներին լողացնել ու տանում է աղբյուրի ջրի տակ է լողացնում: Մայրը մոտենում է և զայրացած ասում, որ չի կարելի ճուտիկներին լողացնել, կմրսեն:

— Ման, չէ՞ որ ես ամեն օր լողանում եմ, նրանք էլ են ուզում լողանան, — լաց լինելով՝ արդարանում է Դավիթը:

83

— Ո՞ւմ տղեն ես, — Դավիթ ջան, — հարցնում է պապը թոռանը:

— Իմ քաղցրիկի, — հետևում է 3 տարեկան թոռան պատասխանը:

84

5-ամյա Լևոնը խաղալիս անընդհատ սայթաքում, ընկնում էր:

— Լևո՛ն ջան, ուշադիր եղիր, չվսասվես, — զգուշացնում է տատը:

— Ա՛յ տատի, էլ ի՞նչ տղամարդ, որ ընկնելով ու բարձրանալով չմեծանա, — մեծավարի պատասխանում է Լևոնը:

85

Ջույգ ծնված վեցամյա քույր ու եղբայր վիճում են.

— Ձմեռ պապ չկա, — ասում է քույրը:

— Ո՞նց չկա, կա, հիշում ես՝ անցած տարի մեր ուզածները բերել բարձի տակ էր դրել ու գնացել, — քրոջը փորձում է համոզել եղբայրը:

— Չկա, ուզո՞ւմ ես՝ արի փորձենք. էս տարի երկուսս էլ Ձմեռ պապից «վայֆայ» ուզենք, տեսնենք՝ կրերի՞...

86

- Պապի՛, ձեր ժամանակ համակարգիչ կամր, — հարցնում է թոռը:
- Չէ, բայի՛ն ջան չկար:
- Իյան, իսկ բջջային հեռախոս:
- Չէ, բջջային հեռախոս էլ չկար:
- Չկամր... պապի՛, իսկ դու դիմոգրավր տեսած կամ:

87

Նախագահական ընտրարշավի օրերն են լինում: Մի օր հեռու-տատետությամբ լուրեր հաղորդելիս երբ վարչապետ Սերժ Սարգսյանին են ցույց տալիս, 3 տարեկան փոքրիկը հարցնում է պապին.

- Պապի՛նկ, էս մարդն ո՞վ ա:
- Մեր վարչապետն ա, բայի՛նկս:
- Բա նա այլոմ չունի՞:
- Այլոմ, — գարմանում է պապը, — այլոմն ինչ կապ ունի, բայի՛նկ ջան, որ հարցնում ես:
- Այլոմ չունի՞, որ իրա նկարները շենքերի պատերին չկպցնի, այլոմում կպցնի, — բացատրում է երեխան:

88

5-ամյա Սուսաննան նկարչության էր գնում: Տանը նկարելու ժամանակ տատն ասում է.

- Սուսի՛ն ջան, մի անգամ էլ տատիդ նկարի, էլի՛:
- Տատի՛ն ջան, — պատասխանում է Սուսաննան, — դու շատ ես չադ, է, թղթի վրա չես տեղավորվի: Ես քեզ պատին կնկարեմ:

89

- Էս ի՛նչ թուղթ ա — մի օր մորը հարցնում է 5-ամյա Կամոն:
- Ապահովագրության թուղթն ա, բայես, որ ինձ մի բան պատահի, մեռնեմ, սրանով դուն փողերը կստանաս:
- Մի օր էլ մոր վիճակը շատ է վատանում, շտապ օգնության մեքենան գալիս ու պատգարակի վրա երբ դուրս են հանում, Կամոն վազելով մոտենում է մորը, թե՛¹
- Մամ, շտեղ էս տրալ¹² էն թուղթը...

¹² Որտեղ ես դրել:

90

Մի օր 4-ամյա Գոռը ոգևորված ներկայացրեց իր ծրագրերը.
— Որ մանկապարտեզն ավարտեմ, գնալու եմ դպրոց:

91

13-ամյա Անահիտ և Աստղիկ քույրերը հեռուստացույցով Սա-
յաթ-Նովայի համերգն են դիտում, իսկ տատը շյուղերով համ
գործում է, համ ցածրաձայն ձայնակցում: Քույրերից մեկը մյուսի
ականջին ինչ-որ բան է փսփսում, ու փոթկացնում են:

— Էդ ինչի՞ ծիծաղեցիք, այ էրեխեք, — հարցնում է տատը:

— Ասում ենք՝ Ժաննա տատն իրան *վիքրուցիայի* վրա ա դրել.
քթի տակ ա երգում:

92

4-5 տարեկան երեխան վայր է ընկնում ու գլխով հարվածում
պատին: Լաց լինելով նա մոտենում է հայելուն, ուշադիր նայում
խփած տեղին ու զարմացած դիմում մորը.

— Մամ, հըլա նայի, փոխանակ պատը փոս ընկներ, գլուխըս ա
փոս ընկել:

93

Արփին նոր էր ծանոթացել փեսացուի հետ: Փեսացուն տանում
է տուն, ու սկսում են սեղան զցել: Սեղանը զցելիս Արփին ազատ ու
անկաշկանդ սկսում է օգնել տնեցիներին: Փեսայի եղբոր 5-ամյա
աղջիկը՝ Նարեն, ասում է.

— Արփի՛, ոնց որ հարս լինես:

— Նարեն, ինչ ա հարսը:

— Հարսը... դե... տան աշխատող ա, — բացատրում է Նարեն:

94

— Պապա՛, դու փոքր ժամանակ խելոք էիր թե չար, — հարցնում
է 7.6 տարեկան Նեկտարիկը:

— Խելոք եմ եղել, աղջիկ ջան:

— Պապա՛, ես գիտեմ, թե ինչի պետք ա երեխաները խելոք լի-
նեն:

— Ինչի՛:

— Եթե մենք խելոք լինենք, հետո որ մեծանանք, երեխա ունենանք, իրանք էլ խելոք կլինեն: Իսկ եթե չար լինենք, մեզ կքաշեն, իրանք էլ չար կլինեն, ու մեզ դժվար կլինի իրանց հետ...

95

- Պապա, ինչի եմ ես հայ, — հարցնում է 8-ամյա Նեկտարը:
— Որովհետև ազգանունդ ու անունդ հայկական են:
— Իսկ կարամ, որ մեծանամ, ես ընտրեմ՝ ինչ կլինեմ:
— Հա, եթե ուզես...: Իսկ ի՞նչ կուզեիր լինելի:
— Չգիտեմ:
— Ֆրանսիացի՞, լեհ:
— Չէ:
— Ամերիկացի՞, իսպանացի:
— Չէ:
Հոգու հետ խաղալու համար հայրը հարցնում է.
— Թո՛ւրք:
— Պապա, խնդալու չի, — նեղանալով ասում է Նեկտարը:
— Լավ, դո՛ւ ասա՝ ի՞նչ ես ուզում:
— Էն երկիրը, որտեղ կենգործուներ շատ կան:
— Ավստրալացի՞:
— Հա՛, ավստրալացի կուզեի:

96

- Վեց տարեկան երեխան մոր հետ մտնում է տեխնիկայի խանութ, համակարգիչների բաժնի մոտով անցնելիս մորն ասում է.
— Ման, ինձ համար համակարգիչ կառնեն:
— Չեմ կարող, շատ է թանկ:
— Ման, դու ապառիկի մասին լսել եմ, — հարցնում է երեխան:

97

- Վեց տարեկան Լուսինեն մորը իր երազն է պատմում.
— Ման, ես եմ, դու ես, պապան ա, տատին ա, ինքնաթիռով գնում էինք, ստյուարդեսը¹³ գալիս ա... ու (կանգնում, չի հիշում, դիմում է մորը).

13 Ստյուարդես (ռուս.) – ուղեկցորդուհի:

- Ման, դո՛ւ պատմի, հա՛մ:
- Ես ղնց պատմեմ:
- Ման, դու էլ էիր հետներըս, չէ՛:

98

4 տարեկան Լուսինեն քիչ է մնում ընկնի:

— Աղջիկ ջան, ոտներիդ տակը նայի, էլի— դիտողություն է անում մայրը:

Փոքրիկը ոտքերը թեքում, կռանում, սկսում է ուշադիր կռչիկների տակը նայել:

99

4-ամյա Մանեն հանգստանում էր հորական տատի մոր մոտ: Մի օր էլ ծոռը հարցնում է նրան.

— Լենա՛ տատի, Մանյա տատիկը (հոր մայրը) պապիկ ունի (ուզում էր ասել՝ ամուսին), դու՞ն ինչի պապիկ չունես:

Տատը թե՛

— Մահացել ա, Մանե՛ ջան:

— Մահացել ա, դուն էլ գնա ուրիշ պապիկ բեր:

— Էս տարիքում պապիկն ի՛նչ եմ անում, Մանե՛ ջան, համ էլ մենձ ու հիվանդ պապիկը բերեմ, որ ի՛նչ:

— Է՛, դու էլ գնա ազգային ժողովիցը պապիկ բեր... — տատին ուղղություն է տալիս ծոռնիկը:

100

Ձյուն է գալիս: 2.7 տարեկան Ռազմիկը մայրիկի հետ զբոսնում է: Մայրը երզում է. «Ձյունը գալիս է դանդաղ, ձյունը իր երգն է երզում...»:

— Մամա՛, ձյունը բերան ունի՞, — հարցնում է Ռազմիկը:

— Չէ, բալի՛կ ջան:

— Մամա՛, բա ղնց ա իրա երգը երզում...

101

Տանն անընդհատ խոսում էին, թե՛ «Վերջ ցրտերին, վաղվանից գարուն է»: Մարտի մեկին առատ ձյուն է գալիս: Առավոտյան 5-ամյա երեխան, դուրս գալով և տեսնելով նստած առատ ձյունը, հիասթափված դիմում է ծնողներին.

— Էս ս՛ ձեր գարունը...

102

Միասին մտանք ննջարան, մութ էր.

— Մամմ, մութը անջատի (իմա՛ լույսը միացրու), — ասում է 1 տարեկան 10 ամսական Մանեն:

103

Ընկերուհուս՝ Գայանեի մորաքրոջ աղջիկների՝ Աննայի ու Անուշիկի հայրը զոհ էր գնացել 1988-ի երկրաշարժին, և նրանց՝ որպես ծնողագուրկ երեխաների, մեկ ամսով ուղարկում են Իտալիա և Հունգարիա: Հրաժեշտի ժամանակ Գայանեն լալիս է.

— Պապս, ես էլ գուզեմ էրթամ, ընձի ընչի՞ չեն տանի՛:

— Գայանե՛ ջան, նրանք հայր չունեն, կորցրել են իրենց հորը, դրա համար էլ գնում են — բացատրում է հայրը:

— Դու օր մնացել ես, ընձի ի՞նչ կենես, մեռած էղներիր, ես էլ կերթայի...

104

1988թ. երկրաշարժի ժամանակ եղբայրս 5 տարեկան էր, վախից սկսել էր կակազել: Տեղափոխվեցինք Երևան, և երեխան հաճախեց մանկապարտեզ: Մի օր ինքնաթիռ է անցնում, Հովիկը քնից սարսափած վեր է թռչում ու սկսում լացել, աղաղակել, թե՛ «ժժժաշկը... էգավ... էգավ...»:

Դայակը հանգստացնելու համար սկսում է հարցեր տալ.

— Բալի՛կ ջան, որտե՞ղ է երկրաշարժ եղել:

— Միպտակ, կապուտ, դեղին, — պատասխանում է Հովիկը:

105

4-ամյա Քրիստինեն երշիկ շատ էր սիրում: Աղվերանում ընտանիքով հանգստանալիս նա անընդհատ դիմում էր հորը.

— Պանյ, երշիկ կտամս, պանյ, երշիկ կտամս...

— Քրիստինեն ջան, էլ երշիկի անուն չտաս, — ասում է հայրը:

Որոշ ժամանակ անցնելուց հետո Քրիստինեն մոտենում է հորը, թե՛

— Պապան ջան, էս կլոր, շագանակագույնից, էս որ դանակով կտրում ես, դրանից կտամս՝ ուտեմ...

106

Մի օր Բորյան (Մանեի հորեղբայրը) ասաց.

— Ման, պապային ասե՛նք՝ մամային փոխի:

— Չէ, Բոյան, պապան փող չունի, — պատասխանում է 2.2 տարեկան Մանեն:

107

Մանկապարտեզից տուն էինք գալիս, 2.2 տարեկան Մանեն ցույց տվեց հեծվում թափառող շանն ու ասաց.

— Մաման, էս ինչ ա, շունիկ ան:

— Այո, բալիկ, շունիկ ա:

— Չէ, մաման, այծիկ ա:

— Չէ, բալեն, տեն՝ շունիկ ա:

— Շունիկը ոնց որ այծիկ լինի... եվեվի (իմա՝ երևի) հետո այծիկ դառնա:

108

Պատմում են, որ կամակոր երեխա եմ եղել ու գրեթե ամեն օր պատժվել եմ: Մի օր՝ չորս տարեկանում, կամակորությանս պատճառով մանկապարտեզում ծեծ եմ կերել մորս կողմից, հետո եկել է տատս ու նորից ծեծել ինձ: Ուժասպառ եղած քնել եմ մինչև ժամը 4-ը: Տատս եկել է ինձ տուն տանելու և լացակումած հարցրել է.

— Բալեն, շմտ լացար:

— Գրո՞ղ էրի, լացա, — ասել եմ ես, — ձենս կըղրի, տե՛րս ով էր:

109

— Մաման, ես Արարատն եմ սարքել շինարարական ավտո-
յով, — ասում է 5-ամյա Սարգիսը:

— Բա ինչի՞ ես Հայաստանից դուրս թողել:

— Պարաններով կքաշենք կրերենք, կամ էլ մի հատ էլ էստեղ
կսարքեմ, — պատասխանում է նա:

110

— Սարգիս, գիտե՞ս՝ էսօր պապայի ծնունդն է:

— Հա՛, պապան պունդուրանալու է: Ի՞նչ լավ ա. կամայրուտերը
կտա ինձ, ես իրան գործի (ինձ՝ պարտեզ) կտանեն, — ասում է 3.6
տարեկան Սարգիսը:

111

— Աչքերս սառում են, — ասում է մայրը:

— Մաման ջան, արի տաքացնեմ աչքերդ, — ասում է 3 տարեկան
Նարեն:

112

Քնից արթնանալով՝ 4 տարեկան Սարգիսը մտնում է սենյակ և
զարմացած հարցնում է.

— Մաման, բա ինչի՞ չես ասում, որ արևը արթնացել է:

113

— Մաման, գիտե՞ս՝ ես մողես եմ տեսել օձի պոչով, — ասում է
4-ամյա Սարգիսը:

114

— Հարուրը քո ի՞նչն է, — հարցնում են 4-ամյա Սարգիսին:

— Հալութ չի, Հայութ է, — «ուղղում է» Սարգիսը:

115

4-ամյա Սարգիսը մի օր մորն ասավ.

— Մամ, քուրիկն իմ ապերն ա, չէ՞:

116

Տան հեռախոսը զնգում է: 4-ամյա Սարգիսը արձագանքում է.

— Գալիս եմ, սպասե՛ք: Ասեցի՛՝ գալիս եմ...

117

Հինգ տարեկան Սարգիսը գնում է ընկերոջ տուն՝ խաղալու:
Մայրը հարցնում է.

— Ե՞րբ կգաս:

— Հենց Վահեն ժլատություն անի, կգամ, — ասում է Սարգիսը:

118

5-ամյա Գագիկը մի օր գյուտ արածի պես անսպասելի հայտա-
բարեց.

— Ման, ես արդեն գիտեմ՝ էրեխեքը որտեղից են ծնվում:

— Որտեղի՞ց, — հանկարծակիի գալով՝ հարցնում է մայրը:

— Իրանց մամաների փորից: Բայց թե ո՞նց են մտել փորը, այ
էտ չգիտեմ:

119

Մի անգամ հյուր ենք գնացել ընկերոջս տուն, որը այդ պահին
միս էր կտրտում: Տղաս զարմացած մորը դիմեց թե՛

— Ման, էս ձաձյան կնիկի գործ ա անում:

120

— Ի՞նչ ես դառնալու, — հարցնում է մանկական սրճարանի աշ-
խատակցուհին 5-ամյա Աննային:

— Բժշկուհի:

— Աննա՛ ջան, ավելի լավ չի՞ նկարիչ դառնաս, ես բժշկից վա-
խենում եմ:

— Ի՞նչ ա, հիմա որ դու վախենում ես, ես բժշկուհի չդառ-
նամ, — սրտնեղած հարցնում է Աննան:

121

Մայրը 3.5 տարեկան Մարիին և 1.5 տարեկան Յուրիին քնեց-
նելիս սկսում է Մարիի պատվին երգել Շարլ Ազնավուրի «Ավե Մա-
րիա»-ն: Վերջացնելուց հետո Մարին մորն ասում է.

— Ման, դե հիմա էլ «Ավե Յուրիա»-ն երգի:

122

Երկու տարեկան Խաչիկը բոլորի ուշադրության կենտրոնում էր: Հարազատները սովորեցրել էին, թե նա ում՝ ինչն է, և հարցնելիս հետևում էր ամեն մեկի տված բնորոշումը.

— Մայրիկի ինչն էս:

— Գանձը:

— Տատիկի ինչն էս:

— Հրաշքը:

— Պապիկի ինչն էս:

— Օգնականը:

Հորաքույրն էլ սովորացրել էր, որ ասի՝ հեքիաթը: Մի օր էլ որ ամեն մեկինն ասում է, հորաքույրը հարցնում է.

— Խաչիկ ջան, բա հորաքույրի ինչն էս:

— Գիրքը, — պատասխանում է փոքրիկը:

123

Ծովից վերադառնալուց մի քանի օր հետո մայրը տեսնում է 2.3 տարեկան Տաթևիկը փոքրիկ դուլլերով ջուր է տանում կողքի սենյակը:

— Էդ ինչի՞նք էս տանում, Տաթևիկ, — հարցնում է:

— Ծով եմ սարքում, — պատասխանում է երեխան:

124

Ըստ քյավառյան ծիսակարգի՝ թաղման հաջորդ օրը ծանոթ-բարեկամները գալիս են մեղափոխոջը մխիթարելու. դռան մոտ փող հավաքելու համար մարդ է կանգնում, և տղամարդիկ գումար են տալիս:

Խորեն պապի թաղման հաջորդ օրը հանգուցյալի երկու թոռները՝ 6 տարեկան Ռաֆիկն ու 4 տարեկան Տարոնը, կռվում էին, թե ով է փողերը հավաքելու:

— Լավ, լավ, Տարոն ջան, էս էլ որ մեռնեմ, էդ վախտ էլ դու փողերը կհավաքես, — փորձում է փոքր թոռանը հանգստացնել Համեստ տատը:

Տարոնը մի պահ համոզվում է, բայց հետո նեղսրտած ասում է.
— Աասահ, եսիմ դուն կրբ մեռնես...

125

Հեռուստացույցով «Ամենախելացին» խաղն է, հարց է գնում Եգիպտոսի բուրգերի մասին, հեռուստահաղորդավար Նազենին ասում է, որ ինչ լավ կլիներ գնալ ու սեփական աչքերով տեսնել բուրգերը:

5 տարեկան Ալեքսը լսում ու անմիջապես վազում է հոր մոտ ու դանդաղ հարցնում է. «Պապ, ինչի՞ մենք չենք գնում բուրգեր...», — ու մինչև երեխան կավարտեր, հայրը մտածում է՝ կպատասխանի, որ բուրգերը շատ են հեռու և մեծ գումար է պետք էստեղ գնալու համար և այլն, բայց էստեղ Ալեքսը խոսքը ավարտում է, — ուտենք»

126

2.6 տարեկան Հայկը փոշտաց, բայց մայրը՝ Սիլվան, չարձագանքեց:

— Եթե դու փոշտայիր, ես քեզ կասեի՝ ակոթյուն (իմա՝ առողջություն), — նեղացած ասում է Հայկը:

127

Ծաղկածորում 17 տարեկան Հայկը իր կրտսեր եղբոր՝ 5 տարեկան Նարեկի հետ սահնակով շատ արագ իջնելիս սահնակը շոռ է գալիս: Նարեկն ասում է.

— Ապեր, ես ինչ արիր, մենք խոմ չենք էկել էստեղ, որ գլուխներս ուտենք, մենք էկել ենք հանգստանանք, չէ...

128

Մի օր 3 տարեկան Հայկը հարցնում է պապին.

— Տիգրան պապի, քու կաշին քեզանից մեծ ա՛:

129

3 տարեկան Մարինեն դուրս է գալիս պատշգամբ ու հրճվանքով ասում է.

— Վայ, պապա, նայի՛, թաց անձրև ա գալի:

130

- Հայրիկ, էսօր վաղն ամ, — հարցնում է 3 տարեկան Մարինեն:
- Չէ, Մարինե՛ ջան, քնենք, վեր կենանք, կլինի վաղը:
- Հա, էդ հասկանում եմ, բայց էսօր վաղն ամ:

131

— Ինչո՞ւ ես նստել իմ տեղը, — ասում է մեծ եղբայրը՝ 12-ամյա Հայկը:

— Ապեյ, — ասում է երկու տարեկան Նարեկը, — բա մենք իրար ապեյ չենք:

132

— Ես քեզ չեմ սիրում, — ասում է մայրը երկու տարեկան Նարեկին:

— Միրում ես:

— Չեմ սիրում:

— Միրում ես:

— Չեմ սիրում:

— Չես սիրո՞ւմ՝ կսիրես, — ասում է Նարեկը:

133

— Դեբիլ, — մեծ եղբորն ասում է 2 տարեկան Նարեկը:

— Ամո՞թ քեզ, — դիտողություն է անում հայրը:

— Հարցնում եմ՝ դեբիլ ես, — խորամանկում է Նարեկը:

134

Հայր ու որդի պատկերասրահի նկարներն են դիտում, քիչ անց 3-ամյա Հայկը հարցնում է հորը.

— Հայրիկ, էստեղ կարուսել չկամ...

135

2.6 տարեկան Հայկը մուտքի դռան առաջ փայտե ձիու վրա առաջ ու ետ է ճռճվում: Ներս է մտնում հորեղբայրը, տեսնում ճռճվող Հայկին ու հարցնում է.

— Հայկ ջան, էդ ո՞ր ես գնում:

— Գնում եմ բաբոյիս (իմա՝ տատիս) տուն:

— Հիմա գնում եմ, թե գալիս ես, — հոգու հետ խաղալու համար հարցնում է Ռուբեն հորեղբայրը:

— Գնում-գալիս եմ, — կարճ ու իմաստալից պատասխանում է Հայկը:

136

Երթուղային տաքսով 1.6 տարեկան Նարեկը՝ հոր գրկին նստած, գնալիս կանանցից մեկը չկարողացավ հիացմունքը զսպել, ասավ.

— Օ՛, էս ի՞նչ լավիկն աս, կգամ մոտս:

Նարեկն անկաշկանդ տեղափոխվեց անձանությունու գիրկը: Վերջինս փորձեց մտերմիկ զրուցել երեխայի հետ.

— Բալի՛ ջան, կարող եմ ոտանավոր ասել:

— Ոտանավոր, — անմիջապես վրա բերեց Նարեկը՝ հարուցելով ուղևորների անզուսպ ծիծաղը:

137

— Տիգրան պապի, կարող եմ կատու նկարել, — հարցնում է 4-ամյա Անին:

Պապը, ինչքան կարող է, կատու է նկարում:

— Պապի՛ ջան, կարող եմ շունիկ էլ նկարես:

Պապը այս անգամ էլ շուն է նկարում:

— Պապի՛, իսկ զիբիլ¹⁴ կնկարես...

138

Երեք տարեկան Նարեկը իր խաղալիքների հետ խաղում է, հետն էլ՝ երգում.

Երեք օր է, չեմ տեսել յարիս,

Գիտեմ՝ յոթը տարի աս...

14 Զիբիլ – աղբ:

139

— Հայկ ջան, հերիք ա ուտես, փորիկդ կցավի, — ասում է հայրը:

— Պանկ ջան, հիմա ուտեմ, մի քիչ էլ ուտեմ, մի քիչ էլ ուտեմ, հետո հան ուտեմ, — պատասխանեց 2 տարեկան Հայկը:

140

— Վահե՛ ջան, քորիկի համար էլ պահի, — թոռանն ասում է պապը:

— Պահել եմ, Տիգրան պապի, տե՛ս, հեսա, — պատասխանեց 2 տարեկան Վահեն՝ մատներով ցույց տալով երկու թշերը:

141

Ընտանիքով ծովափ գնալիս երբ մտնում են Վրաստան, 7-ամյա Հայկը, տեսնելով փոքրիկ սայլակը քաշող մարդուն, ասում է.

— Հայրիկ, է՛ն ձաձյան իրան է՜ի տեղ ա դրել...

142

— Պապային կոշիկ ա պետք առնել, — մտահոգ ասում է կինը:

— Առաժմ ինձ կոշիկ պետք չի, — լինում է ամուսնու արձագանքը:

— Ինչի՞, հայրիկ, դու չոչ ես անում, որ քեզ կոշիկ պետք չի, — միջամտում է 7-ամյա Հայկը:

143

— Ես գնում եմ հեծանիվ քշեմ, — ասում է 5-ամյա Անին:

— Ես էլ եմ գալիս, — թոռան հոգու հետ խաղալու համար ասում է տատը:

— Հրանու՛շ տատի, դու հին ես (իմա՛՝ ծեր ես), չես կարող:

144

— Անունդ ո՛նց ա, — հարցնում են 4-ամյա Լուսինեին:

— Լավ ա, — պատասխանում է փոքրիկը:

145

3 տարեկան Նարեկը, տեսնելով հավերի ձու ածելը, հարցնում է.
— Հոր՞ր, մամաները իրանց բալաներին ածում են:

146

1990-ականների սկիզբներն էին: Չորսամյա տղայիս հետ դուրս էի եկել բակ: Բան էի մոռացել, և հարկ չհամարեցի Նարեկին վերև ուղարկել, մտածեցի՝ կանչել, և լուսամուտից կինս կարճագանքի:

— Ման, ման, — գոռաց Նարեկը:

Ոչ մի արձագանք:

— Մանո՛ւշ, Մանո՛ւշ, — ձայնեցի ես:

4-րդ հարկի լուսամուտից կրկին ոչ մի արձագանք: Նարեկը ել-քը գտավ.

— Պանկ, արի գոռա.«Ժավելի՛ սպիրտ, ժավելի՛ սպիրտ», հաստատ կլսի:

Նարեկը ճիշտ էր. գոռացի, և անմիջապես Մանուշը հայտնվեց լուսամուտի մոտ:

147

Պատերազմի ժամանակ մեծերը պեչեննին դնում են գարդի-րոբի¹⁵ գլխին՝ մտածելով՝ թե կարող ա շատ վատ օրեր գան, չոր էլ լինի, կհանեն կուտեն: Տան փոքրիկը տեսնում ու հաջորդ օրը պեչեննի է ուզում:

— Պեչեննի չկա, — ասում են:

— Ես տեհել եմ, դրել եք գարդիրոբի գլխին:

— Ասում ենք՝ չկա:

— Հան, ես գիդեմ՝ կան, թե՛ Հիտլերի հրմար եք պրեկել...

148

Տեսնելով, որ տղան ու հարսը երկրորդ երեխան ունենանալու ցանկություն չունեն, տատն ու պապը ճարահատ դիմում են «խորամանկության».
5-ամյա Եղիշեին ասում են.

15 Գարդերոբ (ռուս.) – զգեստապահարան:

— Գնա պապային ու մամային ասա՝ թող քեզ համար ապերիկ կամ քուրիկ բերեն:

Մի քանի անգամ գնալ-գալուց հետո Եղիշեն քիթը կախ գալիս ա տատի մոտ, թե՛

— Տան ջան, իրանք չեն ուզում ինձ համար ապերիկ կամ քուրիկ բերեն, արի դո՛ւ բեր, էլի...

149

Տեսնելով, որ երկրորդ երեխան ունենանալու իրենց հորդորներին բանի տեղ չեն դնում, պապն ու տատը տղային և հարսին համոզելու համար միջնորդ են ուղարկում 2.5 տարեկան Մարիա թռնիկին:

— Մարի՛շ ջան, պապային ու մամային ասա՛, թող քեզ համար քուրիկ կամ ապերիկ առնեն:

Մարիան քիչ հետո անտրամադիր ետ է գալիս ու պապին բողբոջում է.

— Ամեն՝ մի խանգարի, հիմա դրա ժամանակը չի: Կորյո՛ն պապի, արի թաթիցս բռնի, իրար հետ գնանք Աստված պապիկի մոտ, ինքը ինձ կօգնի, չէ՛:

150

Ծնողները ծովափ էին տարել Մարիային: Մի օր էլ սկսում է դժգոհել.

— Վրաստանում անունս չգիտեն, սրանք բանդո (իմա՝ դմբո) են, ինձ «լամուզի գոգո»¹⁶ են ասում:

151

1950-ական թվականներին բռշեքը ծամոն էին ծախում, հետն էլ առնողներին բացատրում, որ պիտի ծամեն ու մի քանի անգամ թքեն:

Մի անգամ էլ ծամոն առնելիս 4-ամյա Տիգրանը դիմում է մորը, թե՛

— Ման՝ ջան, իրան ասա, թող ինձ թքած ծամոն տա, էլի:

16 Լամուզի գոգո (վրացերեն)– սիրուն աղջիկ:

152

Մաթեմատիկայի ժամին ուսուցչուհին դիմում է աշակերտուհիներից մեկին.

- Նորա՛, կարո՞ղ ես մի կենտ թիվ ասել:
- Երեք:
- Ապրե՛ս, հիմա էլ մի գույգ թիվ ասա:
- Երեսուններեք:

153

1.9 տարեկան Եվա թռնիկս ինձ շատ է սիրում, ակնհայտորեն տարբեր: Խոսել համարյա չգիտի: Ավանդական տափակ հարցն ենք տալիս, զվարճանում.

- Տատիկի՛ն ես սիրում, թե՛ պապիկին:
- Պապիկին:
- Աստղիկին (մորաքույրն է) սիրո՞ւմ ես: Կարճ ասում է՝ պապիկին:
- Գայանեին (հորաքույրն է) սիրո՞ւմ ես:
- Պապիկին:
- Գնացի՛ք անհոգի քայլի.
- Մամայի՛ն ես սիրում, թե՛ պապիկին:
- Խաղի մեջ մտած՝ պատասխանում է՝ պապիկին:
- Հասնում ենք վերջին.
- Պապայի՛ն ես սիրում, թե՛ պապիկին:
- Մտածեց մեկ վայրկյան և հանճարեղ պատասխան.
- Պա:
- Չսեղացրեց ո՛չ հորը, ո՛չ պապին:

154

Աստղիկ մորաքույրը երկամյա Եվային գրկած, գնում է: Մի քիչ քայլելուց հետո, երբ հոգնում է, ասում է.

- Եվա՛ ջան, գրկիցս իջիր, մի քիչ էլ քայլիր, հա՛: Ծանր ես...
- Ես ծանր չեմ, պուպուշ եմ, — պատասխանում է Եվան:

155

Երկու տարեկան Եվա թոռնիկս առաջին անգամ գնում է Ամստրի հանդեսի: Հենց թատրոնի լույսը մարում են, մթության մեջ սկսում է երգել.

— Բարի գիշեր, բարեկամներ...

156

Աշոտիկի մանկապարտեզի խմբում սիրիահայ երկու եղբայրներ կան:

Մի օր աղջիկս տանը խոսակցության ժամանակ գործածում է սիրիահայ բառը:

Աշոտիկը հարցնում է.

— Մամմ, ինչ է նշանակում սիրիահայ:

Աղջիկս ոնց կարողանում, բացատրում է, հետո, որպեսզի ավելի հասկանալի լինի, ավելացնում է.

— Ձեր խմբի Սարո և Սերո եղբայրները սիրիահայ են:

Աշոտիկին այդ բացատրությունը համոզիչ չի թվում, մտածում, մտածում է և ասում.

— Չէ, մամ, իրենք սիրիահայ չեն, իրենք *հայահայ* են:

157

Թոռնիկս Կանադայից պատկերազարդ մի գիրք է նվեր ստացել: Գրքի հերոսը հայտնվում է տարբեր դարաշրջաններում և միջավայրերում, որոնց Աշոտիկն անուններ է դրել՝ փայտասրաղար, ֆուտբոլադար, պարադար, քարեդար, ոսկեդար, նույնիսկ տիեզերադար... Ամենաուժեղը սա է՝ *հիմարադար*: Ոնց որ մեր օրերի (և մեր իրականության) մասին լինի...

158

Աշոտիկը Ձմեռ պապից տարբեր տեսակի դինոզավրեր է նվեր ստացել: Դրանց սկսել է անուններ տալ ըստ հատկանիշների, ինչպես ինքն է զգում-տեսնում՝ ծակազավր, դողազավր, փղազավր...

159

4.8 տարեկան Աշոտիկը մորը՝ Աշխենին, հարցնում է.

— Կտրած խնձորն ինչի՞ է մզանում:

— Երկաթ կա մեջը, դրանից է:

— Մամա՛, երևի Աշոտ Երկաթը շատ խնձոր է կերել, որ Երկաթ են ասում, — մեկնաբանում է Աշոտիկը:

160

Աշոտիկը մորը հարցնում է.

— Էս պանրին հայերեն ի՞նչ են ասում:

— Թել պանիր:

— Մամա՛, ճիշտ հայերենն եմ ուզում իմանալ:

— Հա, թել պանիր:

— Չէ՛, մամա՛, սրա ճիշտ հայերենը *թելապանիր* է:

161

Աշոտիկը ցերեկը քրոջ՝ Եվայի հետ Բաղրամյան պողոտայում ցույցերի ժամանակ լավ ուտել-խամելուց հետո մորն ասում է.

— Մամա՛, մեծանամ, ես էլ եմ մարդկանց ձրի ուտելիք բաժանելու:

162

Աշոտիկն իր Հասմիկ տատիկի հետ շատ մեծ *стерлядь* (չուքա ձուկ) էր առել:

— Ձուկ ենք առել, պապիկ, — ասաց:

Երբ իբր հետաքրքրված՝ ժպտացի, խորամանկորեն վրա բերեց.

— Շնա:

Երբ իսկույն «սարսափեցի», խաղաղեցրեց ինձ.

— Պապիկ, մի՛ վախեցիր, սատկած է:

163

Թոռնիկս՝ Աշոտիկը, վերջերս ասում է, որ ինքը բաց կանաչ առյուծ է: Նա մի օր այսպես արտասանեց Հովհ. Թումանյանի «Շունն ու Կատուն».

Ժամանակով Վազրը ճոն էր,
Սոյունն էլ գլխին գդակ չունէր,
Միայն գիտէմ ոչ որդիանց որդի,
Ճանկել էր մի հովազի մորթի:

164

Թոռնիկիս՝ Աշոտիկի հետ դպրոց-դպրոց էինք խաղում. Смайлик «smile» նկարագարող մի գրքով կրկնում էինք կենդանիների և նրանց ձագերի անունները: Դե, այժ-ույ, ոչխար-գառ, կով-հորթ և մնացածը հեշտ անցանք, մեկ էլ Աշոտիկն ասում է.

— Պապիկ, կոկորդիլոսի ձագին ինչ են ասում:

Կարկամեցի: Ասում է.

— Դու չգիտես. կոկորդիլոսի ձագին ասում են *կոկիլոս*:

Մի տասը րոպէ հետո ստուգիչ հարց տվեցի, պատասխանը նույնն էր՝ կոկիլոս:

Երևի էդպես է:

165

Աշոտիկս մի հսկա պանդա խաղալիք ունի մեր տանը: Մեկ էլ տեսնենք արագ-արագ մանդարին է կլպում: Մեզ բացատրում է.

— Մանդարինի կեղևի գործարանում Смайлик «smile» եմ աշխատում: Կեղևները պանդային եմ տալու, որ ուտի կշտանա:

166

Դավիթ պապիկը Աշոտիկին ասում է..

— Նայիր, Սասունցի Դավթի արձանն է:

Կտրական մերժեց.

— Ո՛չ, պապիկ, Հայր Հայաստանն է:

167

Աշոտիկին ասում եմ, որ տատիկի հետ իրեն տանելու ենք լուսանկարների ցուցահանդես: Հարցում է.

— Դա ինչ է:

Պատասխանում եմ.

—Մի տեղ է, պատերից մենե՛ծ լուսանկարներ են կախված:
Լուսանկարների ցուցահանդես:

Մի քիչ հետ ասում է.

—Վաղը գնում ենք լուսացույց:

168

Թոռնիկս՝ Աշոտիկը, մեր տանը խաղում էր իր 3 ձիերով: Ասում է՝

—Սա մեծպոչ է, սա՝ միջնապոչ, սա՝ պուճպոչ:

169

Առավոտյան բակ դուրս գալով՝ 4 տարեկան Սևադան հրճվանքով դիմեց մորը՝ ասելով.

—Մայրիկ, տեն, ձյունը փշաքաղվել ա:

170

Խոսակցության մեջ «խեղկատակ» բառը լսելով՝ 6 տարեկան Բարկենը հարցնում է.

—Տատիկ, խեղկատակը խեղդած կատակն է՞:

171

1.8 տարեկան Քրիստինեին չարություն անելու համար մայրը դիտողություն է անում.

—Ամո՛թ քեզ, անդաստիարակ:

Մի քիչ մտածելուց հետո Քիսոն ասում է.

—Ման, դո՛ւ ես անընկերԱննան:

(Քրիստինեի մանկապարտեզի դաստիարակչուհու անունը Աննա է. ան+դաստիարակ—ան+ընկեր+Աննա—ծանոթությունը՝ ասացողի)

172

Երրորդ դասարանցիները մայրիկների տոնի՝ Մարտի 8-ի կապակցությամբ նկարչության դասին նկարներ էին նկարում, որ նվիրեն իրենց մայրիկներին: Սուրենը երփներանգ մի գորգ էր նկարել ու գրել. «Մորս հիշատակին»...

173

3.6-ամյա Դավիթը գնում է հարևանի տուն, տեսնում՝ տանտիկինը, բրդերի կույտերի մեջ գործ է անում, վազելով գալիս է տուն ու մորն ասում.

—Ման ջան, էդ Սիլո տատիկի տուն չգնաս. ինքը տան մեջ գելեր ա պահում:

174

Տասը օրից ավելի սովորեցնում են 3.6-ամյա Դավիթին, որ հայերենի տառերը ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը: Հաջորդ օրը հյուրերի ներկայությամբ հպարտ-հպարտ հարցնում են Դավիթին.

—Հայերենի տառերն ո՞վ է ստեղծել, Դավիթ ջան:

—Խեչո պապիս, — ինքնավստահ պատասխանում է Դավիթը:

175

Անընդհատ մայրը փորձում է ուղղել 3.6 տարեկան Դավիթին, հասկացնել, որ բարբառով չխոսի.

—Դավիթ ջան «գուգամ, կերթամ, ինչ ա կենես...» որ ասես, դասատուները քեզ դպրոցից դուրս կանեն:

Բայց Դավիթը նեղն է գցում մորը.

—Ման, բա խի՞ ա տատին ըտենց խոսըմ, էդ վախտ դասատու չի՞ եղել:

176

Երկար ժամանակ 3.5 տարեկան Դավիթն ու Սիմոնը փակված էին աղունիկների համար նախատեսված բնում: Մոր հարցին, թե՛ ո՞ր էիր, Դավիթը պատասխանում է.

—Ման, Սիմոնը գուգարան էր սարքել, բայց մեջը ծակ չկար:

177

Դավիթը դիտում է «Կենդանիների աշխարհում» հաղորդումը, որտեղ օձեր են ցուցադրում:

—Սա օձ է, օձը սողուն է, որովհետև ոտքեր չունի, — բացատրում է մայրը:

— Դավիթը հյուրասենյակից դուրս է վազում ու վերադառնում
օդու շիշը ձեռքին, թե՛
— Ման, էս էլ ան սողուն...

178

Դավիթը այնքան է նյարդայնացնում մորը, որ խեղճը, հունից
դուրս եկած, ասում է.

— Դե հերիք էլավ, էլի, տղա՛ ջան, մեռնեմ՝ քեզանից պրծնեմ:

Դավիթն սկսում է լաց լինել: Մայրը մտածում է, որ իր խոսքե-
րից ազդվել է և հարցնում է.

— Ինչի՞ն ես լաց լինում:

— Ման, ասում է Դավիթը, — բա որ դու մեռար, մեր ամանները
ո՞վ ա լըվալու:

179

Ամպրոպի ձայնից Դավիթը քնից արթնանում է և մորը հարց-
նում.

— Ման, էդ ի՞նչ ուժեղ ձեն էր:

— Ամպերն են գոռգոռում, Դավիթ ջան:

— Ման, բայց ամպերը բերան չունեն, ո՞նց են գոռըմ:

180

Քանի որ երկու տատիկների անունն էլ Մարուս էր, Անուշ տա-
տիկը փոքրիկ Դավիթին բացատրում է.

— Դավիթ ջան, էս մամայիդ՝ Կիրովականի Մարուս տատին ա,
Հնաբերդի Մարուս տատիկը մահացել ա:

— Տանտ, բա ո՞վ կրակեց մամայիս Մարուս տատիկին, որ մե-
ռավ:

181

Երբ Դավիթը քնից զարթնում ու սենյակից դուրս է գալիս, Մա-
րուս տատը ծոռանը ուրախացնելու համար ծափ է տալիս:

— Տանտ, իսի՛ն ես հըմի ծափ տալի, — զարմացած հարցնում է
Դավիթն ու շարունակում, — երգելուց հետո են ծափ տալի:

182

Նախակրթարանում դաստիարակը հարցնում է.

— Երեխաններ, կարո՞ղ եք ասել՝ ո՞վ ինչ է ուզում դառնալ:

— Երբ մեծանամ, — ասում է 5-ամյա Մոնիկան, — ուզում եմ ամուսնանամ, բայց մամաս ուզում ա, որ ես բժիշկ դառնամ:

183

Նախակրթարանում դասի ժամին դաստիարակը փոշտում է, ու ոչ մի երեխա չի արձագանքում:

— Երեխաններ, երբ որևէ մեկը փոշտում է, դուք ի՞նչ պիտի ասեք:

— Բարև ձեզ, — միաբերան պատասխանում են երեխաները:

184

Երեխան վազելով տուն է մտնում ու մորն ասում.

— Ման, մեր հարևան Ժենիկ տոտան շատ մեղք ա, մարդը էնքան ա ծեծել...

— Տղմա՛ ջան , քանի՞ անգամ եմ ասել, որ դրսում ինչ տեսնում ես, մի արի տանը պատմի, — երեխայի խոսքը ընդհատելով՝ սաստում է մայրը:

— Ման, բայց Ժենիկ տոտային մարդը դրսում չի ծեծել, տանն ա ծեծել, — պարզաբանում է երեխան:

185

Մի երեկո՝ քնելիս, 3-ամյա Արսենը մորը հանկարծ հարցրեց.

— Մամմ, դու լսվ մամա ես:

— Չգիտեմ, տղան, դո՞ւ ասա — շփոթվեց մայրը:

— Լավն ես, ման, բայց շատ լավը չես... որովհետև չես թողնում, որ հիմա գնամ խաղամ, — պարզաբանեց փոքրիկը:

186

3 տարեկան Արսենին ասում են.

— Արսեն, ախր էնքան համովն ես, որ տատիկդ էստեղ լիներ, քեզ կուտեր:

Արսենը մոայլվում է և գայրացած ասում.

— Բա մարդը մարդուն ուտո՞ւմ ա...

187

Արսենը փողկապ կապած հայրիկին ճանապարհում է աշխատանքի.

— Պապա՛, ինձ համար շոկոլանդ կառնես, — պատվիրում է նա:

— Եղավ, շե՛ք, — խոստանում է հայրը:

— Շե՛քը դու ես, ես դրանից չունեմ, — մատնացույց անելով հոր փողկապը՝ տխուր պատասխանում է Արսենը:

188

— Պապա՛, ինչո՞ւ քեզ ավտո չես առնում:

— Թանկ են ավտոները, տղե՛ս:

— Իմ ավտոներն էլ են թանկ, բայց մամաս առնում ա — ասում է Արսենը:

189

Մի օր Արսենը հորը դիմեց, թե՛

— Պա՛պ, պա՛պ, նայի՛ , թերիս մազեր են աճել... որ մեծական քաներ եմ խոսում, դրանից են աճում, չէ՛:

190

4-ամյա Արսենը մի օր ասավ.

— Ման՛, Ալե՛նի մաման վաճառող ա:

— Բա քո մաման՛ ինչ ա, տղե՛ս:

— Ի՛, իմ մաման առնո՞ղ ա...

191

Արսենի 5-ամյակը նշվեց մանկական սրճարանում: Մի քանի օր հետո տուն գալով՝ Արսենը լուրջ հայտարարություն արեց.

— Ման՛, ես սիրահարվել եմ, շուտով մեր հարսանիքն ա լինելու:

— Ի՛նչ, — անսպասելի լուրից շփոթված՝ հագիվ ասաց մայրը:

— Հա՛, մամա՛ ջան, եթե մանկական սրճարանում ծնունդ նշում են, ուրեմն մանկական հարսանիք էլ կարող ենք նշել , — պատասխանում է մանկական սրճարան վերադառնալու համար ամեն ինչի պատրաստ Արսենը:

192

— Հիմի ո՞ր ենք գնում, պա՛պ, — հարցնում է 6 տարեկան Կարինեն:

— Աղջիկ ջան, քեզ տանում եմ կուլտուրայի տուն, — ասում է հայրը:

Երբ տեղ են հասնում ու ներս են մտնում, չորս կողմը նայելով՝ Կարինեն դիմում է հորը.

— Պա՛պ ջան, էս տունը, բա կուլտուրա՛ն ուր ա:

193

Տատիկը Գրիգորին պատմում էր «Կարմիր գլխարկ» հեքիաթը: Գրիգորը լսելուց հետո ասաց.

— Տանտ, էդ կարմիր գլխարկի մաման խելք չունե՛ր. ո՞նց ա իրա փոքրիկ աղջկան մենակ ուղարկել անտառ:

194

Գնացել էինք Գրիգորի համար կոշիկ առնելու: Նոր կոշիկները փորձելուց հետո որոշեցինք գնել, իսկ Գրիգորը էլ ոտքերից չհանեց ու դիմելով վաճառողին ու ցույց տալով հին կոշիկները՝ ասավ.

— Տոտա՛, կոշիկներս կծախես:

— Ի՛նչքանո՞վ ծախես, — հարցրեց վաճառողը:

— Տասը դրամ:

— Ի՛նչի՞ էդքան էժան:

— Որովհետև մաշած ա ու կեղտոտ ա, — հիմնավորեց Գրիգորը:

195

Բոլորս ուրախ-ուրախ պատրաստություն էինք տեսնում, որ սեպտեմբերի 1-ին Գրիգորին առաջին անգամ դպրոց ուղարկենք: Մենակ Գրիգորն էր մտահոգ, քիչ անց ասավ պատճառը.

— Ախր ես տառերը չգիտեմ, ո՞նց եմ դպրոց գնալու, ո՞նց եմ գրելու, կարդալու...

196

Գրիգորը պետք է գնար Մոսկվա: Տատիկը ասավ.

— Գրիգոր ջան, բա որ քեզ ոռուներն հարցնեն. «Как тебе за-
быт?»¹⁷, ինչ ես պատասխանելու:

Ասավ.

— Կասեմ՝ մայ նեյմ իզ Գրիգոր¹⁸, թող լռակվեն¹⁹:

197

Չորսամյա Բագրատը, մատիտների գույներն էր ասում, մեկի
գույնը մոռացել էր, ասավ.

— Սովորական գույնի մատիտ:

198

Խանութի դռան մոտ մի շուն ազդագրերին էր նայում: Բագ-
րատը տեսավ ու ասավ.

— Տատիկ, շունիկը կարդում ա:

199

Նոր տարվա նախատոնական օրերն էին, վարագույրից ևս
փայլեր ամրացրինք:

— Մամմ, զանավեսկան²⁰ էլ է՞ս տոնածատել, — հարցրեց Բագ-
րատը:

200

Երբ 3-ամյա Բագրատը լաց է լինում կամ անկարգություն է
անում, ասում եմ.

— Ամո՛թ է, դու մեծ տղա ես:

Պատասխանում է.

— Տատիկ, ես փոքրիկ բալիկ եմ, մեծ չեմ:

17 Ռուս.՝ Ինչ է անունդ:

18 Անգլ.՝ Իմ անունը Գրիգոր է:

19 Լռակվել – ժարգոնային՝ պայթել:

20 Զանավեսկա (ռուս.) – վարագույր:

Իսկ երբ արգելված բան է ուզում՝ Աշոտի *գործերը*, այսինքն՝ գործիքները, մերժում ստանալով, ասում է.

— Տատիկ, ես մեծ եմ:

201

— Իմ արև, իմ լուսին, չգիտեմ՝ որն ես ինձ համար, — մի օր թոռանը սիրելիս ասավ պապը:

— Արևը, պապի՛, — վրա բերեց 7-ամյա Գրիգորը:

— Ինչո՞ւ:

— Որովհետև արևը լույս ա տալիս:

— Գրիգոր՝ ջան, բայց չէ՞ որ լուսինն էլ ա լույս տալիս:

Թողը մտածեց, մտածեց, թե՛

— Պապիկ, լուսինն արևի լույսն ա տալիս:

202

Ընտանիքի անդամներով դիտում են Գրիգորի վաղ մանկության կինոժապավենը՝ 6 ամսականում նրա *գղզղալը*, թմբլիկ մարմինը, տոտիկները բերանը տանելը: 7-ամյա Գրիգորը ուշադիր, սևեռուն հայացքով նայում, նայում է ու արձագանքում.

— Մամ, ինձ ընենց եմ կարոտել...

203

— Պապիկ, գիտե՞ս ինչ եմ դառնալու, — ասում է 4.8 տարեկան Սոնան:

— Ի՞նչ:

— Բժիշկ եմ դառնալու՝ գինեկոլոգ, որ օգնեմ մամայիս փորը ճրղեմ, ապերիկիս հանեմ...

(Մայրը հղի է եղել, և երեխան խոսակցություններից լսել էր, որ կեսարյան հատումով է ծննդաբերելու – ծանոթությունը՝ ասացողի)

204

Հեռուստատեսությամբ բժշկական հաղորդումով ասվում է, որ հղի կանանց չի կարելի սուրճ խմել, վնասակար է: Հաջորդ օրը 10 տարեկան էդուարդը, մորը տեսնելով տաք սուրճը խմելիս, ասում է.

—Ման, չլսեցիր՝ բժիշկն ինչ ասավ. քեզ չի կարելի սուրճ խմել. տաք սուրճը կլցվի էրեխի գլխին, կվառվի...

205

6 տարեկան էլենը մի օր հանկարծակիի է բերում տատին.

—Աստղիկ տատի, էն որ մամայի փորից եմ դուրս էկել, պարզ ա, բայց թե պապա՞ն ինչ կապ ունի ըստեղ, այ՛ էդ չեմ հասկանում:

206

Անիի ծննդյան օրը դասարանցիներն էին եկել շնորհավորելու: Առաջին դասարանում սովորող քույրը՝ Էլենը, հոգոց հանելով ասավ.

—Ու՛ր էր՝ ես էլ դատնայի գոնե 4-րդ դասարանցի, որ ինձ էլ շատ նվերներ բերեին...

207

—Արի բրեժն-բրեժն խաղանք:

—Ո՞նց:

—Ես քեզ պաչեմ, դու՛ ինձ, դու ինձ պաչես, ես՝ քեզ:

208

—Արի բրեժն-բրեժն խաղանք:

—Ո՞նց:

—Ես քեզ պաչեմ, դու՛ ինձ, դու ինձ պաչես, ես՝ քեզ:

—Չ է՛, արի գարբաչով-գարբաչով խաղանք:

—Էդ ո՞րն ա:

—Ես խոսամ, դու ընդհատի, դու խոսա, ես ընդհատեմ²¹:

209

—Էս ի՞նչ ես արել, — հարցնում է մայրը տակը թրջած 3 տարեկան Մարիամիկին:

—Չես տեն՞ում, թըրդընել եմ:

21 Մոսկվայում նստաշրջանի ժամանակ Գորբաչովն անընդհատ ընդհատում էր հայ դեպուտատներին՝ թույլ չտալով ասելիքն ավարտել, սումգայիթյան ողբերգությանը ճշմարիտ գնահատական տալ:

- Իհի՛, աղջիկ ջան, բա էսքան քրտնել կըլինի՛:
— Ման, ես էպես եմ թըրդընում:

210

— Էս տիրամեռի հավերը էլի ձու չեն ածել, — տրտնջում է Մարիամ տատը:

— Տատի՛կ, ախր գործադու ա²², հավերը ո՛նց կարան ձու ածեն, — պատասխանում է 3 տարեկան Մարիամիկը:

211

4-ամյա Մանեի տատիկը ուղեղի կաթված էր ստացել. ձեռքը չէր կարողանում բարձրացնել. դանդաղ էր ապաքինվում էր: Մանեն խաղում էր տիկնիկի հետ, մեկ էլ արձագանքեց.

— Ման, տատիկի թևը չի աշխատում, որովհետև *էլեմենտը* չկա: (Երեխայի տիկնիկը շարժվում էր մարտկոցի օգնությամբ – ծանոթությունը՝ ասացողի)

212

— Հրա՛յ ձածյա, գըլխիդ անձրև ա էկել, — ասում է 4 տարեկան Մարիսեն՝ ցույց տալով քրտինքի կաթիլները:

213

Պապը օղի էր քաշում, կանչում են հաց ուտելու:

— Պապի՛, ձեռքերդ կեղտոտ ա, — ասում է 3 տարեկան Մարի թոռնիկը:

Պապը լվանում է ձեռքերը, բայց սևությունը լրիվ չի անցնում:

— Պապի՛, գդալը տուր ես կերցընեմ, — ասում է Մարին:

214

7 տարեկան Վահագնին դպրոց ընդունելու համար տնօրենը հարցեր է տալիս.

— Բալի՛կ ջան, երեքին եթե գումարես երկուս, ինչքա՛ն կանի:

— Հինգ, — պատասխանում է Վահագնը:

22 Ղարաբաղյան շարժման օրերին՝ 1988թ. հուլիսին, համընդհանուր գործադուլ էր հայտարարված:

—Ապրեն, իսկ եթե 3 խնձորին գումարես 2 տանձ, ինչքան կլինի,— երեխայի հոգու հետ խաղալու համար հարցնում է տնօրենը:

—5 հատ խնձորատանձ,— անմիջապես պատասխանում է Վահագնը:

215

—Պապիկ, բա արևը ձեռքեր ունի,— հարցնում է 3.5-ամյա Հասմիկը:

—Չէ, արևը ղնց կարող ա ձեռքեր ունենա:

—Պապիկ, բա ինչի ա մաման ամեն անգամ ասում՝ Հասմիկ, արևի տակ չկանգնես, գլխիդ կխփի:

216

—Պանյ, ամպը բերան ունի,— հարցնում է 3-ամյա փոքրիկը:

—Չէ, ամպը ղնց կարող ա բերան ունենա:

—Բա ինչի են ասըմ՝ ամպը գոռաց:

217

Հեռուստացույցով հաղորդում են. «Ելույթ է ունենում փողային նվագախումբը»: Փոքրիկը հարցնում է հորը.

—Հայրիկ, ինչ է նշանակում փողային նվագախումբ:

Քույրը թե՛

—Չգիտես, ինչ է. էն, որ հարսանիքներում նվագելու համար փող են տալիս:

218

—Ինչի են լաց լինում,— հարցնում է մայրը 3-ամյա աղջկան:

—Քամին մազերիցըս քաշում ա,— պատասխանում է փոքրիկը:

219

Ախթալայում մասնակցում են բարեկամներից մեկի հուղարկավորությանը: Առանձնանում ենք՝ մի կտոր հաց ուտելու: Բարեկամիս թողը, պապի թևի տակ մտած, մատով ցույց է տալիս իմ նոր ու փայլուն կոշիկները, ապա ցածր ձայնով պապին ինչ-որ բան է ասում, իսկ պապը չոր տոնով սաստում է երեխային: Իմ աչքից դա չի վրիպում:

— Ինչ ասավ էրեխեն, — հարցնում եմ Դավիթին:

— Լավ էլի, ո՛չ մի բան:

— Ճիշտն ասա, էրեխեն ինչ ասավ, — պնդում եմ ես:

Ի վերջո, ինձ հաջողվում է իմանալ էրեխայի անմեղ մատնացույցի պատճառը. էրեխան հարցրել էր. «Էն պապիկի կոշիկները մեռելի կոշիկներ են, չէ՞, պապի...»²³

220

4-ամյա Վռամին մայրը ուղարկում է հորքուրի տուն՝ ինչ-որ բան բերելու, բայց Վռամը չի ուզում գնա, ասում է.

— Պապայիցը վախըմ եմ, կջղայնանա. ինձ ասել ա դոներիցը հեռու չգնաս:

Որ մայրը շատ է գոռում, թե կասես՝ մաման ա ուղարկում, Վռամն ասում ա.

— Դե գոնյա արի ըդքան տեղը պապային անց կացրու²⁴, մնացածը ես կգնամ:

221

Ամառային արձակուրդներին 8-ամյա Վռամը քաղաքից մի շան թուլա է տանում Շամուտ, օգոստոսի վերջին քաղաք վերադառնալիս տատին պատվիրում է.

— Տատի՛, թուլիս լավ կպահես, անարատ կաթը կտաս, կհաշվես՝ ես եմ խմըմ, օրն իրեք հետ կտաս:

— Ամոթ չէն անըմ, շո՛նըս, հա շո՛նըս, փոխանակ տատիդ ասես՝ «Տատի՛ ջան, մենակ ես մնըմ, քեզ լավ կպահես», թուլիդ²⁵ մասին էն մտածըմ, — աստում է մայրը:

Վռամն «ուղղում» է սխալը.

— Տատի՛ ջան, քեզ լավ կպահես, ցրտովը բնըմը կպահես, որ մրսի ոչ...

23 Ետխորհրդային տարիներին՝ 1990-ական թվականներին, գյուղաշխարհի էրեխան նոր հագուկապ տեսնում էր միայն թաղման արարողությունների ժամանակ, այն էլ՝ հանգուցյալի հագին:

24 Ինչ-որ վտանգի դեպքում է ասվում, հատկապես՝ շան մոտով անցկացնելիս:

25 Թուլա – շան ձագ:

222

Դպրոցում 10-ամյա Վռամին հանձնարարում են կազմել իրենց տոհմածառը: Մոր օգնությամբ կազմվում է տոհմածառն, ու հաջորդ օրը ուրախ-ուրախ տանում է դպրոց: Դպրոցից Վռամը տուն է գալիս հոնքերը կիտած, երբ հարցնում են պատճառը, ասում է.

— Մեր բոլոր դասարանցիների ծառերը կարգին ծառեր էին, մենակ իմն էր էրկու քոստո ճուղ...

223

3 տարեկան Վռամը նայում է պատին փակցված նկարին ու հարցնում է տատին:

— Տատի՛, է՛ն Լաշո (Սարգիս) պապն ա, բա կո՞ղքինն ով ա:

— Կողքինն էլ ես եմ, էլի, Վռամ ջան, — պատասխանում է Ջեմմա տատը:

— Տատի՛, բա դո՞ւ էդ երբ ես մեռել, — հարցնում է երեխան:

224

«Մի վախեցիր» ֆիլմը դիտելիս 5-ամյա Վռամի ազատամարտիկ պապ Գագոն ասում է.

— Վռամ ջան, գիտե՞ս, որ ես էլ եմ ըստենց կովել:

— Հա՛, պապի՛, համ էլ ըսենց կրակել ե՞ս, — ցույց տալով կրակողներին՝ հետաքրքրվում է երեխան :

— Հա, Վռամ ջան, այ ըսենց գլխներիս վրովը գյուլլեքը անց ին կենըմ:

— Պապի՛, բա դու հե՛չ չես գոհվել, — հարցնում է Վռամը:

225

Տարրականի ուսուցիչը սաստում է դասը խանգարող աշակերտին.

— Գառնի՛կ, լռիր, ես եմ խոսում:

— Հըլենի՛նչ²⁶ դու տե՛ս խոսալ, բա մե՞նք, — նեղսրտած հարցնում է 7-ամյա Գառնիկը:

26 Հըլենի՛նչ – անընդհատ:

226

1-ին դասարանցի Վռամը 2-րդ օրը դպրոցից տուն է գալիս հոնքերը կիտած:

— Վռամ ջան, էդ խի՞ ես հոնքերդ կիտել, ի՞նչ ա էլել:

— Ման, դպրոցը մն ասի՝ կարելի՞ ա գուգարան գնալ, սաղ ըրելս քը վրես հռռոացին:

— Դրա համար պետք է ասես. «Կարելի՞ է գնալ դուրս»:

— Վու՛յ, չուզեյի դուս գնամ, է՛, ուզեյի գուգարան գնամ, գնալ տեյի դուսը ի՞նչ անեմ...

227

Մեր բարեկամ Մհերը մի քանի տարի ընդամիջումից հետո տեսնելով 11-ամյա Վռամին՝ հարցնում է.

— Վռամ, ինձ հիշում ե՞ս:

— Չէ, չեմ հիշում:

— Ա՛յ տղա, բա չես հիշում, որ ձիով ձեր տուն էի գալի, ձին դռանը կապըմ էի, գալիս էի քեզ էլ սիրըմ էի:

— Չէ, չեմ հիշում:

— Ա՛յ տղա, էն որ ձիով էի գալի, էրեսը պեծիկ ձի էր, — ասեն կերպ ուզում է մանրամասներով հիշեցնել Մհերը:

— Ճիշտը որ ասեմ, ձին հիշեցի, քեզ չէ, — անկեղծանում է Վռամը:

228

Թաթույը նոր էր սկսել խոսել: Մի օր տնեցիք տեսնում են, որ շարժուն երեխան ձայն-ձուն չի հանում, մայրը ասում է .

— Աշկիս չիշիկ ա արել. խելոքացել ա:

— Ման, աշկիդ չեմ արել, տակիս եմ արել, — ասում երկու տարեկան Թաթույը:

229

5 տարեկան Թաթույին հարցնում են.

— Էրկու ձեռների մատները որ իրար գումարես, ինչքան կանի:

— Նայած. մարդ կա՝ յոթ մատ կանի, մարդ կա՝ 10 մատ կանի, — պատասխանում է Թաթույը:

(Հարևանությամբ ապրող հոր հորեղբոր տղա Արտակի 3 մատները կտրված էին)

230

2-րդ դասարանում սովորող Թաթուլին ծնողները ռուսերենի իմացությունն են ուզում ստուգել և հարցնում են.

— Չասի-ն²⁷ ինչ ա նշանակըն:

— Չասին նշանակըն ա՛ մի ասի:

231

2.5 տարեկան Վալոդիկը առավոտը քնից արթնացել ու լաց էր լինում: Մայրը գործով էղած՝ ուշադրություն չէր դարձնում: Տեսնելով՝ ուշադրություն դարձնող չկա՝ նեղսրտած երեխան մորն է դիմում, թե՛

— Էլմի՛րա, չես լսըն, ըրեխեն լաց ա ըլըն:

232

Ահնիգորցի Վազգեն Դանիելյանը դասավանդում էր հարևան Շամուտ գյուղում: 2-րդ դասարանում դաս անցկացնելիս նա հայրաբար ձեռքը դնում է Չոբանանց Մեսրոպի աղջիկ Լատրայի ուսին:

— Ձեռքտ դենը տանր, — ուսը ետ քաշելով՝ սրունեղած ասում է 8-ամյա Լատրան, ես գիղեմ՝ մըտկինըտ ինչ ա...

233

Շամուտի տարրական դասարանում պատմության և աշխարհագրության դասատու Չոբանյան Արազը երեխաների հոգնածությունը ցրելու համար մտերմիկ տոնով դիմում է աշակերտներին.

— Էրեխենք ջան, ատամներըս ցավըն են, ինչ անեն:

— Արսւգ ձաձա²⁸, ցավըն սմ, գնա հանի, տեղը իշի ատամսի գըձի, — «խորհուրդ» է տալիս ուսուցչի հորեղբոր թոռ Սուրիկը:

27 Ռուս.՝ ժամացույց:

28 Չաձա – ռուսերենից անցած դիմելաձև, այդպես էին դիմում ազգակիցներին:

234

—Մին էլ որ ցելքի²⁹ նման ժած ես էկել, ծեծիլ տեմ,—տարրական դասարանում սովորող Ֆրիդային դիտողություն է անում պատմության ուսուցիչ Չոբանյանը:

—Ք... տես ուտի,—լինում է 9-ամյա աշակերտուհու պատասխանը:

235

Առաջին դասարանի առաջին օրերին երեխան տեղից դիմում է մաթեմատիկայի ուսուցչին.

—Սարքին բիծի³⁰, գնամ ք...մ:

—Վայ, տղա՛ ջան, չի կարելի, ճիշտ ա, ես քու Սարգիս բիծին եմ, բայց սա դպրոց ա, ինձ որևէ բան ասելիս պիտի ասես ընկեր Սարգսյան: Հետո էլ դուրս գնալիս էլ կարիք չկա ասելու, թե ինչի համար ես ուզում դուրս գաս, պարզապես պիտի ասես. «Կարելի՞ է դուրս գալ», հասկացա՞ր, դե հիմա վեր կաց ու ասա՝ ո՞նց որ սովորեցրի:

—Սարգիս բիծի, արդեն պրծա...,—կմկմալով ասում է կարմրատակած երեխան:

236

Երբ Կարո պապը գործից տուն էր գալիս ու տեսնում էր կինը տանը չի, ամեն անգամ կատակով տնեցիներին հարցնում էր. «Բա էս դըվո՞րն ա ջրհանդամվել»³¹:

Մի օր էլ 3.6 տարեկան Նարգիզը փողոցից տուն է գալիս ու տեսնելով՝ տատը տանը չի, պապին հարցնում է.

—Պապի՛, Սիրան տատն էս դըվո՞րն ա ջրհանդամվել:

29 Ցելք-անհանգիստ, չարաճճի:

30 Բիծի-դիմելաձև՝ հորեղբայր:

31 Դըվո՞րն ա ջրհանդամվել (վիրավորական արտահայտություն)– ո՞ր է կորել, ո՞ր է գնացել:

237

1990-ականների սկզբներին Մերոժիկի հայրը որսի ժամանակ եղնիկ է խփում բերում տուն, խորոված են անում, ուտում ու բոլորին զգուշացնում է, որ էդ մասին ոչ մի տեղ ոչ մի բան չասեն: Չորս տղաների մեջ վտանգավորը առաջին դասարանցի Մերոժիկն էր, ուստի մի անգամ էլ է հայրը նրան զգուշացնում.

— Հասկացար, Մերոժիկ, հանկարծ չասես հերս եղնիկ էր խփել, բերանիցդ եղնիկի անուն դուրս չգա, թե չէ կգան ու հորդ կրռնեն:

Հաջորդ օրը Մերոժիկը դպրոց է գնում: Դասի ժամանակ ուսուցչուհին Մերոժիկին հանձնարարում է մեկ-մեկ ասել նկարում եղած կենդանիների անունները: Երեխան սկսում է թվարկել.

— Էս արջ ա, էս գայլ ա, էս աղվես ա, — հերթը որ գալիս է եղնիկին, սկսում է կմկմալ — էս..., էս...

— Բա դա՛ ինչ կենդանի է, Մերոժիկ:

— Ասիլ չըտեմ:

— Ինչո՞ւ, չգիտե՞ս:

— Գիդեմ:

— Դե որ գիտես, ասա՛:

— Ասիլ չըտեմ:

— Ինչո՞ւ, — զարմացած հարցնում է ուսուցչուհին:

— Ասեմ որ գաք հորըս բռնենեք, — վախվորած պատասխանում է 7-ամյա երեխան:

238

Լուսիկ տատը Երևանից Շամուտ եկած տղային ասում է.

— Գնա դազերը բախչիցը դո՛ւս արա:

Տղան գնում կանգնում է սազերի մոտ ու ասում է.

— Ա՛յ դազեր, բախչիցը հեղեք: Ձեզ հետ չեմ, բախչիցը դո՛ւս էկեք:

Տեսնում է՝ դուրս չեն գալիս, ինքնիրեն ասում է.

— Ինձ հըմար մին ա, մերըս ա ասըմ:

239

— Երեխաներ, ինչ է նշանակում *բազմոց*, — *q* տառն ամփոփելիս հարցնում է ուսուցիչը:

— Ես ասեմ, — ձեռք է բարձրացնում 7- ամյա Սերոժիկը:

— Ասա՛, տղա՛ ջան:

— Բազմոց նշանակում ա *բոզ*, — *բ* և *զ* տառերի զուգորդումն ույնականացումը սխալ ուղղությամբ է տանում երեխայի միտքը:

— Ձայնդ, այլանդակի մինը, — գոռում է ուսուցիչն ու մի ապտակ տալով՝ դասարանից դուրս է վնդում նրան:

Կարմրատակած Սերոժիկը տուն է գնում ու պապին պատմում ապտակ ստանալու և դասարանից հանելու պատճառը:

— Ղալա՛թ³² ա արել, որ ծեծել ու դուս ա արել: Խի՛, քու դասատուն գիղի ի՛չ, որ սաղ էդ բոգութիննին բազմոցի վըրա յա ըլըմ, — իր մեկնաբանությունն է տալիս պապը:

Հաջորդ օրը Սերոժիկը, դպրոց գնալով, թլիկ լեզվով դասատուին ասում է.

— Բա ասըմ եք՝ սխալ եմ ասըմ, շատ էլ ճիշտ եմ ասել: Պապիկս ասըմ ա՛ սաղ էդ բոգութիննին բազմոցի վըրա են անըմ...

240

Առաջնեկ տղայի լույս աշխարհ գալուց մի քանի ամիս անց գումար վաստակելու հույսով տան տղամարդը մեկնում է խոպան: 3 տարի անց նա Ռուսաստանից վերադառնում է տուն, ու ողջագուրվելուց, ընթրելուց հետո երբ մայրն ուզում է երեխային քնեցնել. խոժոռված դիմադրում է, չի ուզում քնել:

— Շատ ա ուշ, Տիգրան՝ ջան, քնելուդ ժամն անց ա կացել, պառկի՛ քնի:

— Չեմ քնըմ, — խոժոռված նայելով «անծանոթ» մարդուն՝ պատասխանում է երեխան:

— Ինչի՛, այ՛ բալա, ախր շատ ա ուշ:

Ծնվելուց հետո հոր երես չտեսած 3-ամյա որդին, որ մոր միակ

32 Ղալա՛թ – հիմարություն:

թև ու թիկունքն էր մնացել, արտնետած ձգում է մոր փեշից ու լացալուծմամբ պարտադրում, որ «անծանոթ» տղամարդը հեռանա.

— Ման, էդ մարդն ինչի՞ չի գնում մեր տնից, ասա՛ թող շուտ գնա, մինչև չգնա, չեմ քնի...

241

— Ման, փողոցի հատակը ներկում են, — ասում է 3 տարեկան Ջուլիետան՝ տեսնելով գծանշումներ անող մարդկանց:

242

5 տարեկան Նարեն առաջին անգամ գնում է Երևան, հետո երբ գալիս է Կիրովական, հարցնում են.

— Նարե՛ ջան, Երևանում լի՞ֆտ նստել ե՞ս:

— Հա, բայց նստելու աթոռ չկար:

243

— Նարե՛, բա ամոթ չի՞, կանգնում ասում ես՝ դաս չեմ սովորել, — դիտողություն է անում ուսուցիչը 1-ին դասարանցի աշակերտուհուն:

— Ես կանգնած չեմ ասում, նստած եմ ասում, — ուսուցչին «ուղղում է» Նարեն:

244

— Էդ էրկու մետր բոյով էս պուճուր խոհանոցում ո՞նց ես տեղավորվելու ու քնելու, — դիմում է Մարիամը հյուր եկած բարեկամին:

— Հորաքո՛ւյր, ինքը խոմ կանգնած չի՞ քնելու, պատկած ա քնելու, — ասում է 4 տարեկան Նարեն:

245

1-ին դասարանի առաջին օրերին ուսուցիչը դիտողություն է անում անընդհատ աջ ու ձախ թեքվող մի աշակերտի.

— Արմանչո՛, հանգիստ նստի ու լսի ինձ:

— Էդ քոռ աշկըտ մենակ ինձ տեհավ, — նեղսրտած ասում է երեխան:

246

Կոյր տատը թոռան համար գուլպա գործելիս դիմում է 5-ամյա թոռանը.

— Բալի՛կ ջան, գուլբու մըլիցը³³ մի հատը վեր ա ընգել, արի տեղը գըձի:

Թոռը գալիս է տատի չորս կողմը ման է գալիս ու հարցնում է.

— Ու՛ր ա, տատի՛, ո՞րդի ա վեր ընգել, գըղնըմ չեմ...

247

5-ամյա Արենի համար մորաքույրը պաղպաղակ է առնում: Որ մի քիչ քայլում են, մորաքույրն ասում է.

— Արեն ջան, բեր մի քիչ կծեմ, էլի:

— Մարի՛ջ մորաքույր, ավելի լավ ա էրկու անգամ լիզես, քանց թե կծես, — պատասխանում է Արենը:

248

5-ամյա թոռանը Սարո պապը ամեն անգամ «կոզլիկ ջան» էր ասում: Մի օր էլ նեղսրտած թոռը պապից բացատրություն պահանջեց:

— Գիտե՛ս՝ ինչի եմ կոզլիկ ասում, Կարեն ջան, կոզլիկը ուլիկն ա, բայց որ ուլը մեծանում ա, ասում են՝ կազյոլ, — կատակի տվեց պապը:

Մի քանի օր անց պապը տնից դուրս գալիս կրկին թոռանը դիմեց՝ ասելով.

— Հաջող, կոզլի՛կ ջան:

— Հաջող, կազյո՛լ ջան, — անմեղ տոնով պատասխանում է թոռը:

249

7 տարեկան Արամը մի օր հորը հարցնում է.

— Պանայ, որ դու մեռնես, էդ մատիդ մատանին ո՞ւմ ես տալու:

— Դե քանի որ դու ես փոքրը, ուրեմն մատանիս քեզ եմ տալու:

Օրեր անց երրորդ հարկի իրենց լուսամուտները ներկելիս տղան հարցնում է.

33 Միլ-շուղ:

- Պապ, որ ըստեղից ընկնես, ինչ կըլնես:
- Ի՞նչ պիտի ըլնեմ. կմեռնեմ, էլի:
- Դե որ կմեռնես, մատանիդ տուր ինձ...

250

50-ականների սկզբներն էին: Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) կենտրոնում Վասիլ բիձեն խոզ էր պահում: Մի օր նա խնդրում է հարևանի 4-5 տարեկան տղային, թե՛

— Սարո՛ ջան, մի գնա մերունին³⁴ գոջիների հետ դեսը քշի բեր:

Երեխան պատրաստական գնում է ու քիչ անց մայր խոզից վախեցած՝ շուտ ետ է գալիս: Հարևանը հարցնում է.

— Սարո՛ ջան, քշեցիր բերի՛ր:

— Վասիլ՛ պապի, մերունն ասավ՝ դու գնա, մենք էսս կգանք, — պատասխանում է երեխան:

251

Մարդ էր մահացել:

— Ա՛յ Շուրա, հլա նայի՛, մեզանից ջահել մեռել ա, պարզվում ա՛ մեր հերթն ա գալի, — ասում է ամուսինը կնոջը:

— Պապի՛, — միջամտում է 13-ամյա թոռ Արամը, ընչի՛, չգիդեի՛ր, որ ձեր հերթն ա գալի...

252

Գերեզմանոցում 3.6 տարեկան Կարենը ուշադիր նայեց գերեզմանաքարերին ու ասավ.

— Պապի՛, բա դու յե՛կի ես ըստեղ գալու, — ասպա պապի պատասխանին չսպասելով՝ շարունակեց, — պապի՛, որ դու էլ ըստեղ գաս, ես էլ ե՛մ ծաղիկներ բերելու...

253

Վանաձորի դպրոցներից մեկի տնօրենը ուզում է՝ իր ծանոթի՝ 7 տարին չլրացած երեխային 1-ին դասարան ընդունել և ընդունակությունը ստուգելու համար հարցեր է տալիս.

34 Մերուն – մայր խոզ:

— Բալիկ ջան, ենթադրենք տասը խնձոր ունես, որ էրկուսը ինձ տաս, քու մոտ քանիսը կմնա:

— Իննը, — պատասխանում է տղան:

Հուսախաբ տնօրենը թե՛

— Տղա՛ ջան, հըլա լավ մտածի:

— Խի՛, մինն էլ ես ուզըըըմ... — անկեղծ հարցնում է երեխան:

254

Երկու տարեկան Էդմոնը գիշերանոթին մի քիչ երկար է նստում:

— Հը՛, էսքան ժամանակ չիշ չարի՛ր, — հարցնում է մայրը:

— Մամ, էլեմենտս նստել ա, — ասում է Էդմոնը:

255

Առաջին դասարանում ուսուցիչը հարցնում է.

— Երեխաներ, ո՞վ կարող է ասել, ինչպիսի՞ ջերմաչափներ կան:

Մեկն ասում է՝ մարմնի ջերմաչափ, մեկը՝ ջրի, մեկը՝ օդի: Տիրայրը, որ տեսել էր պապի օդի քաշելը, ձեռք է բարձրացնում, թե՛

— Արաղի ջերմաչափ...

256

3 տարեկան Դավիթը ընկնում է, ոտքը ցավեցնում ու չի կարողանում լավ քայլել: Ռենտգեն ստուգման տանելիս հորեղբայրն ասում է.

— Դավի՛թ ջան, քեզ տանում եմ նկարեն:

Պոլիկլինիկայում երեխային ուզում են պատկեցնեն ռենտգեն սեղանին, որ նկարեն, բայց Դավիթը դիմադրում է. չի ուզում պատկել: Վերջը մի կերպ հարմարեցնում, առանց պատկելու նկարում են: Տանը հարցնում են.

— Դավի՛թ ջան, ինչի՞ չէիր ուզում պատկես:

— Ո՞նց պատկեի. պատկած դեմքս չէր էրևում...

257

Պապի՛, կգանս՝ գնանք մեր տուն, — հարցնում է թոռը:

— Չէ, բալիկ ջան, մեղուներին սրսկելու եմ, հետո կգամ:

— Ո՞նց, սաղ մեղուներին էլ սրսկիլ տենա:

— Հա՛, բա ճնց::

— Իյասա՛ս, բա ճնց տես ըտքանի՛ն բռնի ու մին-մին սրսկի...

258

Տավուշի գյուղերից մեկի դպրոցի տնօրենը առաջին դասարանում սովորող իր ազգականի երեխայի հոգու հետ խաղալու համար ասում է.

— Տղա՛ ջան, հըլա ասա /:

— Ասիլ չըտյեն, — անհարմար զգալով՝ վրա է բերում երեխան:

— Քեզ ասում եմ՝ ասա /, — փոքր-ինչ ձայնի հնչերանգը իբր բարձրացնելով ու խստացնելով՝ կրկնում է տնօրենը:

— Ասիլ չըտյեն:

— Խի՛, այ՛ բալա::

— Ասեմ, որ դուն էլ յետ դառնաս ասես՝ ծակըս կի՞...

259

— Մսին ռուսերեն ի՛նչ են ասում, — հարցնում են 2.10 տարեկան Անիին:

— Տավարեղեն, — պատասխանում է Անին:

260

— Անի՛, տո՛ն արի, — ասում է մայրը:

— Ման՛, մի էրկու հատ էլ շունիկի հետ հաչամ, նոր կգամ, — ասում է Անին:

261

Հայրը մտքում գիրք էր կարդում:

— Պապա՛, — ասավ 2.10 տարեկան Անին, էլի խոսալով կարդա (իմա՛րարձրաձայն-ԱՍ):

262

— Էդ ի՛նչ վերաբերմունք ա, չես լսում ինձ, — դիտողություն է անում մայրը:

— Ես քու խափանն եմ³⁵, — պատասխանում է Անին

35 Քու խափանն եմ կամ ես քու խափանը չունենմ – ժողովրդախոսակցականում

263

3-ամյա Անին հորը դիմեց թե՛

—Պապ, հիշում եմ, որ դու պուճուր էիր, կայլասկով ման էի անում:

264

Մի օր 3.3 տարեկան Անին մորը ուշադիր նայելուց հետո ասավ.

—Մամ, աչքիս երևում ա, որ դու նիհարել ես:

265

—Էսա ամուսնանալու եմ, երեխա ունենամ,—ասավ 3,5 տարեկան Անին:

—Երբ,—հարցրինք:

—Ապրիլի 5-ին:

—Ո՞ր տարին:

—Հարսի տարին,—պատասխանեց Անին:

266

—Ամսի 18-ին քեռին գալու ա, գիտեմ, որ քու ծննդյան օրն ա:

—Դե հիմի շնորհավորեք, որ էս ժամանակ չմոռանաք,—ասավ 3.11 տարեկան Անին:

267

—Պապ, ինչի՞ չես քնում,—հարցրեց 4,5 տարեկան Անին:

—Մտածում եմ:

—Պապ, դու քնի, ես կմտածեմ:

268

Ռուսաստանում տանտերը գերմանացի էր:

—Անի՛ ջան, ի՛նչ լավ ա, գերմաներեն կսովորենք,—ասում է մայրը:

—Մամ, ի՛նչ լավ ա, ես արդեն կարող եմ իրանց հետ հայերեն խոսել,—ոգևորված մոր խոսքը շարունակում է 5-ամյա Անին:

կիրառվող դարձված՝ քո հավերք չունեմ, քո սիրտը չունեմ, քեզ նման պարապ չեմ իմաստով:

269

Ամերիկայի մասին հաղորդում էր: 4.5 տարեկան Անին թե՛
— Էս երբ պետք ա ճամփեքը բացվի, գնամ Ամերիկա:
— Բա մե՞նք, Անի՛, — հարցնում է մայրը:
— Ո՞նց չգնամ, ամուսնանում եմ:
— Դե լավ, մենք էլ կգանք:
— Հան, գաք որ մարթիս ջղայնացնենք...:

270

— Հետաքրքիր ա՛ մարդիկ ղնց են ծնվում, — մի օր հարցրեց 6 տարեկան Անին: — Ման, մարդը մարդուց ծնվում ա ծավված, հետո հաց ա ուտում, ծավերը բացվում են, ու մեծանում ա, չէ՞:

271

Երեք տարեկան երեխան բաժակի մեջ տեսնելով տատի ար-
հեստական ատամները, զարմացած հարցնում է մորը.
— Ա՛յ ման, էս տատի ատամներն ա, չէ՞, բա լիզուն ու՛ր ա դրել:

272

— Գնա մի տասը հատ կրիշկա առ բի, — ասում է մայրը 9 տա-
րեկան տղային:
— Էլ յետ էն էժանիցը՞, — դաչնիկների³⁶ ներկայությամբ հարց-
նում է երեխան:

273

Մանկապարտեզում կրոնի դասին ներկայացվում է աշխարհի
ստեղծումը.
— Աստված առաջին օրը ստեղծեց երկիրըն ու երկինքը, երկ-
րորդ օրը..., երրորդ օրը՝... և 7-րդ օրը հանգստացավ, — օրվա
դասն է ներկայացնում Կամոն:
— Անուլիկ, բա դո՞ւ ինչ էիր անում, — աղջկան է հարցնում մա-
րը:
— Ես գլուխ էի պահում:

36 Դաչնիկ – հովել:

— Փորձիր պատմել, տեսնեմ՝ ինչ ես հիշում այդ դասից:

— Հիշում եմ, որ Աստված 7-րդ օրը հանգստանում է, — ասում է Անուիկեր:

274

Պապը տեսնում է՝ 4-րդ դասարանցի թոռնիկը, տետրը բացել, քիթը կախել է:

— Հը, ինչի՞ ես քիթըդ կախել, հարցնում է պապը:

— Դասատուն շարադրություն ա տվել քու մասին՝ «Իմ պապը», չգիտեմ՝ ինչ գրեմ:

— Ո՞նց թե, ուրեմը քու պապի մասին չես կարրւմ գրե՞ս, ես ասեմ, դու գրի: Գրի. «Իմ պապը 4 տարի նեմեցի³⁷ դեմ կովեց, գերի չընգավ, բայց կովիցը տուն գալուցը յեդը էսա 40 տարի ա՝ տատիս ձեռին գերի ա դառել ու պոծում³⁸ չկա»:

Թոռնիկը գրում, ու հաջորդ օրը դասարանում ոգևորված բարցրածայն կարդում է՝ հարուցելով ուսուցչուհու և ամբողջ դասարանի սրտաբուխ ծիծաղը...

275

Տղան Ռուսաստանում էր, մայրը գալիս է խնամոնց տուն՝ հարսին ու թոռանը տանելու:

— Բրդերըս լվանալու ա, պարտադիր չի մտվ ճաշ ուտի, — ինքնիրեն խոսում է աղջկա մայրը, — ինչ մենք կուտենք, խնամին էլ ինչ կուտի:

— Տան, — հարցնում է 4 տարեկան Աշոտիկը, — խնամին ա ուժե՞ր, թե՛ թշնամին:

276

Աշակերտը մոռացել էր ձի բառից հետո բուրբ դնել:

— Գևորգ, ձիու վրա ինչ պետք է դնել, — հարցնում է ուսուցչուհին:

— Թամբ, — ինքնավստահ պատասխանում է երեխան:

37 Նեմեց – գերմանացի:

38 Պոծում – փրկություն:

277

1950-ականներին Դսեղում 6 տարեկան Սոսը մի քիչ քնում վեր է կենում, դիմում մորը, թե՛

— Ման, իմ հրսանիք ըլելու վախտը նոր ա գալու՞, թե՞ անց ա կացել:

278

Տասնամյա Միլենայի քեռու աղջկան ծննդատնից նոր էին տուն բերել: Որ լուրը թողը հայտնում է պապին, պապն ասում է.

— Դե լավ ա որ տուն են բերել, էրեխեն իրանց տանը մուշ-մուշ կքնի իրա մամայի ծոցին:

— Ա՛յ Սերգո պապիկ, էս ո՞ր դարն ա, որ էրեխեն մամայի ծոցին քնի, հիմի մամաների ծոցին պապաներն են քնում, էդ քու ժամանակ էր, որ էրեխեն մամաների ծոցում էր քնում:

279

Հիվանդանոցից նոր ծնված Հասմիկին տանում են տուն: ու տանը լողացնելիս 3 տարեկան եղբայրը Արայիկը ուշադիր հետևում է նորածին քրոջը լողացնելուն ու ոչ մի բան չի խոսում:

Հաջորդ օրը մորական տատը հարցնում է թոռանը.

— Հը՛, ո՞նց էր, սիրուն է՞ր քույրիկդ:

— Ա՛յ տատիկ, էնքան պուճուր էր՝ դեռ պուպուլ էլ չէր դուրս եկել:

280

Չորսամյա Հրաչը քրոջ հետ մտած է լինում զուգարան: Քիչ անց դուրս է գալիս ու վախեցած ասում.

— Ա՛յ մամա, Միլենայի պուպուլը պոկվել էր, ի՞նչ ենք անելու:

281

Չորսամյա Արմինեն բարձրանում է ծառը: Տատը տեսնում, անհանգստանում է.

— Ծառիցը իջի՛, ջանի՛դ մատաղ, բանը մի անգամ կըլի, վեր կընգնես:

Թողը չի լսում ու ծառից ընկնում է, բայց բան չի լինում: Արմինեն նորից է ծառը բարձրանում, անհանգստացած տատը էլի է խնդրում.

— Բանը մի անքամ կըլի, ջանի՞դ մեռնեմ, իչի՛ ցած:

— Տատի՛ ջան, «*բանը մի անքամ կըլի*»-ն արթեն էլել ա, վախիլ մի:

282

Դասատուն հարցընըմ ա մի էրեխի.

— Տղա՛ ջան, կո՞վն ի՞նչ ա տալի:

Բա թե՛

— Հարու³⁹:

283

Դսեղում Գիքորի դերասան ընտրելիս երեխաներից մեկին Սոս Սարգսյանը հարցնում է.

— Ո՞ր դասարանում ես սովորում, բալի՛կ ջան:

— Մեր դասարանըմն եմ սըվորըմ, — պատասխանում է երեխան, որն էլ դառնում է Գիքորի դերակատարը:

284

Թոռանըս՝ Նելիիս տղին խաղացնելիս ասի.

— Էսա տատին ճուճուլըտ կուտի..

Թոռըս լաց ըլելով՝ ասավ.

— Տատի՛ ջան, իմը *մեխկ* ա, պապայինը կեր, էլի:

285

Տատը հրճվանքով խաղացնում էր 3-ամյա թոռանը՝ Ահարոնին ու հետն էլ խոսում.

— Տատը քեզ մատաղ ըլի, Ահարո՛ն ջան, պուպուլըտ ուտի տատին, Ահարո՛ն ջան...

Ահարոնը թընգթընգալով ասում է.

— Տատի՛ ջան, իմը *պուճուր* ա, պապայինը կեր, էլի...

(Նահապետական սովորույթներով ապրող Արփիկ տատը հանկարծակիի է գալիս, ապա խնդրում, երդվել տալիս աղջկան, որ մինչև մոր մահը այդ մասին ոչ մեկին չպատմի – ծանոթությունը՝ սասցողի)

39 Հարու տալ – եղջյուրներով խփել:

286

—Ալեքս ջան, գնում եմ Հայաստան, քեզ համար ինչ բերեմ,— հարցնում է պապը:

—Մանվել պապիկ, ինչ կպատահի, կբերես,— պատասխանում է 8 տարեկան մարսելաբնակ թոռը:

287

—Հայրդ ինչ է աշխատում, բալիկ ջան,—1-ին դասարանցի երեխային հարցնում է ուսուցիչը:

—Փող,— ասում է երեխան:

288

—Պապադ ինչ ա աշխատում,— հարցնում են 5-ամյա երեխային:

—Գըռդոնչի⁴⁰, — պատասխանում է նա:

289

Սեպտեմբերին մի քանի օր դասի գնալուց հետո առաջին դասարանցի Գայանեն, տանը նեղսրտած ասում է.

—Դպրոցում ուրիշ լեզվով ենք խոսում, տանը՝ ուրիշ:

—Ո՞նց, — զարմանում են տնեցիները:

—Տանը ասում ենք *սումկա*, դըպրոցը՝ պայուսակ, տանը ասում ենք *տելելիզոր*, դըպրոցը՝ հեռուստացույց, տանը ասում ենք *խալադիլնիկ*, դըպրոցը՝ սառնարան, — բացատրում է երեխան:

290

Ընտանիքում երբ խոսում էին Խաչատուր Աբովյանի անհայտանալու մասին, փոքրիկը միջամտում է.

—Տատի՛, Խաչատուր Աբովյանը բա ձեռի հեռախոս չունե՛ր, որ գանգեին, տեղն իմանային...

40 Գռդոնչի – անձնական ավրոմեքենայով փող աշխատող, գողոն անել-փափախ անել:

291

— Պահպ, էգուց մեր ժողովն ա, կգամս, — հորն է դիմում 2-րդ դասարանցի Վահագր:

— Հան, կգամ, բայց ո՞ր հարկում ա, ո՞նց գտնեմ ձեր դասարանը:

— Երրորդ հարկում ա:

— Երրորդ հարկի ո՞ր դասարանում:

— Մեջտեղի:

— Մեջտեղի ո՞րը:

— Պահպ, մեր դռան ոռչկեն⁴¹ ներսից ջարդած ա:

292

— Դե հիմի ասե՞ք, թե որրդ ինչ ա դառնալու, — շուրջը հավաքված թոռներին է դիմում ապարանցի պապը:

Մեկն ասում է՝ դասատու, մեկը՝ օդաչու, երրորդը՝ ինժեներ...

— Վահան՞ ջան, բա դո՞ւ ինչ ես դառնալու, — վեց տարեկան թոռանն է դիմում պապը:

— Աբարանցի, — պատասխանում է փոքրիկը:

293

9-ամյա Սոֆիայի ատամը պլումբել էին: Հետ դառնալիս հորը հարցնում է.

— Հայրի՛կ, ի՞նչ տարբերություն նյութի և հոգու միջև...՝ պլումբի և ծաղկի միջև...

294

6 տարեկան Հայկը հորը բացատրում էր.

— Լսի՛, հայրի՛կ, ինձ թվում ա՝ ամենամեղքը փոքրիկ երեխաներն են, մեկ էլ ծերերը:

— Ի՞նչի՞:

— Որովհետև ինչ ուզում են, չեն տալիս, ինչ ցանկանում են, չեն կարողանում անել

41 Ռուչկա (ռուս.) – բռնակ:

295

—Միլենա, չարություն մի արա, թե չէ կծեծեմ,—ասում է հայրը:

—Պանայ, հիմա լացեմ, թե՛ հետո,—հարցնում է 2.5 տարեկան Միլենան:

296

Տատն ուզում է հեռուստաալիքը փոխել, Միլենան դժգոհում է.
—Տատիկ, մի՛ փոխի. իմ գովազդն ա:

297

Մայրը՝ Մարիամը և հարևանուհին դռան դիտանցքից նայում են հարսանիքը: 2,5 տարեկան Միլենան դժգոհում է.

—Թողեք մի քիչ էլ ես թաքուն նայեմ հարսանիքը, հա՛...

298

Հեռուստացույցի էկրանին կինոնկարը պատրաստողների անուններն էր ներկայացվում:

—Յարար կինոն վերջացավ, թե նոր ա սկսվում,—ինքնիրեն խոսում էր ատամնաբույժ տատը:

—Տատ, չես տեսնո՞ւմ՝ տատերը վերև են բարձրանում, ուրեմն՝ վերջացավ,—ասածը հիմնավորում է 3 տարեկան Ստեփան թոռնիկը:

299

3-ամյա Մարիանան ուզում է սեղանից կարագ վերցնել: Տատը դիտողություն է անում.

—Մարիանա, իսկ դու մայրիկիդ հարցրե՛լ ես, գնա հարցրո՛ւ:

Փոքրիկը մոտենում է մորը, թույլտվություն խնդրում, բայց մայրը մերժում է:

—Թե որ չէ էր ասելու, էլ ինչի՞ հարցրի,—փնթփնթում է Մարիանան:

300

Հեռուստատեսությամբ համբուրվելու թունդ տեսարան է ցուցադրվում: Մոր հետ Կարմիրից (այժմ՝ Գեղարքունիքի մարզ) Երևանում՝ մորաքրոջ տանը, հյուրընկալված և նոր վիրահատված

3.8 տարեկան տղան համակ ուշադրությամբ հեռուստասերիալն է նայում:

— Փոխենք ալիքը, զգվում եմ, — տեսնելով երեխայի ակնապիշ հայացքը՝ խիստ տոնով ասում է մորաքույրը:

— Քրիստինն մորաքույր, ես չեմ զգվում, թող մնա, էլի, — խնդրում է երեխան:

301

— Հասմի՛կ, շուտ տուն արի՛, ուշ ա, — կանչում է մայրը:

— Ման, բա ո՞նց անենք, որ էս լուսինն էլ հետըս տուն բերեմ, մութ ա. մեխկ ա, — ասում է չորսամյա աղջիկը:

302

— Որ դպրոց գնաս, ի՞նչ ես ստանալու, — հարցնում են 2.5 տարեկան Գայանեին:

— Ծոյլիկ եմ ստանալու:

— Բա որ մեծանաս, ի՞նչ ես դառնալու:

— Հավաքարան, — պատասխանում է երեխան:

303

— Հայերեն ո՞նց կասեն՝ *Պարօմ սկաժու*⁴², — հարցնում են փոքրիկ Դավիթին:

Դավիթը չի պատասխանում, քիթը կախում է, ապա վերջապես ասում է.

— Համբերի, *հեպրո կասեմ*:

304

4 տարեկան Էդգարը գալիս ա թեյ ա ուզում: Տատն ասում ա՝

— Նստի՛, Ժորա՛ պապիկի բաժակով խմի:

— Էդ բաժակով չեմ ուզում:

— Ինչի՛, Էդգա՛ր ջան:

— Էդ բաժակը *պապիկոյր* ա, ուրիշ բաժակով տուր:

42 Ռուսերեն է – հետո կասեմ:

305

- Էնքան վատ էրագ եմ տեսել, տատի՛, վախելու էրագ էր:
- Ի՛նչ ես տեսել, Աստղի՛կ ջան, պատմի՛ր:
- Տատի՛կ, տեսա՛ վախում եմ, ալիքը փոխեցի:

306

- Աստղիկը մտավ խոհանոց ու ասավ՝
- Պա՛, էս ի՛նչ համով հոտ ա վերաբերում:

307

- Աշնան ուժեղ քամիներն էին, 7-ամյա Գոռը դռան աստիճաններից նստած էր, մեկ էլ թե՛
- Դուրը ծածկեք, չեք տեսնում՝ սկվազնյակ⁴³ ա անում...

308

- 3.6 տարեկան Սարգիսին հարցրինք՝
- Ի՛նչ ես դառնալու:
- Պատասխանեց.
- Դառնալու եմ ընկեր Նունե:

309

- 3-ամյա Արմինեն հեռուստացույց է նայում: Ցույց էին տալիս ԱՄՆ-ում Ջոն Ռիդին դատապարտելը: Արմինեն լացակումած ասում է.
- Տարեք մեր տելեվիզորը փոխեք, մերը լավը չի:
- Ինչի՛— հարցնում են տնեցիները:
- Մերով մարդ են սըպանում:

310

- Գերեզմանոցի մոտ էր 5-ամյա Վիտյայենց տունը: Մարալիկի հարուստներից մեկը թաղումից հետո դիմում է հեռվում կանգնած հնամաշ շորերով ու մաշված կոշիկներով երեխային ու ասում է.
- Վիտյա՛ ջան, լավ կնայես՝ ծաղիկներին ձեռք չտան: Որ լավ նայես, քեզ կոշիկ կառնես:

43 Սկվազնյակ (ռուս.) – միջանցիկ քամի:

— Արարան՝ ձաճյա, — ասում է երեխան, — մամա էլ կոշիկ չունի, իրա կոշիկներն էլ են մաշվել...

311

Ամեն անգամ տղայիս՝ 4-ամյա Բագրատի կողքին պառկում էի ու հարցնում.

— Էսօր էրազ տեսել ես:

— Հա:

— Դե պատմի՛, լսեմ:

— Ման, դու որ կողքիս պառկում ես, էրազներս փոխում ես...

312

Քույր ու եղբայր պառկել, պատրաստվում են քնելու, հեռուստասերիալով պաչպչվելու թունդ տեսարան է ցուցադրվում: 4-ամյա Տիգրանը բոթում է քրոջը, թե՛

— Ախշի՛, էսա դրանք էրեխա կունենան:

313

— Ման, դու տնից տեղ մի գնա, հս՛, — խնդրում է 4-ամյա Տիգրանը:

— Ի՛շ, տղա՛ ջան, — հարցնում է մայրը:

— Կարոտս տան մեջ քեզ ա ման գալի:

314

Մի անգամ հյուր ենք գնացել ու սեղանին կոկա-կոլա, պեպսի-կոլա և այլ ըմպելիքներ են դրված: Մեր երեխասներին արգելել ենք դրանցից խմել: Ինձ հյուրասիրում են ու ես մեխանիկորեն խմում եմ.

— Հալա՛ն ըլնի, *աղողջ* խմեցիր, — սրտնեղած ու մանկական առողջանությանը ասում է 4-ամյա Տիգրանը...

315

Փոքրիկ Արսենը հիվանդացել էր: Մինչ խառնված տնեցիները մտածում էին՝ ինչ դեղ ու ճար անեն, որ շուտ լավանա, հիվանդն իր դեղատոմսն է առաջարկում.

— Ման, հիվանդությունս հավկիթ կուզե, — ասում է 7-ամյա Արսենը:

316

3-ամյա Վիկտորյան դիմում է մի քանի ամիս բացակայելուց հետո հյուր եկած մորքուրիին.

— Անո՛շ մորքուր, աչքերս քեզ էնքան էին կարոտել...

317

Քաղաքում ապրող 3-ամյա Վիկտորյան գյուղում ապրող տատի տուն է գնում ու բակում կենդանի հավ տեսնելուց հետո ոգևորված պատմում է մորքուրին.

— Մորքո՛ւր, գիտե՛ս՝ գյուղում ես *լյուդի* (իմա՝ կենդանի) հավեր եմ տեսել:

318

— Ի՛նչ ես ուզում դառնաս, տղա՛ ջան, — հարցնում եմ 11-ամյա Ոսկանին:

— Ֆիզիկոս:

— Բայց ինչի՛ անպայման ֆիզիկոս:

— Որ էնենց նյութ ստեղծեմ, վերևից թափեմ թուրքերի վրա, իրանք մեռնեն, մեր վանքերը, բերդերը, գետերը, լճերն ու անտառները մնան մեզ:

319

— Ի՛նչ ես ուզում դառնաս, բալի՛կ ջան, — հարցնում եմ 5-ամյա երեխային:

— Ժողովուրդ, — պատասխանում է երեխան:

320

Գրատախտակին գրելիս կավիճը վերջանում է, ուսուցիչը ուղարկում է ուսուցչանոց՝ կավիճ բերելու: 3-րդ դասարանցի Խաչիկը մտնում է ուսուցչանոց և ասում է.

— Մի հատ ռուսերենի կավիճ կտո՞ւմ:

— Խաչի՛կ ջան, — ասում եմ, — ռուսերենի կավիճը վերջացել է, մի հատ հայերենի կավիճ կա, տար տես՝ ռուսերենի դասին կգրի՛:

Խաչիկը մտնում է դասարան ու փորձում գրատախտակին գրել: Որ տեսնում է՝ գրեց, ուրախ բացականչում է.

— Վայ, էս ինչ լավ ա, հայերենի կավիճը ռուսերենի դասին էլ գրեց...

321

5 տարեկան Արմենակ թոռնիկը Օֆելյա տատիկի ծննդյան օրվա համար բացիկ ա ուզում տա, մորն ասում ա՝ ես ասեմ, դու գրի բացիկի վրա: Գրի՛, «Տատի՛կ ջան, շնորհավորում եմ քո ծննդյան տոնը, ցանկանում եմ քեզ առողջություն, երջանկություն և կանաչ ճանապարհ դեպի կապույտ երկինք: Բո թոռնիկ Արմենակ»:

322

3-ից 7 տարեկան յոթ թոռներով որոշում են իրենց Օֆելյա տատի ծնունդի համար փող հավաքեն, տան տատին: Ամեն մեկը իր պահուստից 10, 20, 50 դրամ է հանում, ու մի կերպ 100 դրամ է հավաքվում: Տատի անունը կրող մեծ թողը, թոռների «շքախմբի» գլուխն անցած, մոտենում է տատին և հավաքված 100 դրամը մեկնելով՝ ասում է.

— Տատի՛ ջան, ան, ծնունդիդ համար մի լավ ծախսի: Բայց հանկարծ *ամբախ-զամբախ*⁴⁴ բաներ չառնես:

323

Օֆելյա տատը վերնիսաժից 5-ամյա Աստղիկ թոռան համար մի անձրևանոց է առնում, բայց մի քանի օրից հետո էլ չի բացվում, ջարդվում է: Աստղիկը քիթը կախ տատին ասում է.

— Տատի՛, էլի քեզ խաբել են. *ժամկեպանց* հովանոց են տվել...: (Մթերք առնելիս տանն անընդհատ տատին զգուշացրել են, որ ժամկետանց չառնի – ծանոթությունը՝ ասացողի)

324

Քիմիայի դասին ուսուցիչը դիմում է երեխաներին.

— Ո՞վ կարող է թթուների անուններ ասել:

44 Ամբախ-զամբախ – անիմաստ, դատարկ ու անմիտ, ափեղ-ցփեղ:

- Ես ասեմ, — ձեռք է բարձրացնում աշակերտներից մեկը:
- Ասա՛, տղա՛ ջան:
- Քյալամի⁴⁵ թթու, խիարի⁴⁶ թթու, դանձիլի⁴⁷ թթու...

325

Լոռու գյուղերից մեկի դպրոցում հայոց լեզվի դաս է լինում: Ուսուցիչը հարցնում է.

- Կապերի ի՞նչ տեսակներ գիտեք:
- Ես ասեմ, — ձեռք է բարձրացնում երեխաններից մեկը:
- Ասա՛, տղա՛ ջան:
- Ֆորթակապ, քարկապ, գրկապ, գելկապ⁴⁸...

326

— Էսօր ի՞նչ ես կերել, — աշխատանքից տուն գալով՝ հարցնում է հայրը տղային:

- Ծեծ, — անկեղծանում է երեխան:

327

7-ամյա Արմանը, առաջին դասարան գնալու առաջին օրը դպրոցից տուն գալով, ասաց.

- Մեր դասարանում մի տղա կա, իրա անունը սխալ էին ասում:
- Ո՞ւց, — հարցնում են:
- Անունը Սամվել ա, բայց բոլորը Մանվել էին ասում:

328

— Տասի՛, կենդանիները էրեխեք ունենում են, — հարցնում է 8-ամյա Վահեն:

- Իհարկե՛ն:

45 Քյալամ – կաղամբ:

46 Խիար – վարունգ:

47 Դանձիլ – վայրի տխի մի տեսակը, որ օգտագործվում է թթու դնելու համար:

48 Գելկապ – գիշերը դրսում մնացած ընտանի կենդանիներին գայլից պաշտպանելու համար հատուկ աղոթք էր ասվում, որը կոչվում էր գելկապի աղոթք: Աղոթքն իբր օգնում էր գայլի բերանը կապելու:

— Տատի՛, եթե կենդանիները չեն ամուսնանում, բա ո՞նց են էրե-
խեք ունենում...

329

Առաջին դասարանում տատերը նոր սովորող Գևորգը, որ գյու-
ղից նոր էր քաղաք տեղափոխվել, տառ առ տառ կարդում է բառը.

— Գ+ու+լ+պ+ա:

— Ի՞նչ էղավ, — հարցնում է ուսուցիչը:

— Ջորաբ⁴⁹, — պատասխանում է երեխան:

330

Գյուղ հյուրեր էին եկել, և տանտերերը պատվում էին: Նրան-
ցից մեկը, դեղձը մեկնելով 2 տարեկան Մարգարիտին, հարցրեց.

— Դեղձ կերել ես, բալի՛կ ջան:

— Չէ՛, չեմ կերել, բայց *տեղեկիզորով* տեսել եմ, — անկեղծանում
է Մարգարիտը :

331

— Ո՞վ է սովորել դասը, — հարցնում է տարրական դասարանի
ուսուցչուհին:

Երեխանների մեծ մասը ձեռք է բարձրացնում: Գևորգն էլ է ձեռք
բարձրացնում:

— Գևոր՞գ, արի՛ պատասխանիր, — ասում է ուսուցչուհին:

— Չգիտեմ:

— Տղա՛ ջան, բա ինչի՛ էիր ձեռք բարձրացրել:

— Տեսա՛ բոլորը ձեռք են բարձրացրել, ես էլ բարձրաց-
րի, — պատասխանում է երեխան:

332

Մեկն ասում ա.

— Մի հատ ախալքալաքցին իրեք հատ արարանցի ա:

— Խի մի ախալքալաքցին վեցոտնանի ա... — զարմացած
հարցնում ա 11-ամյա ապարանցի երեխան:

49 Ջորաբ – բրդյա գուլպա (Վայոց ձոր, Հորս):

333

— Ուզում եմ ամուսնանամ ու շատ էրեխա ունենամ,— մի օր իր որոշումն է մասսայականացնում 5 տարեկան Ավետը:

— Բա ո՞նց ես էրեխա ունենալու,— հարցնում են:

— Կնիկ եմ բերում, փորը մի լավ փչում եմ ու 7-8 էրեխա եմ ունենում:

— Բա ո՞նց ես փչելու, Ավետ ջան,— հետաքրքրվում է հարևանուհին:

— Ո՛նց, ո՛նց. *սասո՛սուլ*⁵⁰, ո՛նց,— իր «ծրագրերը» էլ ավելի է մանրամասնում Ավետը:

334

— Ինչ ես ուզում դառնաս, բալի՛կ ջան,— հարցնում են 5-ամյա երեխային:

— Զոհված ազատամարտիկ,— պատասխանում է երեխան:

335

Հրանտ Մաթևոսյանի 80-ամյա հորեղյանի կապակցությամբ Ահնիձոր գնացող խմբում է լինում նաև Գուգարաց թեմի առաջնորդ տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը: Մոավորականների խումբը լինում է Ահնիձորի դպրոցում:

— Սա ո՞ր դասարանն է,— տնօրենին հարցնում է արքեպիսկոպոսը:

— Էս առաջին նստարանի երկու աշակերտը առաջին դասարանն է, հետևի երկուսը՝ երկրորդ, նրա հետևինը՝ երրորդ, վերջինն էլ՝ չորրորդ:

— Երեխաներ, ձեզանից ո՞վ կարող է «Հայր մերը» ասել,— հարցնում է սրբագանը:

— Ես ասեմ,— անմիջապես ձեռք է բարձրացնում առաջին դասարանցիներից մեկը:

— Ասա՛, տղա՛ ջան:

— Հերբս Գարեճիհնն ա, մերըս՝ Վարթիշա՛ղը...

50 Նասուս (ռուս.)–օդամղիչ սարք՝ պոմպ:

336

— Սենիկ պապի, կոպեկ կտանս՝ գնամ մարոժնի⁵¹ անեմ, — ասում է 4-ամյա Սաթենիկը:

— Սաթենիկ ջան, 8 կոպեկ ա մոտս, մարոժնի չեն տա. էրկու կոպեկ պակաս ա:

— Կտան, պապի՛, ինքն էլ թող մի հատ կծի, նոր տա:

337

— Պապի՛ ջան, էս ծծովի կանֆետը⁵² ան կեր, — ասում է 5 տարեկան Սաթենիկը:

— Սաթենիկ ջան, էս մի կոնֆետը ենթադրենք դնեմ մի՛ ատամիս տակ, դե մեկն էլ տո՛ւր, որ դնեմ էն մյուս ատամի տակ, որ կարողանամ ծծեմ, — թոռան հոգու հետ խաղալու համար ասում է պապը:

— Սենիկ պապի, դու էլ մի դնի ատամիդ տակ, մեջտեղը դիր, էրկու կողմն էլ կգնա, — խորհուրդ է տալիս Սաթենիկը:

338

— Ես քուրիկ եմ ուզում, կամ՝ ապերիկ, — ասում է 2.6 տարեկան Արփին:

— Հիմա՝ քուրիկ թե ապերիկ:

— Մեկ ա, քուրիկ կամ ապերիկ:

— Բա ո՞նց կծնվի, նրբ կծնվի, Արփի՛ ջան:

— Վաղը Քիստ մորքուրը կգա մեր տուն, մաման էլ կգնա հիվանդանոց ու ապերիկին կրերի⁵³:

339

— Արփի՛ ջան, գիտե՛ս որ քեզ ձկան փորից են հանել, — ասում է հորաքույրը:

— Հո՛ք, քեզ ձկան փորից են հանել, մամային ու հայրիկին էլ

51 Մարոժնի (ոռու.) – պաղպաղակ:

52 Ծծովի կամ շուշա կանֆետ – կարամել կոնֆետ:

53 Մի քանի օր առաջ բարեկամուհիներից մեկը երեխա էր ունեցել, ծնողների հետ Արփին էլ էր գնացել ծննդատուն ու տեսել էր լուսամուտից ցույց տված նորածնին: – ծանոթությունը՝ ասացողի:

կաղամբի միջից են գտել, բայց ես ճնվել եմ,— պատասխանում է 4.6 տարեկան Արփին:

340

— Ինձ ինչքան ես սիրում, — հարցնում է քեռին քրոջ երեխային:

— Ամպի չափ, — պատասխանում է 3-ամյա Սիրանույշը:

— Էդքան քիչ:

— Քեռի՛ ջան, ինքը քիչ ա, բայց միշտ կա, — հիմնավորում է երեխան:

341

Մի օր 5 տարեկան Թորգոմը հորն ասավ.

— Պանկ, հիասըս քեզնից թափվել է:

— Ինչի՞, Թորգոմ ջան:

— Կնգանըտ կլսես, ինձի *սնիգերս*⁵⁴ չես առնի, — հիասթափություն պատճառը հիմնավորեց Թորգոմը:

342

— Ման, ես գիտեմ՝ աղջիկներին ինչի են ասում ձեվըչկա⁵⁵, դասից տուն գալով, ասավ 7 տարեկան Էդուարդը:

— Ինչի՞, — հարցրեց մայրը:

— Որովհետև իրանք ձևերով են:

343

Ռուսերենի դասին գույներն են անցնում: Հենց որ գալուրոյ է⁵⁶ ասել ուսուցչուհին, բոլորը ծիծաղել են: Տուն գալուց հետո 7-ամյա Էդուարդը հարցնում է.

— Ման, դասատուն որ *գալուրոյ* ասավ, ինչի՞ բոլորը ծիծաղեցին:

Բացատրությունն իր վրա է վերցնում երկրորդ դասարանցի քույրը՝ Իրինան:

54 Սնիգերս – շոկոլադի տեսակ:

55 Ձեվըչկա (ռուս.) – աղջիկ, արտասանելիս դ-ն ձ է ասվում:

56 Գալուրոյ (ռուս.) – կապույտ, սակայն ժողովրդախոսակցականում այն ընկալվում է համասեռամոլ իմաստով:

— Էդոն՝ ջան, փոխաբերական իմաստով շատ տխուր բան ասես որ ծնողներդ էրկուսն էլ տղամարդ ըլեն, մեկին ստիպված մամա ասես...

344

Ընտանիքում երկու տղա երեխաներ են, մի օր նրանցից մեկը՝ 4-ամյա Ռուդոլֆը մորն ասում է.

— Ման, մի հատ էլ քուրիկ եմ ուզում, պոչիկներով մի հատ քուրիկ եմ ուզում ունենամ:

— Պապադ չի ուզում, տղա՛ ջան:

— Ման, չի ուզում, դու էլ պապայից թաքուն ունեցի,— խորհուրդ է տալիս Ռուդոլֆը:

345

Մի անգամ ավտոբուսում մի կին, հիացած փոքրիկի տեսքով ու գանգուր մազերով, ասավ.

— Հլա սրա մազերին նայեք, ոնց որ ոզնի լինի:

— Ես ոզնի չեմ, մարդ եմ,— անմիջապես վրա բերեց 2 տարեկան Նարեկը:

346

Հեռուստահաղորդավարը 3 տարեկան տղային հարցնում է.

— Բալի՛կ ջան, ինչ ես ուզում դառնալ:

Երեխան թե՛

— Արքայադուստր:

347

1990-ական թվականների մութ ու ցուրտ տարիներին *լեվի գծից* թաքուն մի *լեվի գիծ* էլ ես քաշեցի, 12 վոլտանոց փոքր հեռուստացույցը միացրի: Ամբողջ թաղը հավաքվում էր, գիշերն էլ՝ կարճանում սերիալներ նայելով: Մի օր էլ ուշ երեկոյան, թոռանս քնելու ժամին, կինս դուրս եկավ պատշգամբ ու լուսնի լույսով հիացած՝ ասավ.

— Էս ինչ հրաշք լիալուսին աս, էս ո՞նց աս լույս տալիս:

Ես ու 4-ամյա թոռս էլ բակ դուրս եկանք, ու լուսնի լույսով հիացած՝ թոռս աղերսանքով դիմեց ինձ, թե՛

— Պապի՛կ ջան, կարո՞ւս էս լուսնի լույսից *լեվի գիծ* քաշես, որ մեր էս մեծ հեռուստացույցը միացնենք...

348

Ռուսական դպրոցի տնօրենը Ռուդոլֆին⁵⁷ ու եղբորն առաջին դասարան ընդունելիս հարցեր է տալիս:

— Ջրին ինչ կասեն:

— Վօդա:

— Բա հացին ինչ կասեն:

— Խլեր:

— Բա ո՞նց կասեն եղբայր:

— Էդիկ ախպերըս լավ գիդե, — պատասխանում է Ռուդոլֆը:

349

Մանկապարտեզի դաստիարակի անունը Սիրանույշ էր, երեխաները ընկեր Սիրուշո էին ասում, բայց իմ տղան՝ 5 տարեկան Վահանը, դաստիարակչուհուն ընկեր *Սիրունշոր* է ասում, — պատմում է ռադիոմեկնարան Գոռ Գլումովը:

350

Մայրը կանչում է բակում խաղացող իր տղային.

— Հերիք խաղաս, շուտ տո՛ն արի:

— Ման, խի սոված եմ, թե՛ քունս ա տանում, — հարցնում է երեխան:

351

Առավոտյան թոռնիկը տատին պատմում է երագը: Հանկարծ կեսից կանգ է առնում ու ասում.

— Տատիկ, դե հիմա էլ դու պատմի:

— Ես ի՞նչը պատմեմ, քո երագն ա:

— Դու էլ կայիր երագիս մեջ, տատիկ ջան:

352

Ապարանցի երեխային հարցնում են.

— Բալիկ ջան, արևն ինչի՞ համար ա:

— Երդվելու:

57 Ապագա դերասան Ռուդոլֆ Ղևոնդյան:

353

Մի անգամ տատիկը կարի մեքենայի մոտ էր, թռռնիկը գալիս ու սկսում է խանգարել նրա աշխատանքը:

Տատիկն ասում է.

— Բալի՛կ ջան, գնա խաղա, ես քեզ համար իմպորտնի⁵⁸ շոր եմ կարելու:

Փոքրիկը նեղանում է, ուռցնում շուրթերը ու հեռանում: Երեկոյան նա վազում է տատիկի մոտ և բացականչում.

— Տանտ, տատի՛ ջան, ու՛ր ա *իմ քուպորտնի* շորս...

354

Էրկու կնիկ էրեխեքին շալակած գնում են: Էրեխեքից մեկը մյուսին ասում ա.

— Որի՞ն էջն ա լավ էթում:

355

Մի էրեխու հարցնում են.

— Անունդ ի՞նչ ա:

— Հակոբիկ:

— Բա ո՛ւմ անունն են վրետ դրե:

— Վալոդ պապիս, — ասում ա էրեխեն:

356

4 տարեկան Անուշիկը, ընկույզի մուրաբան տեսնելով, զարմացած ասում է.

— Վայ, պոպոխի (իմա՝ ընկույզի) գեյթուն ա:

357

4 տարեկան Անուշիկը հավի ճուտին տեսնում, ասում է.

— Վայ, մամա՛, ո՞նց որ հավիկ լինի, բայց ինչի՞ ա պուճուր:

58 Իմպորտնի (ռուս.) – ներմուծած, ոչ տեղական ապրանք:

358

— Ման, ման, նայի՛, էս մարդը քաչալ ա, գլխին մազ չկա, — ասում է երեխան:

— Կամանց խոսա, թե չէ կլսի, — սաստում է մայրը:

— Ինչի՛, ման, ինքը չգիտի՛, որ գլխին մազ չկա, — հարցնում է փոքրիկը:

359

— Հայրիկ, դու հաստատ սիրուի ունես, — մի օր ասում է 6-ամյա Սոֆյան:

— Սոֆի՛ ջան, իմ ամենամեծ սերը դու ես, քույրիկդ ա, մայրիկդ ա, ես էլ որտեղի՛ց պիտի սիրուի ունենամ, — պատասխանում է հայրը:

— Հայրիկ, դու սիրուի ունես, ու անունն էլ Մոնիկա ա, — եզրափակում է երեխան:

360

Եկեղեցուց վերադառնալուց հետո տատը հարցրեց.

— Աշոտի՛կ ջան, քահանան խաչը քո գլխին էլ դրե՞ց:

— Հա՛, Հասմի՛կ տատի, խաչը դրեց գլխիս, կպավ սրտիս, — պատասխանեց 5-ամյա Աշոտիկը:

361

4-ամյա Քրիստինեն ու 3-ամյա Շահանեն վիճում էին, ու երբ տատը տեսավ՝ վերջը չեն տալիս վեճին, ասավ.

— Իրար չեք ուզում զիջեք, չունքի⁵⁹ մինըդ էթարն ա, մինըդ՝ բեթարը⁶⁰:

— Մարո՛ւ տատիկ, — ասում է Շահանեն, — ես եմ էթարը, իսկ Քրիստինեն՝ բեթարն ա...

59 Չունքի – քանի որ:

60 Մինըդ էթարն ա, մինըդ՝ բեթարը – Լոռիում մեկը մյուսին չզիջողների համար է ասվում, երկուսն էլ բացասական հատկանիշն են ընդգծում:

362

Թոմը և Ջերին մուտֆիլմը նայելիս 3.6 տարեկան Լիլիանան ինքնիրեն խոսում է. «Իմ պապան էլ ա շաաստ ուժեղ, ինքը բոլոր բլոճներին սասկացնում ա...»:

363

—Մամմ, էն կողմ գնա, որ պապին ինձ թաքուն պետկ⁶¹ տա,—ասում է 3.6 տարեկան Լիլիանան ու քիչ անց շարունակում,—պապի՛, արի՛ տուր...:

364

Գազանանոցում էգ կապիկի վանդակի դիմաց կանգնած 3.6 տարեկան Լիլիանան ուշադիր նայում, նայում ու զարմացած հարցնում է.

—Էս ի՞նչ ա,—ու քիչ անց շարունակում է,—հաասան, իմացա, ծիծիկ ա, մամաս էլ ունի...

365

Հալեպի Սահակեան վարժարանին «Բողբոջ» դասարանի մանկապարտիզպանուհին⁶² կհարցնե իր սաներուն.

—Վիգեն, պապադ ի՞նչ կընե:

—Պապաս մի՛նչև առտու դրամ կհաշվե, օրի՛որդ: (Հայրը դրամատան պաշտոնյա է)

—Սարգի՛ն, քու պապադ ի՞նչ կընե:

—Պապաս խոշոր քամյուն⁶³ ունի, քամյուն կըքշե, — կըսե:

—Իսկ քո՛ պապադ, Սոսի՛, — կհարցնե օրի՛որդը մեկ ուրիշի:

—Հայրս դոկտոր⁶⁴ է, օրի՛որդ, — կպատասխանե հպարտությամբ:

Ամենքը հպարտությամբ կնշեն իրենց հայրերու զբաղումը:

61 Պետկ (ոռս.) – շաքարավազ:

62 Մանկապարտիզպանուհի – դաստիարակչուհի:

63 Քամյուն – բեռնատար ավտոմեքենա:

64 Դոկտոր– բժիշկ:

— Մարտիկ, իսկ քու հայրըդ ինչ կընէ, — կհարցնեն իրենց պաշտոնակիցի՝ Չոլաքյանի⁶⁵ տղային:

4.6 տարեկան Մարտիկը կարմրատակած կկարկամէ...

— Հը՛, քու պապանդ ինչ կընէ, — դիտմամբ կրկին հարցը կուղղեն երեխային:

— Պապա... պապա... դպրոց կերթա, — լացակումած կպատասխանեն Մարտիկը:

366

Ես մէկհատիկ եմ և մանկութեանս կ'ուզէի քոյր կամ եղբայր ունենալ, բայց քոյր կամ եղբայր չէր գար:

4-րդ տարեդարձիս ծնողներս հարցուցին.

— Յակոբիկ, ի՞նչ նուէր կ'ուզես տարեդարձիդ առիթով:

Ես ալ պատասխանեցի.

— Գանձանակ մը կ'ուզեմ:

Մայրիկս զարմացաւ, թէ ինչո՛ւ անպայման գանձանակ:

— Որպէսզի դրամ հաւաքեմ և քոյրիկ մը գնեմ, — պատասխանեցի ես:

367

Սևակը մեր դասարանի ծոյլ աշակերտներէն մէկն էր: Օր մը ուսուցչուհին անոր գրած սխալ մէկ բառին համար որպէս պատիժ պատուիրեց նոյն բառը 10 անգամ գրել:

Յաջորդ օրը ուսուցչուհին անոր հարցուց բառը, և Սևակը դարձեայ չկրցաւ պատասխանել: Ուսուցչուհին ըսաւ.

— 10 անգամ գրեցիր ու տակաւին չսորվեցա՛ր:

Սևակը պատասխանեց.

— Օրիորդ, դուք ինձի ըսիք՝ գրէ՛, չըսիք՝ սորվի՛ր:

65 Հակոբ Չոլաքյան – սփյուռքահայ վաստակաշատ մանկավարժ, դպրոցական և բուհական բազմաթիվ դասագրքերի հեղինակ, ազգագրագետ, բանագետ, լեզվաբան:

368

Մանկապարտեզի ուսուցչուհին ըսավ Եզեկելէն.

— Վաղը մազերդ կտրած դպրոց կուգաս:

Յաջորդ օրը Եզեկելը դպրոց եկաւ մազը առանց կտրելու: Ուսուցչուհին հարցուց.

— Եզեկէ՛լ, ինչո՞ւ մազերդ չես կտրած:

Եզեկելը պատասխանեց.

— Գիշերը կտրեցի, բայց մինչև առտու⁶⁶ դարձեալ երկնցաւ, օրիորդ:

369

Օր մը մեր դրացի ուսուցչուհին դասարանին մեջ խնդրեց աշակերտներէն թուել իգական անուններ: Ես ալ ըսի.

— Հոգիս:

Ուսուցչուհին ըսաւ.

— Հոգիս-ը անուն չէ, Յակո՛բ:

Ես ալ ըսի.

— Հապա Աբո քեռին ինչո՞ւ քեզի կըսէ *հոգիս*:

370

Հալեա փողոցը քալած ատեն մուրացիկ մը տեսայ, ուզեցի իրէն օգնել և տալ գումար՝ կես ոսկի:

Մաման ըսաւ.

— 25 դրուշ⁶⁷ տուր:

Ես ըսի.

— 25 դրուշը շատ է, տանք կէս ոսկի:

371

— Էս ի՛նչ քաղցր են թուշիկներդ, Կարինէ՛ ջան, մայրիկդ թուշիկներիդ մեղր է՞ քսել, — համբուրելուց հետո ասում է պատմաբան, աղբյուրագետ Լևոն Խաչիկյանը:

66 Առտու – առավոտ:

67 Դրուշ – դրամական միավոր, 25 դրուշը հավասար է ¼ ոսկի, կես ոսկին հավասար է հիսուն դրուշի:

— Ոչ, արեղնհիզարն⁶⁸ է քսել, — պատասխանում է 4 տարեկան Կարինեն:

372

Ինպես բոլոր երեխաները, Գեորգին էլ մանուկ ժամանակ սիրում էր ժամերով նստել հեռուստացույցի առաջ ու մուլտֆիլմեր դիտել:

Մի անգամ Կարինեն սենյակ է մտնում ու տեսնելով Թոմ Սոյերի մասին մուլտֆիլմը ուշադրությամբ նայող տղային՝ նստում է կողքին: «Հետագայում Գոշան այդ գիրքը կկարդա թե՛ ոչ, չգիտեմ, թող գոնե հեղինակին իմանա», — մտածում է մայրն ու ասում.

— Բալիկ ջան, Թոմ Սոյերի մասին այս մուլտը գրել է Մարկ Տվենը:

— Ով որ գրել ա, հալալ ա իրան, — արձագանքում է 4-ամյա Գեորգին:

373

Գեորգին երեխա ժամանակ սովորություն ուներ բոլորին, ով իրենց տուն հյուր կգար, հարցնել. «Կակա բերել է՞ս»: Կարան ինքն իրեն չէր գտնում. նա նախազգուշացրել էր բոլորին, որ գալու ժամանակ հետները ոչ մի բան չբերեն: Նախազգուշացված էր նաև Գոշան, որ կակայի անուն չտա, չվազի ու չհարցնի. «Կակա բերել է՞ս»:

Կարինեի ընկերուհի Անուշը այդ ժամանակ չէր աշխատում ու տղային մանկապարտեզ տանելուց հետո հանդիպում է մեզ: Անուշը մտնում է սենյակ և նստում բազմոցին: Գոշան անմիջապես վազում է ընդառաջ և նստում կողքին: Անուշը, բացելով պայուսակը, ինչ-որ բան էր ման գալիս, իսկ Գոշան, հայացքը հյուրի պայուսակի մեջ, հարցնում է. «Բերել է՞ս»:

374

Կապիտալ վերանորոգումից հետո բնակարանից դեն են շարտվում բազմաթիվ հին իրեր, այդ թվում՝ Գոգայի խաղալիքնե-

68 Դիաթեզի դեմ օգտագործվող քսուկ:

րի մի մասը: Թե ոնց է լինում, Ջեմմա տատի կողքին նստած Գոգան հանկարծ հիշում է իր ավտոմատը:

— Ըստ երևույթին վերանորոգման ժամանակ կորել է, — ասում է տատը:

Գոգան տխրում է և հենվում տատին: Տատը շատ է խղճում նրան ու հարցնում է.

— Ավտոմատիդ կորչելու համար շատ ես ավիտոսում:

— Ոչ, տատիկ, — պատասխանում է Գոգան, — ես քեզ եմ խղճում, որովհետև էլի դու ես փող ծախսելու ու նորն առնելու:

375

Ամռան շոգ օր էր: Հյուրընկալել էինք մեր մտերիմ Հրանտ Լալայանին: Գոշան մեզ մոտ եկավ աղմուկ առաջացնող խաղալիքով: Ես մերթընդմերթ ցածրաձայն զգուշացնում էի նրան. «Մի աղմկիր, հյուր ունենք»: Մենք սեղան նստեցինք: Գոշան նորից իր խաղալիքով ականջ ծակող ձայներ սկսեց հանել: Ես կանչեցի նրան և ականջին շնչացի. «Քեռին շուտով կգնա, այդ ժամանակ ինչքան կուզես, կշեփորահարես»: Չհավատալով ինձ՝ նա մոտեցավ Հրանտին և բարձրաձայն հարցրեց.

— Ե՞րբ ես գնալու:

Դրսում անձրև էր գալիս:

— Երբ անձրևը դադարի, անմիջապես կգնամ, — պատասխանեց Հրանտը:

Ես ամոթից չգիտեի՝ ինչ անեմ: Բայց վիճակս էլ ավելի վատացավ, երբ անձրևը դադարեց: Գոշան մոտեցավ հյուրին և լուսամուտը ցույց տալով՝ ասաց.

— Անձրևը կտրվել է:

— Հրանտը մի պահ խառնվեց ու տեղից վեր կենալով՝ պատասխանեց.

— Արդեն գնում եմ:

376

Ամառային երեկո էր: Հյուրեր ունեինք: Ջեմմա տատը Կարինեից մի բաժակ թեյ է խնդրում: Նրանց մոտ նստած 4-ամյա Գոշան, թե՛ ես էլ եմ ուզում:

— Բայց չե՞ որ դու թեյ չես սիրում, — զարմանում է Կարան:

— Ես էլ եմ ուզում:

Կարան թեյը բերում դնում է տղայի առաջ և խիստ տոնով զգուշացնում.

— Լավ իմացիր, եթե չխմես, գլխիդ եմ լցնելու:

Հյուրերը արդեն գնացել էին, մնացել էինք ես և Գոշան, դիմացը՝ բաժակով լի թեյը: Ես ինչքան էլ զգուշացնում էի, որ թեյը խմի, նա ձգձգում էր, պատճառաբանելով, թե թեյը տաք է: Այդպես անցավ մոտ մի ժամ: Մեկ էլ հանկարծ տեղից վեր թռչելով՝ Գոշան գոռաց.

— Գալիս ա:

Կարան էր գալիս:

— Գոնե կեսը խմիր, — փորձեցի Կարինեի զայրույթը կիսով չափ մեղմել:

— Ուզում ես՝ մնացած կեսն էլ գլխիս լցնի՞ — պատասխանեց Գոշան և արագ-արագ դատարկեց թեյով լի բաժակը:

377

— Լավ սովորի, որ բժիշկ դառնաս, — 5.6 տարեկան Վիկտորյային հորդորում է մորաքույրը:

— Իսկ բժիշկը ինչքան փող ա ստանում:

— Շատ փող:

— Իսկ Պուտինը ո՞վ ա:

— Պուտինը նախագահ ա:

— Ինքը ի՞նչ ա անում:

— Բոլորին ասում ա՝ ով՝ ինչ անի, ոնց անի...

— Իսկ ինչքան փող ա ստանում:

— Շատ-շատ փող:

— Անո՛ւշ մորաքույր, ես երևի նախագահ կդառնամ, — իր «վերջնական» որոշումն է կայացնում Վիկտորյան⁶⁹:

69 Երեխան ապրում է Ռուսաստանի Տվեր քաղաքում, ընտանիքում խոսում են հայերեն:

378

Մանկապարտեզ գնալիս Վիկտորյան ընկել, փասսվածք էր ստացել ու լաց էր լինում, հետն էլ մորը պարտադրում՝ գրկի՛, հա գրկի՛:

— Ամո՞թ ա, Վիկտորյա՛, «գրկի հա գրկի», մեծ աղջիկ ես, վե՛ր կաց քայլի, գնանք...

— Ման, իսկ դու չգիտե՛ս, որ պրինցեսաները⁷⁰ չեն քայլում...

379

— Մորաքո՛նյր, մյուս անգամ ե՛րբ ես գալու մեր տուն, — հարցնում է 6-ամյա Վիկտորյան:

— Որ անգլե՛րեն սովորես, շուտ կգամ:

— Չէ, երևի ե՛ս գամ...

380

Մարտի 8-ի առավոտյան 4 - ամյա Ալեքսի հետ պատրաստվում ենք տանից դուրս գալ:

— Ման, ո՞ր ենք գնում:

— Գնում ենք տատիկի համար նվեր առնելու, քայց եթե տատիկը հանկարծ հարցնի քեզ. «Ո՞ր եք գնում», կասես. «Գնում ենք ման գալու», չասես՝ գնում ենք քեզ համար նվեր առնելու:

Տանից դուրս գալիս տատը հարցնում է.

— Ալեքս, էս ո՞ր եք գնում:

— Մենք գնում ենք ման գալու, ոչ թե քեզ համար նվեր առնելու, — պատասխանում է Ալեքսը:

381

4 տարեկան Ալեքսն ու քույրը միասին խաղում են: Հանկարծ Ալեքսը ինձ մոտ է վազում, թե՛

— Ման, ման, շուտ անձեռոցի՛կ տուր:

— Ի՞նչ է պատահել, — հարցնում եմ անհանգստացած:

— Էլինայի վրա ջղայնացել եմ, հեսա⁷¹ լացելու ա:

70 Պրինցեսա (ռուս.) – արքայադուստր:

71 Հեսա – շուտով:

382

4-ամյա Ալեքսի ընկեր Աշոտիկը Նոր տարին հյուր էր եկել: Գնալիս նա ուզում է Ալեքսի մեքենաներով լի պայուսակը հետը տանել:

— Էդ իմ ավտոներն են, տո՛ր, — ասում է Ալեքսը:

— Չէ, սրանք տանելու են:

— Իմն ա, չեմ տա:

— Ալեքս, արի մեկը նվիրենք Աշոտիկին, — ասում է մայրը:

— Չէ, չեմ տա:

Մի քանի վայրկյան մտածելուց հետո բերում Աշոտին է մեկնում շոկոլադե ձվիկը:

— Էս վերցրո՛ւ, Աշոտիկ, կարող ա մեջից ավտո դուրս գա:

— Չեմ ուզում: Ես ավտոներն եմ ուզում:

Քիչ անց Ալեքսը Աշոտիկի հետ դուրս է գալիս սենյակից: Վերադառնում են երկուսն էլ շատ գոհ. Աշոտիկի ձեռքին 100 դրամանոց ենք տեսնում:

— Ման, — բացատրում է Ալեքսը, — ես եմ տվել, որ իրա համար ավտո առնի, իմ ավտոները հետը չտանի:

383

— Էնենց ծարավ եմ, Էնենց ծարավ, Միլենա՛ ջան, մի բաժակ ջուր կբերե՞ն՝ խմեմ, — թոռանն է դիմում տատը:

— Ալմնստ տատի, որ թուքդ կուլ տաս, կանցնի, — խորհուրդ է տալիս 4-ամյա Միլենան:

384

Երեք տարեկան Նատալին կոշիկները հանել, սենյակում ոտաբոբիկ ման էր գալիս:

— Էդ սպիտակ նասկիներդ⁷² կսևանա, Միլենա՛ ջան, կոշիկ հագիր, — դիտողություն է անում մայրը:

— Ման, իսկ դո՛ւ... պուրդ⁷³ մաքուր պահի, — հակադարձում է երեխան:

72 Նասկի (ռուս.) – գուլպա:

73 Պուլ (ռուս.) – հատակ:

385

— Ման, եթե մեծ փոր են ունենում, ուրեմն բալիկ պիտի ունենան:

— Հա, բալեն:

— Բա պապախս բալիկը նրբ ա ծնվելու, — հարցնում է 4 տարեկան Գուրգենը:

386

Մանկապարտեզի ճանապարհին 3.5 տարեկան Գուրգենը մորից ինչ-որ բան է հարցնում:

— Ինչ ես հիմարություններ դուրս տալիս, ո՞վ ա քեզ նման բան ասել, — հարցնում է մայրը:

— Պապան...

Քիչ անց երեխան թե՛

— Ման, իսկ հիմարություններ ովքեր են ասում:

— Հիմարները:

— Ինչի՞, պապան հիմար ան...

387

— Հարևանի թոռնիկի հետ խաղալիս 4 տարեկան Գուրգենն ասում է.

— Արա՛ Վիվո, պապաս ասում ա՛ դու դերբիլ ես:

Մայրը բարկանում է.

— Չես ամաչում, ինչու ես հորինում:

Տուն գալուն պես ամուսնուն խնդրում է, որ զրուցի տղայի հետ: Հայրը կանչում է Գուրգենին.

— Գո՛՛գ, ես ասել եմ՝ Վիվոն դերբիլ ա:

— Չէ, պանպ,

— Բա ինչի՞ ես Վիվոյին ասել, թե ես ասել եմ, որ ինքը դերբիլ ա:

— Ես տենց բան չեմ ասել:

— Ինչի՞ ես խաբում:

— Պանպ, հետաքրքիր մարդ ես, դու ընդեղ եղել եմ:

— Մաման ա ասում, ուզում ես ասես՝ մաման ա խաբում:

— Չէ, մամային երևի թվացել ա...

388

Անժելայի հայրական պապիկի անունը Ավետիք է, մայրական պապիկի անունը՝ Խորեն: 5 տարեկան Անժելան հայրիկի հետ զբոսնում է, նրանք անցնում են Ավետիք Իսահակյանի արձանի մոտով: Անժելան հարցնում է.

— Սա ո՞վ է, մայրի՞կ:

— Ավետիք պապիկն է, — բարեհամբույր պատասխանում է մայրը:

— Իսկ Խորեն պապիկի արձանն ուր ա, — հարցնում է Անժելան:

389

3-ամյա Տարոնի հոր՝ Արթուրի ընկերներից մեկը հյուր էր եկել: Տարոնն անկաշկանդ նստում է անձանդոթի ծնկին ու հարցնում է.

— Անունդ ի՞նչ ա:

— Ասատուր:

— Տուր, անունդ ի՞նչ ա:

— Ասատուր:

— Տուր, անունդ ի՞նչ ա:

— Ասատուր:

— ...

390

2.5 տարեկան Ավետիսը երբ ինչ-որ բան է ուզում գովել, ասում է՝ *լալ ա*, իսկ երբ մի բան ուզում է շատ-շատ գովել, ասում է՝ *լավլայա*:

391

Ընտանիքում ռուսերեն և հայերեն լեզուներով են հաղորդակցվում: Մի օր էլ 3 տարեկան Լևոնը հարցնում է մորը.

— Ման, եթե կալբաս չի կարելի ուտել, երշիկ կարելի է, չէ՞...

392

2.6 տարեկան Վիկտորյան առաջին անգամ մոր աշխատանքի վայրն է գնում: Փոխտնօրենը գրկում է փոքրիկին, սիրում, համբուրում, իսկ երեխան, սևեռուն հայացքը չկտրելով նրա մեծ փորից, հանկարծ հարցնում է.

— Չաճյա՛, քու փորիկը ինչի՛ ա ուռած, ի՛նչ կա մեջը:

—Ք...ք, — իբր կատակում է փոխտնօրենը:

Հանկարծակիի եկած Վիկտորյան ձայն չի հանում, բայց դուրս գալուց հետո հարցնում է մորը:

— Մամա՛, էն ձաճյան էդ ե՛րբ ա էդքան ք...ը կերել:

Մայրը կատակով փորձում է երեխայի մեջ ցրել տհաճ միջադեպը.

— Ընթացքում...

Մի որոշ ժամանակ անց Վիկտորյան լինում է մոր երկրորդ աշխատավայրում: Տնօրենը Լիանային ծանոթացնում է իր հարսի հետ, որը հղի է լինում: Նախորդ միջադեպի տհաճ տպավորությունը դեռ չէր անցել, և Վիկտորյան, թեքվելով դեպի մայրը, կամացուկ հարցնում է.

— Մամ, էս տյոտյայի⁷⁴ փորիկը որ ուռած ա, ինքն էլ ա՛ ք... կերել...

393

2.1 տարեկան Վարդանը տատին բողբոջում է.

— Տատիկ ջան, էս Գայուշն ինձ ծեծեց, ծեծեց, ծեծեց, ծեծեց, ծեծեց, ծեծեց, ծեծեց...

394

3.6 տարեկան Վարդանը տան մեջ գնդակ է խաղում:

— Վայ, Վարդ, դու անընդհատ պիտի ինձ լարված պահենս, — նեղսրտում է մայրը:

— Տատիկ, ես ի՛նչ անեմ, որ դու երազ տեսնելիս էլ ես լարվում, — պատասխանում է Վարդանը:

395

Մայրը զայրացած դիմում է 3.8 տարեկան Վարդանին.

— Տղա՛ ջան, ոնց որ 60 տարեկան բիճա լինես:

— Լսի՛, մամա՛, տատիկիս տարիքը ձեռ չառնես, էղս՛վ, — հակադարձում է Վարդանը:

74 Տյոտյա (ռուս.) – դիմելաձև՝ մորաքույր, հորաքույր:

396

Գյուղ գնալու ճանապարհին ոչխարների հոտ տեսնելով՝ 4-ամյա Վարդանը պապին հարցնում է.

— Պապի՛կ, հիմա սրանք ոչխարներ են, թե՞ հիմարներ:

397

1.9 տարեկան Լիանան տատի հետ մտնում է գոմ, ապա կովին ուշադիր նայելով՝ բացականչում է.

— Վայ՛, տատի՛կ, կովը բորիկ ա, — ապա կճղակները ցույց տալով՝ շարունակում է, — չէ՛, չէ՛, վայ՛, տեսա, հեսա՛, կոշիկ ա հագել:

398

Մայրը 2 տարեկան աղջկան «Կարմիր գլխարկն» է պատմում, իսկ Լիանան, ազդված հեքիաթի վերջաբանից, մորը հարցնում է.

— Մամա՛, բայց ինչի՞ գայլը Կարմիր գլխարկին կերավ:

— Բա ի՞նչ աներ:

— Թող հաց ուտեր, — հեքիաթի ճիշտ լուծումն է գտնում Լիանան:

399

Ընտանիքով գյուղ գնալիս պապը, նայելով ճանապարհի անմխիթար վիճակին, ասում է.

— Էս ճանապարհի վրա միլիոններ թափեցին, միլիոններ:

— Պապի՛կ, պապի՛կ, կանգնի՛, — խնդրում է 2. 2 տարեկան Լիանան:

— Ինչի՞, բալեն:

— Իջնենք էդ միլիոնները հավաքենք:

400

Ընտանիքով Երևանից գնում են Գատնի: Գյուղում 2.2 տարեկան Լիանան իջնում է ավտոմեքենայից ու գետնին տեսնելով գառների կտտորները⁷⁵՝ զարմացած բացականչում է.

— Վայ՛, մամա՛, էս ինչքան՞ շատ գեյթուն ա թափած:

75 Կտտոր – ոչխարի, այծի կեղտ, կղանք:

401

2.6 տարեկան Մարիայի թոթովախոսությունը հարթելու համար մայրը ասում է.

— Մարի՛, ասա՛ ընձուդտ:

— Կնձուկ չի, կնձուկ ա, մամա՛, — մորն «ուղղում» է երեխան:

402

— Քունս տանում է, — ասում է մայրը:

— Վայ, ման, ես քեզ կբռնեմ, ոյ չտանի հանկա՛ծ, — մորն օգնության է գալիս 2.6 տարեկան Մարիան:

403

Մի անգամ 2.6 տարեկան Մարիան լավաշը վերցնում ու փախչում է:

— Լավաշը բեր, որ ձուկը ծածկեմ, բալեն, — խնդրում է մայրը: Մարիան լավաշը բերում տալիս է ու ասում.

— Վեցըյո՛, մամա՛, ծածի՛, ձուկիկը չմիսի հանկա՛ծ, — ասում է Մարիան:

404

4-ամյա Էրիկի նոր ծնված քույրն անընդհատ լաց էր լինում: Մի օր էլ դրանից ձանձրացած Էրիկը մորն ասում է.

— Ման, չի լինի՛ որ սրան էլի հետ դնես փորիկիդ մեջ: Որ ընդեղ էր, ոչ լացի ձենն էինք լսում, ոչ բան, ուր սիրտներս ուզում էր, հանգիստ գնում էինք:

405

Սեղանին շատ վառ գունավորմամբ դեղձ էր դրված: 2.1 տարեկան Էրիկը ուշադիր նայեց դեղձի կտրատած շերտիկներին ու ասաց.

— Ման, ինձ էլ ծխածան կտա՛մ:

406

— Մամա՛, տելեվիզորը միացրո՛ւ՝ հեռուստացույց նայեմ, — ասում է 2.6 տարեկան Վահագնը:

407

- Վահագ ջան, ո՞վ է ապրում Տաշիրում, — հարցնում է մայրը:
- Տանյա մորքուրը:
- Է՛լ ով:
- Վալոդ ձյաձյան:
- Է՛լ:
- Կովիկները, — պատասխանում է 2.6 տարեկան Վահագը:

408

- Մի անգամ 4-ամյա Վահագը հորը բողոքում է.
- Պանյ, էս Կարենն իսկական խոզ ա:
 - Ինչի՞, Վահագ ջան:
 - Ինչի ձեռք եմ տալիս, ուզում ա. խոզանակը ուզեց, չտվեցի, մեքենան ուզեց, չտվեցի...

409

- Հաղթանակի կամրջով անցնելիս տեսնելով կոնյակի գործարանի շենքը՝ 4-ամյա Վահագը հարցնում է հորը.
- Պանյ, էս արաղի տունը ո՞նց էր կոչվում:

410

- Ծովափում նայելով մայրամուտին՝ 2 տարեկան Նարեն բացատրեց.
- Արևը պագում ա, գնում ա Մարիամի մոտ (իմա՛ մայրամուտ):

411

- Մի օր 2.9 տարեկան Նարեն ասավ.
- Մամա՛, գիտե՞մ՝ Աստղիկը Աննայի, Հովիկի ու հավիկների մաման ա:

412

- Մի օր 3.6 տարեկան Նարեն փորձեց հոր մաթեմատիկայի իմացությունն ստուգել ու հարցրեց.
- Պանյ, որ ես քեզ մի խնձոր տամ, քանի՞ հատ կլինի:

413

Նարեի հայրիկն ու հորեղբայրը ինչ-որ բան էին քննարկում, հայրիկը բորբոքված ձայնը բարձրացնում է.

— Յան, հայրիկ, ախպերդ ա, էդ ո՞նց ես խոսում հետը, — խիստ տոնով հորը դիտողություն է անում 3-ամյա Նարեն:

414

4 տարեկան Նարեն դիտողություն է անում հորեղբորը.

— Հոպար, բա կարելի ա՞, որ մեծ եղբայրը հակաճառի փոքր քրոջը:

415

4-ամյա Խաչիկի մայրը հղի էր: Երեխան էլ գիտեր, որ բալիկ է ծնվելու: Մի օր Խաչիկը դիմում է մորը, թե՛

— Ման, մի հատ խաղալիք կույ տուր, էլի:

— Խաղալիքն ինչի կույ տամ, Խաչիկ ջան:

— Որ բալիկն ընդեղ խաղա...

416

Ծնողները երեխաների հետ Թումոյի այգում հանգստանալուց հետո դանդաղ քայլում են: Երեխաները առջևից են գնում, ծնողները՝ ետևից: Ճամփաբաժանին հասնելուց հետո 4.6-ամյա Մուշեղը շրջվում է դեպի ետևից եկող ծնողներն ու հարցնում է մորը.

— Ման, հիմա մջ գնանք, թե՛ ձախ:

— Լավ, էլի, էկեք ձախ գնանք. ես ձախիկ եմ, — խնդրում է 5- ամյա Գուրգենը:

417

Հայերենի այբուբենի ամեն մի տառն անցնելիս ուսուցիչը երեխաների համար տոն է համարում, ուստի Ա տառն անցնելիս ասում է.

— Երեխաներ, գիտե՞ք որ այսօր Ա տառի տոնն է:

Հաջորդ օրը Ս տառն անցնելիս՝

— Երեխաներ, իսկ այսօր Ս տառի տոնն է, — և այսպես՝ ամեն մի տառն անցնելիս:

Մի անգամ էլ Զատկի մեռելոցի հաջորդ օրը ուսուցչուհին դիմում է երեխաներին.

— Երեխաններ, իսկ այսօր ինչ տոն է:

7-ամյա Էլիզիկը, որ նախորդ օրը ծնողներից ու հեռուստատեսությամբ լսել էր մեռելոցի օր, մեռելներին այցելության գնալու օր արտահայտությունները, ձեռք է բարձրացնում և ասում.

— Այսօր մեռելների տոնն ա:

418

Դասամիջոցից հետո առաջին դասարանի ուսուցչուհին դիմում է դասարանին.

— Երեխաններ, սեղանիս 100 դրամ էր դրված, ո՞վ է վերցրել:

6-ամյա Անուշիկը տեղից կանգնում է և ասում.

— Ընկեր Պողոսյան, ես եմ վերցրել, բուֆետից պոնչիկ եմ առել, բայց 50 դրամը նորից դրել եմ ձեր սեղանին:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՆՏԻՊ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԳՐԿԱԾ ՄԱՆԿԱԿԱՆ ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

Մի աշակերտի ծաղրում էին ընկերները և ասում.

— Չե՛ն ամաչում, երեք տարի է՝ առաջին դասատանն⁷⁶ ես ընկած:

— Ինչո՞ւ պետք է ամաչեմ, — ասաց ծույլ աշակերտը, — իմ վարժապետը ահա երեսուն տարի է՝ առաջին դասատանն է:

ՅՆԱ-1,12

2

Հարցաքննելիս վարժապետը հարցրեց աշակերտին.

— Սեմը, Քամը և Յաբելը Նոյի որդիքն էին: Ո՞ւմ տղերքն էին: Երեխան չկարողացաւ պատասխան տալ և ուղարկուելով հոր մոտ:

— Հիմա՛ր, — ասաց հայրը, — այդ ինչպե՛ս չես հասկացել. Աբգարը, Մարգիսը և Ստեփանը ձեր հոգաբարձուի որդիքն են. Ո՞ւմ տղերքն են ուրեմն:

— Հայտնի բան է. մեր հոգաբարձուի:

— Դե՛, հիմա՛ր, չէ՛ որ միևնոյն է:

Երեխան գնաց նորից քննուելու: Հարցրին.

— Դե ասա՛. Սեմը, Քամը և Յաբելը Նոյի որդիքն են: Ո՞ւմ տղերքն էին:

— Մեր հոգաբարձուի, — համարձակ պատասխան տուեց աշակերտը:

ՅՆԱ-1, 38

76 Դասատուն – դասարան:

3

Քահանան աշակերտին «Հայր մերը» կարդացրեց և այդ աղոթքի մասին հարցրեց.

— Որտեղ է քո հայրը:

— Մարաբումն է, — պատասխանեց աշակերտը:

ՅՆԱ-1, 52

4

Հարցրին մի երեխայի.

— Քանի տարեկան ես:

— Ինը, — պատասխանեց երեխան:

— Էրե՞գ քանի տարեկան էիր:

— Էրե՞գ, փոքր ժամանակը:

— Հա՛, փոքր ժամանակը:

— Հինգ տարեկան էի, — պատասխան տուեց երեխան:

ՅՆԱ-1,88

5

Երեխային ասացին.

— Ինչի՞ պաս կերար⁷⁷:

— Պաս չեմ կերել, միս կերա:

ՅՆԱ-1,91

6

Ուսումնարանումը հարցաքննություն կար: Վարժապետը առաջարկեց մի աշակերտի հետևեալ հարցը.

— Եթե ես ունենայի կարկանդակ և 2/12 տայի Գևորգին, 2/12՝ Սարգսին, 2/12՝ Մարկոսին և կես կարկանդակ ինձ պահեի, քեզ ի՞նչ կմնար:

Աշակերտը երկար չնտածելով՝ պատասխանեց՝ ամանը:

ՅՆԱ-1,106-107

77 Պասին, պասի ժամանակ:

7

— Ի՞նչ բան է «էշ», գոյականն թե՛ բայ, — հարցրեց վարժապետը:
— Բայ, — պատասխանեց աշակերտը, — որովհետև կարելի է
ասել. «Ես էշ եմ, դու էշ ես, նա էշ է»:

ՅՆԱ-1,111

8

— Քանի՞ տարեկան ես, — հարցրին մի երեխայի:
— Ի՛նը:
— Էրեկ քանի՞ տարեկան էիր:
— Ուր:

ՅՆԱ-1, 136

9

Եղիշեից վարժապետը կարդում էր այն տեղը, ուր գրուած էր.
«Խորհուրդ էր կանչում յուր կողմնակիցներին...որոնք վառվում
էին այրելու եկեղեցու սուրբ ուխտը»:
Աշակերտներից մեկը այդ լսելով, ձայն տուեց.
— Խեղճ անասուն, ասա ուղտը ի՞նչ էր արել նորան, որ այրում
էր:

ՅՆԱ-1, 163

10

Երեխան, դռանը նստած, ուտում էր յուր հոր քելեխի (իմա՝
հոգեհաց) փլաւը: Մեկ ուրիշ երեխա, մոտենալով նորան, մի փոքր
փլաւ խնդրեց: Բայց երբ առաջինը ոչինչ չտուեց.

— Լանվ, լանվ, մի տայ, — ասաց երկրորդը, — Աստուած օղորմած
է, հալբաթ մեկ օր էլ իմ հայրս կմեռնի, տեն՝ ես էլ քեզ փլաւ կտամ:

ՅՆԱ-2, 5

11

Մայրը յուր փոքր աղջկան ասում է.

— Ես քեզ միրգ կտամ, հայրիկիդ չասես, թե Մարտիրոսը (սի-
րահարը) էսօր մեր տուն եկաւ:

Ընթրիքի ժամանակ հոր ներկայությամբ աղջիկն ասում է մո-
րը.

— Մայրիկ, դե ինձ միրգ տուր, որ հայրիկիս չասեմ, թե Մարտի-
րոսն էկավ, էէ....

ՅՆԱ-2, 31

12

Երեխան մի ձեռքով բերնի կեսը ծածկած ասաց.

— Քավոր աղա, հայրս խնդրում է համեցեք մեր տուն, հարիսա
ուտն՛ք:

— Բերանդ ինչի՞ ես ծածկել, սանիկ, — հարցրեց կնքահայրը:

— Հայրս ասաց, որ կէսբերան ասեմ, — պատասխանեց երե-
խան:

— Բաց թող, բաց թող բերանդ ու կրկին ասա՛ ինչ որ ասելու
ես, — ասաց կնքահայրը:

Երեխան ձեռքը յետ քաշեց բերանից ու ասաց.

— Քա՛նոր աղայ, հայրս խնդրում է՝ համեցե՛ք մեր տուն, հարիսա
ուտն՛ք:

— Է՛, է, լավ, — պատասխանեց կնքահայրը, — գնա հորդ ասա՛.
«Կէսբերան էլ ասի՝ չէկաւ, բաց բերան էլ կրկնեցի, էլի չէկաւ», շնոր-
հակալ եմ ձեր մարդավարութենից:

ՅՆԱ-3, 20

13

— Ինչ ես փնտրում այդ բառարանում, Աննա՛, — հարցրեց մայ-
րը:

— Իմ կոշիկը, — պատասխանեց վեց տարեկան աղջիկը:

— Կոշիկդ:

— Այո: Հայրիկը երեկ ասաց, որ այս գրքումը ամէն բան կարելի
է գտնել:

ՅՆԱ-3, 149

14

Սուր դղան

Դերդերը գրոնի քննության ժամանակ գրհարցունն աշագերդին.

— Նոյը ուներ ժեք⁷⁸ դղղա — Սեմ, Քամ, Հաբեթ, վո՞վ էր նացա⁷⁹ հարը:

Դրղան չի գըրցավ բադասխան դալ: Էգավ դուն, պանը բադ-մից հորը:

— Ինչ անխելք դղղա իս ադ էղիլ է, հածե⁸⁰, — ասաց հարը, — հաբա մեմը աղեգ միդք արա: Մեր տիրացին ջաղջըբանը⁸¹ ժեք դղղա ունի — Օվանես, Խաչուգ, Սիմոն. վո՞վ է նացա հարը:

— Հարգե⁸² ջաղջըբանը:

— Էդավ գնաց: Շինը հասկըցա՞ր:

Դրղան նորեն կրնաց քննությունի: Հասկըցան պանին էղենը և նորեն հարցուցին քի, վո՞վ էր Նոյին դղղոցը հարը:

— Մեր տիրացին ջաղջըբանը, — բադասխանից դրղան համարցազ:

ՀԱԲ-2, ՓԲԸ, 89

15

Տերտերն անցնում էր փողոցով: 4-5 տարեկան մի երեխա դասակով փորում էր գետիկը: Տերտերնը կանգ առավ:

— Տենակն ինձ տուր, էլի...

— Քյնի, տերտեր, վախիլ մի, ճուճուղ կտրալական չըմ:

ՆԱԲ-2, 94

78 Ժեք - երեք:

79 Նացա - նրանց:

80 Հածե - տո՛, ծո՛:

81 Զաղջըբանը - ջաղացպան:

82 Հարգե - իհարկե:

16

Մայրը իր փոքրիկ աղջկան ասում է.

— Ես քեզ իրիգունը կանֆետ կը տամ, հայրիկիդ չասես, թե Սաքուլը էսօր մեր տուն եկավ:

Երեկոյան ընթրիքի ժամանակ հոր ներկայությամբ աղջիկն ասում է.

— Մայրիկ, դե կանֆետ տուր, որ հայրիկին չասեմ, թե Սաքուլը մեր տանն էր:

ԵԾՏ, 20

17

Առաջին քայլ

Մայրը դիմում է 6 տարեկան աղջկան, որ վախենում է մօտենալ նոր եկած հյուրին:

— Դէհ, Մանեակ, մօտեցիր և համբուրիր քեռի Կոլիային:

Աղջիկը.

— Վախենում եմ, մայրիկ, առաջ դու համբուրիր, վերջը՝ ես:

ԵԾՏ, 29-30

18

Դասի ժամանակ

— Ընդունենք որ ես ծխախոտի 10 գլանակ գնեցի, հինգը տուեցի քեզ, հինգը՝ Պետրոսին, իսկ ինձ մօտ ինչ կը մնայ:

— Ծխախոտի կարօրկան⁸³:

ԵԾՏ, 34

19

Հետաքրքրություն

— Քեռի՛, մայրիկն ասում է, թե դու բոլորից պահում ես քո տափքը: Ասա խնդրեմ, որտեղ ես պահում:

ԵԾՏ, 66

83 Կարօրկա (ռուս.)– տուփ:

20

Դպրոցում

Ուսուցիչը.— Ուրեմն սողում կոչում ենք այնպիսի կենդանիները, որոնք գետնի վրայ ման չեն գալիս ոտքերով, այլ սողում են. ասացեք մի այդպիսի կենդանու անուն:

Աշակերտ.— Իմ փոքր եղբայրը:

ԵԾՏ, 44

21

Հայրը և որդին գնում են: Նկատելով ոչխարի հոտը՝ հայրը ասում է.

— Արամ, նայիր, տես ոչխարների հոտը:

Երկար նայելուց հետո որդին պատասխանում է.

— Ոչխարներին տեսնում եմ, բայց հոտը չեմ տեսնում:

ՀՀԼ, 132

22

Աղքատ տան տղամարդը մեռել էր, և այդ առթիվ մեծ պղնձով լոբի էին եփում: Մեռնողի երեխան բարձրացավ կտուրը, ծափ տալով ու պարելով երգեց.

«Ջանին, ման ՚իս, մեր ամին⁸⁴ մեռել ա, լո՛ճճի կուտեմ...»

ՇԾՏ, 52

23

Երեխան կոտրեց ուսումնարանի պատուհանի ապակին. թէև այդ բանը ոչ ոք չտեսաւ, բայց խեղճ աշակերտը դողում էր ամեն մի իրեն ուղղած հայեացքի, հարցի ժամանակ:

Մի կիւրակի օր կրօնուսույց քահանան մի խումբ երեխանց հարցեր էր տալիս ս. պատմութիւնից. նա դարձաւ ապակին կոտրող երեխային.

— Ո՞վ ստեղծեց երկինքն ու երկիրը:

— Երեխան, որի փոքրիկ ուղեղը զբաղուած էր շարունակ իւր կոտորած ապակիով, պատասխանեց լալով՝

84 Ամբ – հորեղբայր:

— Տէր հայր ջան, ես չեմ արել:
— Ինչպէս թէ դու չես...,— հարցրեց քահանան զարմանալով:
— Ես եմ, տէր հայր, ես եմ,— պատասխանեց մանուկը դողալով, բայց խոստանում եմ, որ էլ չեմ անիլ:

ՇԾՏ, 120-121

24

— Հայրիկը տանն է,— հարցրեց մէկը դուրսը խաղացող երեխային:

Երեխան մտաւ տունն և դուրս գալով՝ պատասխանեց.

— Ասեց՝ ասա տանը չիի՛:

ՇԾՏ, 134

25

Անգին Մոսին, որը սովորում էր գիւղական խալիֆայի⁸⁵ մօտ, շատ էր սիրում «գիր կապելով» կարդալ⁸⁶:

Մի օր ընկերը հարցրեց.

— Արա Անկի՛ն, կարաս կիր կապէ՛ս:

— Էն խի՛ չեմ կարալ, — պատասխանեց Անգինը սրտալի,— ինչ վէր ուզում ես ասա, մը սհաթումը⁸⁷ կիր կապեմ:

— Դէ վէ՛նց կիր կ'կապես «Աստուած իմ, Հոկտեմբեր»:

— *Այի – ծաստուած, ըննի – մենիմ = Աստուած իմ, հօ – վօ – կեն – հոկ, տիւն – եչ – բե – մեն – կեն – տրեմ = հոկտեմբեր:*

ՇԾՏ, 135

26

Մինը իր կնոջը նոր լուրեր էր ասում. ի վերջոյ ավելացրեց.

— Միրմանենց Շաքարը մեռաւ:

— 9 տարեկան որդին որ լսեց, ասաց.

— Հայրիկ, եթէ շաքարը մեռնի, այսուհետև թէյն ինչո՞վ պէտք է խմենք:

ՇԾՏ, 164

85 Գիւղական խալիֆա – գյուղական ուսուցիչ:

86 «Գիր կապելով» կարդալ – տառը տառին կցելով անվարժ կարդալ:

87 Մը սհաթումը – մի բոպետում, անմիջապէս:

27

Երկու գիտացի կնանիք անց էին կենում ուրիշ գեղի մօտից, միտ բերեցին թե՛ էս տեղ ծանոթ կին ունինք, գնանք նրան տեսնենք: Մտան գիտը հարցուփորձ անելով նրա տունը գտան, դուռը ծեծեցին, դուրս եկաւ մի աղջիկ. հարցրին ղ՛մ էս, նա պատասխանեց՝ էս տան տիրոջ դուստրն եմ:

— Մայրդ տա՛նն է:

— Ոչ:

— Ու՛ր է գնացել:

— Չգիտեմ:

— Ուրեմն երբ որ մայրդ գայ, ասա՛, Մանուշակն ու Վարդենիկը՝ քո ծանոթներն եկան քեզ տեսնելու, տանը չէիր:

— Շատ լաւ:

— Խօ՛ չն՛ մոռանա Մանուշակ, Վարդենիկ բառերը:

— Ինչպէ՛ս կմոռանամ Շուշան, Վարդենիկ բառերը, որովհետև շատ անգամ նստել եմ վարդի թփի տակին և միննոյն ժամանակին մանուշակ էլ քաղել եմ:

ՇԾՏ, 175

28

— Բայի՛կ ջան, ու՛մ տղան էս:

— Չգիտեմ:

— Ո՞նց թե: Հայրիկիդ անունն ի՛նչ է:

— Ասացի՛ չգիտեմ:

— Իսկ մայրիկիդ ինչպէ՛ս է անվանում հայրիկիդ:

— Դանդալոջ:

ԵՂՋՀ-95, 75

29

Մայան (Պարույր Սևակի առաջին կինը՝ Մայա Ավագյանը – ԱՍ) գրում է. «Հրաչոն կտրականապես չի ընդունում, որ երկրագունդը կլոր է և պտտվում է իր առանցքի շուրջը:

—Սուտ է, երկրագունդը ոչ մի անգամ էլ չի պտտվում: Թե չէ մեր պատուհանից երևացող այն ազդագիրը ամեն օր իր տեղում չէր լինի», — բացատրում է Հրաչուն:

ՄԹՓՕ, 20-21

30

Չանախչի գնալու ճանապարհին ծիրան ծախող մի երեխայի հարցնում են.

— Բախիկ ջան, ինչ արժի ծիրանի դույլը:

— Հինգ կամ երեք:

— Հո չենք ծիծաղում:

— Ո՞վ ասաց, որ այդ գնով վաճառես, — հարցրեց Պարույրը:

— Ազին ասաց, որ հինգով չառնեն, երեքով տուր:

— Գուցե հինգով էինք առնում, ինչո՞ւ երեք ասացիր:

— Սո՞ւտ ասեմ:

— Քո ճշտի համար առ քեզ 5 ռուբլի, — փողը պարզեց Պարույրը:

— Ինչո՞ւ 5 տվեցիր, — նետեց Էմման:

— Բա այսքան ծիծաղը 2 ռուբլի չարժե՞ր, — պատասխանեց Պարույրը:

— Հիմար երեխա էր, — ասաց Էմման:

— Մաքուր երեխա էր, — ասաց Պարույրը:

ՉԼԱ, 103-104

31

Ծիծեռնակաբերդում 1915թ. Եղեռնի զոհերի հուշարձանի կառուցումը նոր էր սկսվել: Վիզեն Խեչումյանը, Պարույր Սևակը, Համո Սահյանը, Մկրտիչ Սարգսյանը, Սերո Խանգաղյանն իրենց փոքր երեխաների ձեռքը բռնած Ծիծեռնակաբերդի բարձունքից ուշ երեկոյան վերադառնալիս 3 տարեկան Վահագնը նայում է աստղազարդ երկնքին և ասում.

— Պապա՛, պապա՛, նայիր, ի՞նչ սիրուն պատալով (ինա՛՝ առաստաղ) է:

— Լսեցի՞ք, տեսա՞ք՝ Մկրտիչի տղան ինչ գեղեցիկ գեղարվեստական պատկեր նկատեց,— ասում է Պարոյր Սևակը՝ հիացած երեխայի սրամիտ խոսքից:

ՄՍՀ, 333

32

Դատարկ գլուխ

Պօղոսիկ երբ դպրոցէն տուն եկաւ, սկսաւ մօրը նազ ընել:

— Մամն, փորս կը ցաի:

— Հոգ մի՛ ըներ, տղան,— ըսաւ մաման,— երբ փորդ կը ցաի, դա կը նշանակէ թէ *սրամորսդ դատարկ է*:

Պօղոսիկ միտքը պահեց այս խօսքը:

Քանի մը օր վերջ, Պօղոսիկին հայրիկը երբ շուկայէն եկաւ, ըսաւ.

— Կնիկ, գլուխս կը ցաի:

Անդիէն Պօղոսիկ միջամտեց հօրը խօսակցութեան:

— Հոգ մի՛ ըներ, հայրիկ, — ըսաւ, — երբ գլուխդ ցաի կը, նշանակէ թէ գլուխդ դատարկ է:

— Ուրտեղէ՛ն գիտես, տղան:

— Հայրիկ, մայրիկէս սորվեցայ:

ԳՖԳԱ, 123

33

Ինչ ըսաւ

Փոքրիկ մը ամէն իրիկուն պաղպաղակի համար հօրմէն դրամ կը խնդրէր: Երբ չափը անցուց, հայրը մերժեց:

— Գիտես *սատ* բերողը այսօր մայրիկին ինչ ըսաւ:

— Ինչ ըսաւ:

— ...

— Առ սա դրամը, ինչ ըսաւ:

— Մայրիկին ըսաւ. «Մառ կ'ուզէս»:

ԱԶՀԶ, 143-144

34

Արտյունը դպրոցում

Արտյունն առաջին անգամ դպրոց էր գնացել:

Հարազատները անհամբեր սպասում էին, թե նա ինչ տպավորություններով տուն կգա: Եվ, ահա, նա եկավ, ծանրորեն ուսերից իջեցրեց պայուսակը և դիմեց մորը.

— Մն՛ւն, չես կարս՛ւմ իմանաս, թե երբ են մեզ արձակուրդ տալու:

ԿԶՀ, 10

35

Երեքամյա Արթուրը առաջին անգամ էր տեսնում Սևանա լիճը:

— Վն՛յ, մամ, ի՛նչ մեծ վաննա յա, — զարմացած բացականչեց նա:

ԿԶՀ, 11-12

36

«Հաշիվ» են մաքրում 12-ամյա և 5-ամյա երկու տղաներ:

— Քեզ չեմ ասն՛լ, որ խելոք մնա, — ասում է ավագը, — բա որ ծեծե՛մ:

— Չես կարա, — ասում է կրտսերը:

— Ընչի՛ չեմ կարա, — վստահորեն ասում է մեծը, — հլը բոյիդ նայի...

— Ես էլ պապայիս կասեմ...

— Իսկ ես պապայիդ էլ կծեծեմ....

— Չես կարա, — հպարտորեն ասում է փոքրը, — պապաս կփախնի:

ԿԶՀ, 46

37

Արտակը իր հայրիկի հետ գնում է օդանավակայան: Արտակը հարցնում է.

— Հայրիկ, սա ի՛նչ է:

— Օդանավ է, տղաս:

— Հայրիկ, օդանավի միս եմ ուզում:

ՊԿԳԳ, 41

38

Թողը տատին հարցնում է.

— Տանտ, դրախտում ի՞նչ կա:

— Դրախտում, բալին ջան, տանձ կա, խնձոր կա, մանդարին կա:

— Տանտ, դրախտը կոմպոտ ան:

ՊԿԳԳ, 19-20

39

— Պապինկ, գրածս կկարդանս, — չորս տարեկան Ալլա թոռնիկս բացեց տետրը, որի առաջին էջում համաչափ շարված գծիկներ էին:

Փորձեցի մտաբերել իր գործածած բառերը: Ի՞նչ է ցանկացել գրել:

— Ես տատիկին ու մամային շատ եմ սիրում, իսկ պապիկին քիչ եմ սիրում:

— Չէ, ես ուրիշ բան եմ գրել, տու՛ր կարդամ:

Ահա թե ինչ էր «գրել». «Ճաշ ուտելու ժամանակ տատիկը ինձ հաղթեց, որովհետև մաման իմ ճաշիկը շատ էր լցրել, իսկ տատիկինը քիչ էր լցրել»:

Հետո թերթեց տետրը և կարդաց մյուս էջին «գրածը». «Հոպարիս Հայկոն իմ ապերն ա, բայց ես կուզեմ իմ սեփական ապերիկը ունենամ, որ մես մեր տանը, մաման էլ ես ըլեմ»:

ՍՔԶԻ, 70

40

— Պապինկ, երեխաներիս նայի, գնամ հաց առնեմ՝ գամ, — ասաց թոռնիկս, ապա մահճակալի վրա շարեց «երեխաներին»՝ արջուկին, նապաստակին, տիկնիկներին ու շարունակեց, — մի՛ վախեցի, պապինկ ջան, չիշիկ չեն անի: Իրանք արդեն մեծ են. որ ունենում են, ասում են:

ՍՔԶԻ, 70

41

Ալլան փոքրիկ գրատախտակի վրա կենդանիներ էր նկարում.

— Պապիկ, շունիկը քանի՞ բեղ ունի:

— Հինա չեմ հիշում, մոռացել եմ, բալիկս:

— Բա գյուղում էդքան շուն կա, ոչ մեկինը չեմ հիշում: Որ մի կողմինն ասես, էն մյուսն էլ էդքան է: Տե՛ս, բեղերի համար տեղ եմ թողնում, որ հիշես, կասես, կնկարեմ:

ՍՔՋԻ, 70

42

Մայրը Ալլային տանում է ծանոթներից մեկի տուն: Աշխատանքի ժամ էր, և տղամարդիկ տանը չեն լինում: Կանաչք, իրար իմաց տալով, հավաքվում են: Ներս մտնողը ներկայանում է երեխային.

— Ես *Էսիսի* մաման եմ:

Երբ հերթական *մաման* ներս է մտնում, երեխան սրտնեղած դիմում է մորը.

— Ա՛յ մամ, էս տանը ոչ մի պապա չկամ, էս անդերանոց տունը ինչի՞ բերիք:

ՍՔՋԻ, 71

43

Մայրը ավում էր սենյակը, իսկ երեխան, փեշից կախված, աղեկտուր լալիս էր: Ինձ տեսնելուն պես վազեց մոտս.

— Ա՛յ պապիկ, մի արի տես՝ էս ավլել ամ, որ սա ավում ա: Ավելը չի տալիս, որ ես կարգին մաքրեմ: Որ մարդ գա մեր տուն, ի՞նչ կասի: Ես խայտառակ կլլեմ:

ՍՔՋԻ, 71

44

— Պապիկ, ճիշտ է՞, որ երբ թոռնիկները մեծանում են, պապիկներն էլ չեն լինում:

— Ճիշտ է, — հաստատեցի երեխայի ասածը:

— Դե էլ ինձ չասես՝ ճաշիկդ կեր, որ շուտ մեծանաս: Ես ուզում եմ ուշ մեծանամ, — ասաց ու գնաց խաղալու:

ՍՔՋԻ, 71

45

Տանը մուկ էր երևացել:

Երեկոյան թոռնիկիս ներկայությամբ լարեցի թակարդը: Գիշերը մուկը բռնվել էր: Երբ հայրը ցանկացել էր մուկը գցել, երեխան չէր թողել.

— Չմոտենաս թակարդին, էդ պապիկիս մուկն ա, ինքն ա բռնել:

ՍՔԶԻ, 72

46

Հայկը ուշադիր հետևել էր Գոհար տատի տունը վերանորոգող բանվորների աշխատանքին: Երբ հայրը եկավ, երեխան ոգևորված մոտ վազեց.

— Սաքո՛, ինձ համար կեղտոտ շորեր կառնե՛ս՝ գամ Գոհարի տանը *գամասկա*⁸⁸ քսեմ:

ՍՔԶԻ, 72

47

Վարժաբեդը հիշքան ստիբում ա, Նեսին խոսում չի:

— Նեսի՛, էս ի՛նչ տառ ա:

— Բելա գյուղում չըմ:

Տեսա ետ հնգերունքը իրենսըներ խոսում ըն.

— Նեսի՛, ա-ն հնցալ ընք, տու վել գյուղում ըս, էնքան ստիբում ա, իսն՛ չըս ասում:

— Մեր վարժաբեդին խայաթը գյուղում ըմ, վեր մինն ասիմ, ըս-լական ա՛ մինն էլ ասե:

ՆԱԲ-1, 124

48

Լոխ մին ա

— Նեսի՛, էս հի՛նչ ա:

— Բ-յա:

— Ա մեռած, պա սա Ա չի՛:

— Մին ա, ըլի:

ՆԱԲ-1, 124

88 Զամասկա (ռուս.)–ծեփամածուկ:

49

Տանա իվիլ ընիլ չի⁸⁹

Ապել վարժաբեդը շերտվա օրերը խոցը սվրցնում ա: Մին օր էլ սվրցրածը Գետունց Բագրաթեն անա հրցընում ա: Բագրաթը եր ա կենում ճլլըճելի⁹⁰, ճլլըճելի ասում. «ըրկուշերեթ, ըրրքշերեթ, չրուքշերեթ, հնգըշերեթ, վցըշերեթ, ուխտըշերեթ, ինսըշերեթ...»

Ապել վարժաբեդը մի կերպ վենն ա անում⁹¹.

— Բոլ ա, տանա իվիլ ընիլ չի:

ՆԱԲ-1, 124-125

50

Ուսուցիչը առաջին դասարանում նոր ա ըլալ հնցած Օ տառը: Տեսուչը եկալ ա տասին նստալ: Ուսուցիչը Օ տառը կրալ ա գրա-տախտակին, հրցնում ա.

— Երեխաններ, էս ինչ է:

Ոչ մեկը ձեռք չի բարձրացնում:

— Երեխաններ, էս ինչ է:

Ահա մեկը ձեռքը բարձրացնում է:

— Ապրես, Արմեն, ասա, էս ինչ է:

— Ընկեր Մանվել, հղլակ է⁹²:

ՆԱԲ-3, 125

51

Սուրենին հանձնարարված էր շարադրություն գրել: Բայց նա կետադրական նշաններ գործածելու հմտություն չուներ: Որոշում է նրանք չօգտագործել: Ինչ է անում:

Շարադրանքի վերջում, մի տողի վրա դնում է իր իմացած կետադրական բոլոր նշանները և հաջորդ տողում ավելացնում. «Փի՛շտ, ամեգը ծեր տեղերը»:

ՆԱԲ-3, 128

89 Տանա իվիլ ընիլ չի–դրանից ավել չի լինի:

90 Ճլլըճելի–դանդաղ, ծոր տալով:

91 Վենն անել–կանգնեցնել:

92 Հղլակ–օղակ:

52

Օխտը-օթ տրեկան մի խուր հորթարածներ ըն ընում Արունց ճրին նստած գրուց ընեիս, թա՛ հու հինչ կնանչի ա սիրում:

— Ես՝ ըմսապեխկը:

— Ես ճրըկուտեմնը:

— Ես՝ ծնեփակը:

— Ես՝ պուքին:

— Իսկ ես, — մաչ ընգավ վեց տարեկան Ափուլը, — կննչըղանեն մաչին ամենաշատը խրավածն ըմ սիրում:

ՆԱԲ-3, 137

53

— Աշոտիկ, դանդաղ ըս օտում: Տես ես հինչքան ըմ ճելի օտում, — ասում է պապը:

— Պանպ, պա ծամում ըմ, է՛:

ՆԱԲ-3, 149

54

Գեղամի յոթ տարին լրացավ, մայրն ասաց.

— Գեղան, սեպտեմբերի մեկին դպրոց ես գնալու:

— Ման, վեչ կյրին ըմ գիդում, վեչ՝ կարթիլը, քինում ըմ դպրոցը, հինչ անիմ:

ՆԱԲ-3, 176

55

Սախտ⁹³ տղան

Հար ու տղա նստած խաշըխ-բերեք⁹⁴ կուտեին: Տղան արտուրալեն⁹⁵ չաթալին⁹⁶ վրան էրկ-էրկվատ⁹⁷ խաշըխ-բերեք կառներ և ազահ-ազահ բերանը կտաներ:

93 Սախտ – գգույշ:

94 Խաշըխ-բերեք – խաշած կարկանդակ:

95 Արտուրալ – արտասովել:

96 Չաթալ – պատառաքաղ:

97 էրկ-էրկվատ – երկու-երկու:

— Բալան, վտե՞⁹⁸ կարտուրաս, ինչի՞ էրկ-էրկվատ *բերեք* կրկո-
խիս բերանդ, — հարցուց հարը:

— Ժեք-ժեք⁹⁹ հատ ուտիմ, խըղղվի՞մ ինչ է, — արմընցավ տղան:

ՇՇԴԱ, 180

56

— Հրանտիկ ջան, գիտե՞ս, որ Արմանն էլ է նույն օրը ծնվել, ինչ-
պես դու՝ ապրիլի 24-ին, — հարցնում է պապը:

— Բա այդ ո՞նց է որ նա ինձանից 20 տարով մեծ է, զարմացած
հարցնում է Հրանտիկը:

— Ո՞նց է, ո՞նց է, չգիտե՞ս՝ ո՞նց է, արդե՞ն մեծ տղա ես. ինքդ պետք
է հասկանաս:

— Շատ լավ էլ հասկանում եմ, այդ նրանից է, որ Արմանի
ծնունդը շուտ-շուտ եք կատարել, դրա համար էլ նա ինձանից 20
տարով մեծ է ստացվել, — եզրակացնում է Հրանտիկը:

ԳՋԺ, 155

57

Հարևանուհու հարսը փոքրիկին կուրծք էր տալիս: Հրանտիկն
ուշադիր նայում ու զարմացած հարցնում է.

— Մայրիկ, իմ փոքր ժամանակ ես էլ եմ այդպես կաթ կերել:

— Իհարկե:

— Բա ինչպե՞ս էիր կաթը լցնում կրծքիդ մեջ:

ԳՋԺ, 159-160

58

— Մայրիկ, ինձ ո՞վ է բերել:

— Ես:

— Այդպես էլ գիտեի, եթե պապան բերած լինեք, ես տղա կլի-
նեի:

ԳՋԺ, 160

98 Վտե- ինչու:

99 Ժեք-ժեք- մեկ-մեկ:

59

Դավիթը ուշադրությամբ նայելով պապի ավարտական ավրոմը և նկարներում տեսնելով տղամարդ ուսուցիչների, զարմացած հարցնում է.

— Սրանք ովքեր են:

— Իմ ուսուցիչները:

— Պապիկ, ինչ է, տղամարդ ուսուցիչ էլ է լինում:

ԳՁԺ, 168

60

Հրանտիկը ծնողների հետ ավտոբուսով գյուղ էր գնում: Ուղևորներից մի ծերունի հարցնում է նրան.

— Բալիկ ջան, պապդ կենդանի է:

— Էդ դու ես կենդանին, իմ պապը կենդանի չէ, — վիրավորված պատասխանում է նա:

ԳՁԺ, 171

61

Հարևանի հարսը հղի էր: Հրանտիկը հարցրեց.

— Պապիկ, այդ Անահիտ տոտայի փորը ինչո՞ւ է ուռած:

— Ուռած չէ, տոտայի փորում փոքրիկ երեխա կա:

— Բա երեխան փորում ի՞նչ է ուտում:

— Անահիտ տոտան ինչ որ ուտում է, փոքրիկն էլ փորիկում նրանից է ուտում:

— Բա ի՞նչ է խմում:

— Տոտան ինչ խմում է, փոքրիկն էլ փորիկում նույնն է խմում:

— Բա նրա տուտուզիկն այնտեղ ինչպե՞ս են մաքրում: — Քիչ դարար տալուց հետո Հրանտիկն ինքն էլ պատասխանում է, — Երևի նրա տուտուզը մաքրելու համար Անահիտ տոտայի տուտուզն են մաքրում, էլի...

ԳՁԺ, 175

62

Եկեղեցում ժամերգությունից հետո Հրանտիկը հարցնում է.

— Պապիկ, այն երիտասարդ տերտերը գիտե՞ս՝ ինչու էր ծուխ անում:

— Չէ՛, չգիտեմ, — ինչ-որ բան կոահեղով՝ պապը խուսափում է պատասխանից:

— Իսկ ես գիտեմ, — ասում է Հրանտիկը:

— Դե որ գիտես, ասա՛ ես էլ իմանամ:

— Ծուխ էր անում, որ մեղուները մեծ տերտերին չկծեն:

ԳՁԺ, 180-181

63

— Տատիկ, որ ամուսնանամ, էլի ինձ հետ ես քնելո՞ւ, — հարցնում է փոքրիկ Էդուարդիկը:

ԳՁԺ, 220

64

— Դավիթ ջան, Նոր տարվա առթիվ քեզ համար նվեր առնեմ, թե՛ փողը տամ, — հարցնում է պապը:

— Նվեր առ, պապիկ ջան:

— Հրանտիկ ջան, դու որն ես ուզում՝ փող՞ը, թե՛ նվերը:

— Ինձ փողը տուր, պապիկ, իսկ նվերը Ձմեռ պապը կրերի:

ԳՁԺ, 181

65

Հրանտիկն իրենց տուն եկած հյուրին երկար զննելուց հետո գարմացած ասում է.

— Պարզև պապիկ, բա ո՞ր է քո երկրորդ երեսը:

— Ո՞նց թե, բա մարդ երկու երես կունենա՞մ:

— Բա ինչո՞ւ է իմ պապիկն ասում, որ դու երկու երեսանի ես:

ԳՁԺ, 209

66

Առաջին դասարանցի Դավիթը կարդում էր.

— Էշն ինչ իմանա, թե նուշն ինչ է:

Կարդալուց հետո մի պահ դադար տվեց, ապա զարմացած դիմեց մորը.

—Ա՛յ մամ, ըսկի ես չգիտեմ, թե նուշն ինչ ա, էդ էշը որտեղի՞ց իմանա:

ԳՋԺ, 209

67

Երբ տանը մի քանի անգամ Աստծու անունը տվեցին, Մեյրանիկը հարցրեց.

—Տատի՛կ, Աստվածը որտե՞ղ է նստում:

—Վերև՝ երկնքում, բալի՛կ ջան:

—Բա նրա զուգարանը որտե՞ղ է, նա որտե՞ղ է չիշիկ անում:

—Աստվածները չիշիկ չեն անում, նրանք երկնային են,—բացատրում է տատը:

—Ես էլ քեզ հավատացի, շատ լավ էլ գլխի եմ. որ անձրև ա գալիս, ուրեմն այդ նրանց չիշիկն է, իսկ կարկուտը՝ կակաշիկը,—եզբահանգում է Մեյրանիկը:

ԳՋԺ, 221

68

—Երկուսին գումարած երեք ինչի՞ է հավասար,—հարցնում է մայրը Լուսինեին:

—Դե՛, Լուսինե՛, ինչո՞ւ ես լռում, չե՞ որ հավասար է հինգի:

—Հինգի՛, իսկ երեկ ասացիր, որ չորսին գումարած մեկն է հավասար հինգի:

ԳԲ55+ , 41

69

—Մարթա՛, մայրիկիդ կզգուշացնես, որ ծաղիկները չմոռանա, բերի,—ասաց մանկապարտեզի դաստիարակչուհուն:

Երբ եկավ տուն, ասաց.

—Մայրի՛կ, զգուշացիր:

—Ինչի՞ց,—զարմացավ մայրը:

—Չգիտեմ, Ալինա մորաքույրն ասաց, որ զգուշանաս:

ԳԲ55+ , 41

70

— Լուսինն, արի պահմտոցի խաղանք: Ես սեղանի տակ թաքնվեմ, իսկ դու արի և ինձ գտիր:

ԳԲ55+ , 41

71

— Կարինն, ճաշդ կեր, թե չէ պարկով ծերուկին կասեմ կգա:

— Կարծում ես պարկով ծերուկը քո եփած ճաշը կուտի:

ԳԲ55+ , 41

72

Կարինեն՝ քրոջը.

— Լուսինն, իսկ ո՞ր է տիկնիկդ, մոռացա՞ր բերել:

— Քնեցրել եմ:

— Այսքան շոտ:

— Այս ֆիլմը փոքրիկների համար չէ:

ԳԲ55+ , 42

73

— Հայրիկս ինձ համար նոր, տոնական զգեստ է գնել, կարո՞ղ ես գուշակել գույնը, — ասաց Կարինեն իր ընկերուհուն:

— Առաջին տառը կասնա:

— Մ:

— Մանուշակագույն:

— Ոչ, մածնագույն:

ԳԲ55+ , 42

74

— Շուկայից ի՞նչ բերեմ քեզ համար, — հարցրեց մայրը Լուսինեին:

— Ինձ տար, որ ասեմ:

ԳԲ55+ , 42

75

- Լուսինն, ո՞ւմ ես շատ սիրում, մայրիկի՞դ, թե՛ հայրիկի՞դ:
- Քոյրիկիս:

ԳԲ55+, 43

76

— Ինչ ես ուզում դառնալ, — հարցրեց Հայկանուշն իր հինգ տարեկան որդուն, որը շատ փխրուն սիրտ ուներ և շատ էր սիրում հաստկապես ավագ եղբորը:

— Ախպերս՝ դիրեկտոր, ես էլ իրա շոֆերը¹⁰⁰, — պատասխանեց որդին:

ԼԲԱ, 413

77

- Ման, էս ինչ ա, հարցնում է 3,5 տարեկան Նարեկը:
- Վազելին:
- Որ դնեմ գետնին, կվազի՞:

ԳՄԽ, 5

78

— Մամա, որ բոլոր պատաժները մեռնեն, էլ «պատավի ուլեր» չի լինի, չէ՞, — հարցնում է 7 տարեկան Հովիկը:

ԳՄԽ, 5

79

— Ման, ինչ լավ կլիներ, մենք տուն չունենայինք, — ասում է 3 տարեկան Մերին:

— Ինչո՞ւ:

— Որ չասեիր՝ արի՛ տուն:

ԳՄԽ, էջ 30

80

Միերի համար կարդում են Խնկո-Ապր «Մկների ժողովը»: Հաջորդ օրը հորաքույրը գնում է ժողովի: Միերին հարցնում են.

100 Շոֆեր (ոռու.) – վարորդ:

— Ո՞ւր է հորաքոյրդ, Մհեր:

— Գնացել ա ժողովի, մկները էսօր ժողով են անում:

ԳՄԽ, էջ 34

81

— Մեր խմբում մի տղա կա, անունը *մի քայլ ա*, — ասում է 6 տարեկան Աշոտը:

ԳՄԽ, էջ 72

82

— Պապի՛կ, ձեր հարսանիքի ժամանակ փեսան դո՞ւ էիր, — հարցնում է Նարեն:

ԳՄԽ, 75

83

Նայելով պարանի վրայից լվացք հավաքող տատին՝ 3 տարեկան Արուսյակը ասում է.

— Բա մամայի ծիծիկի տրուսիկները չե՞ն հավաքում:

ԳՄԽ, էջ 76

84

— Պա՛, շունն է խելացի՞, թե մարդը, հարցնում է 4,5 տարեկան Անդրանիկը:

— Սարդը:

— Ըբը ընչի՞, երբ մենք շանը բան ենք ասում, ընիկ մեզի կհասկնա, իսկ երբ ընիկ հաչալով մեզի բան կըսես, մենք իրան չենք հասկընա:

ԳՄԽ, էջ 77

85

Մանկապարտեզի ավագ խմբում «Ընտանի կենդանիները» թեմայով պարապմունք է: «Ի՞նչ օգուտ են տալիս ընտանի կենդանիները» հարցին 6 տարեկան Սամվելը պատասխանում է.

— Էշը մեզ գազար է տալիս:

(Այն ժամանակներն էին, երբ փողոցներում էշերին բարձած գազար էին ծախում)

ԳՄԽ, էջ 79

86

- Մարտիկ, ասա ի՞նչ է հայրենիքը:
- Հայրենիքը մեր մայրն է:
- Գևորգ, դո՞ւ ասա, թե՛ ի՞նչ է հայրենիքը:
- Հայրենիքը ...ը, ը. Մարտիկի մայրն է:

ԾՄԱ,100

87

- Մենակ ես պատասխանեցի ուսուցչի հարցին,—դպրոցից տուն գալով՝ պարծեցավ Վարդանիկը:
- Իսկ ի՞նչ հարցրեց ուսուցիչը,— հետաքրքրվեց մայրը:
- Հարցրեց, թե՛ ո՞վ է կոտրել լուսամտի շուշեքը:

ԾՄԱ, 103

88

- Վարդանիկ, դարձեա՞լ թաքանութիւնից երկու ես ստացել,— դժգոհեց մայրը:
- Ես մեղաւոր չեմ, ընկեր Մարգոն նշանակեց:
- Իսկ նրք ես ուղղելու:
- Ընկեր Մարգոն տետրակը միշտ իր մօտ է պահում, ինչպէ՛ս ուղղեմ:

ԾՄԱ, 103

89

- Մի անգամ ուսուցիչը դիմեց Վարդանիկին:
- Շնչավոր առարկայի անոն ասա:
- Է՛ծ:
- Ապրեն, իսկ հիմա անշունչ առարկայի անուն ասա:
- Սատկած է՛ծ,— պատասխանեց Վարդանիկը:

ԾՄԱ,103

90

— Ների՛ր, եղբայ՛րս, — ասում է Աշոտիկի մայրը, — թարսի պէս տանն այսօր պանիք չկայ: Գիտեմ, որ դու պանիք շատ ես սիրում:

Մի բուպեից Աշոտիկը վերադառնում է՝ քեռու համար մի քիչ պանիք բերելով:

— Դու շատ խելացի տղայ ես, — ասում է քեռին, — պանիքը որտեղից բերեցիր:

— Մկան թակարդից:

ԾՄԱ, 103-104

91

Մոնան մայրիկի հետ քայլում է փողոցով:

— Սա ի՛նչ է, — հարցնում է նա՝ ցույց տալով շենքի պատին ամրացած առարկան:

— Ջերմաչափ է, բալիկս:

— Մի՞թե տներն էլ են հիւանդանում:

ԾՄԱ, 104

92

— Էրի՛կ, քանի՛ անգամ եմ ասել, որ գնաս քնելու: Քո տարիքում ես հավերի հետ էի քնում, — ասաց հայրը:

— Իսկ ինչպե՛ս էիր տեղափոխում թառի վրա:

ԾՄԱ, 110:

93

Մի տղա պարծենում էր ընկերոջ մօտ:

— Իմ հայրը միշտ տաւարի միս է ուտում և ցուլի պէս ուժեղ է:

— Իսկ իմ հայրը, — ասում է միւսը, — միայն ձուկ է ուտում, բայց մինչև այսօր էլ լողալ չի սովորել:

ԾՄԱ, 111

94

—Մայրիկս ինձ պատիրել է մի լիտր կաթ գնել, —ասում է Արան՝ վաճառողին մեկնելով կաթի ամանը:

Վաճառողը լցնում է կաթը:

—Իսկ դրամն ո՞ր է:

—Ամանի մեջ:

ԾՄԱ, 112

95

Լիդան, առաջին անգամ խոզ տեսնելով, հարցրեց.

—Մայրիկ, սա ի՞նչ է:

—Խոզ է, աղջիկս:

—Ինչո՞ւ են այդպես ասում, նա վատ բան է արել:

ԾՄԱ, 112

96

Աբան, այբ ըսէ (Հայրիկ, այբ ըսէ)

1860-ականներուն Շիրոյի քրրտական գիւղ մը տեղափոխուած չնքուշցի ընտանիքի մը որդին, որ Քիրտերու մէջ մեծնալով պատեհութիւն ունեցած չէր դպրոց երթալու և հայերէն գրել-կարդալ սորվելու, որպէսզի զաւակներն ալ հայերէն գրել-կարդալ սորվին, որոշեց ընտանեօք վերահաստատուիլ Չնքուշ և ինք, ըստ նախնոյն, շարունակեց գործել Շիրո՝ տարուան եօթ-ութ ամիսներուն:

Անոր անդրանիկ որդին արդէն դպրոցական տարեշրջան մը բոլորած էր, երբ իր հայրը աշնան տուն վերադարձաւ ու, հիանալով տղուն մաքուր հայերէն խոսակցութեան վրայ, զայն կուշտ մը համբուրելէ յետոյ, ուզեց հասկնալ, թէ տղան ինչքան բան սորված էր: Տղան, առնելով այբբենարանը, նստաւ հօրը ծունկերուն վրայ, և այբբենարանի առաջին գրին վրայ դնելով մատը,

Տղան. — Աբան, այբ ըսէ:

Հայրը. — Ալբ:

Տ. — Ատի չեղաւ, արբար, այբ ըսէ:

Հ. — Տղան, իշտէ կ'ըսես, այբ, այբ:

Տ. — Չէ, արար, ինձի պէս մի՛ ըսէր, վարժապետին պէս ըսէ:

Հ. — Տղան, վարժապետը ինչի՞ն կ'ըսէ:

Տ. — Վարժապետը այլ կ'ըսէ, այլ:

Հ. — Տղան, իշտէ ես այլ վարժապետիդ քիմի կ'ըսեմ այլ, այլ...

Հայր ու տղայ քրտինքներու մէջ մտան, ժամերով *այլ, այլ* ըսելէն:

(ԺԹ դարուն, թրքական ծայրայեղօրէն հայահալած քաղաքականութեան օրերուն, Չնքուշէն հարիւրատր ընտանիքներ տեղափոխուեցան Շիրոյի, Կարկարի և այլ քրտական շրջաններու գիւղերը, ուր անոնց տղամարդիկ տարին եօթ-ութ ամիս կը գործէին նախապէս և աշնան կը վերադառնային Չնքուշ, իրենց ընտանիքին ծոցը):

ԳՉԲ-1,309

97

Վոսկեկոթ տաննակը

Մի խնամիկ մարթ տանալի մե տղայի ծեռ մե վոսկեկոթ տաննակ: Միթկ անելի, թե ինչ ֆանդով¹⁰¹ էտ տղայի ծեռեն էտ տաննակը թըռցուցեմ... Խնամիկորը փեշերը կշտելի, կըզվելի, աշկերը սըռճելի, անելի. — Խու՛, խու՛, խու՛... գյուվա ուզելի տղային վախցուցի, վոր տաննակը թանի կետին, փախնի, էթն...

Փստիյ տղան ըշկալի, ըշկալի, տառնալի թե.

— Ամի՛, մի՛ վանխեցի, անգժներըտ¹⁰² չեմ կըռի, մի՛ վանխեցի...

ՀԱԻԱ, ԹՖ, FF1, 1499

98

Երեխայի երագանքը

Գյուլիստանի¹⁰³ ջրաղացների մոտ, գետի ափին մի մեծ սև քար կա: Այդ քարի մոտ մի փրփնջան¹⁰⁴ կա, որի առաջը քարերով և ծառի ճյուղերով փակելով՝ երեխաները լողանալու համար հարմար ջրավազան էին ստեղծում: Երեխաներն այդ քարի վրայից ցատկում

101 Ֆանդ – հնարք:

102 Անգժներըտ – ականջներդ:

103 Արցախ, Շահումյանի շրջան:

104 Փրփնջան – փրփրալի ավազան:

էին փրփնջանի մեջ և լողանում, ապա դուրս գալիս ու պատկում գետափի արևից տաքացած քարերին: Մի անգամ, պատերազմի նեղ ժամանակ, երեխաներից մեկը լողանալուց հետո պատկում է քարին և նայելով ջրի կաթնանման փրփուրներին՝ երանությամբ կողքի ընկերոջն ասում է.

— Հենց պիտեր, վար էս փրփնջանը լոխ կաթնավ ճաշ իներ, քարին կլխան լուքի տի մեջին, տյուս կի, շորերըս լպըստուտի:

ՂԲԳ, 126-127

99

Մի օր ուսմասվարը մի քանի դասատվըքերի հետ քընում էն տաս լսիլ. վերջի նըստարաններիցը աշագերդներին պիրում էն առաջ, վեր դասատվըքերը ընդէդ նըստէն: Մի թախա չուշտ-չուստ յէդ ա յէշում: Դասատուն ասում ա. — Մէրուժան, խի էս յէտ յէշում:

— Ընկէր Օլյա, վախում եմ ընգյեր Նարգիզը կօրժիկըս¹⁰⁵ ուտի, դարակումն տրած ա:

ՍԼԽ, 188

100

Մի ըռավէտ աշագերտներից մինը տնսից ուշանում ա:

— Խի էս ուշացել, — հարցընմ ա դասատվըքերիցը մինը:

Աշագերտը հըռվըհնած պատասխանում ա.

— Կյնլիս տէղը ճըմփին մի տէղ կըրթացի. «Քյընալը կըմըն-ցըցնէլ»:

ՍԼԽ, 188

101

Երկու տարեկան Նարեկը դըսում խաղալիս է լինում, մայրը ճայն է տալիս և կանչում է տուն: Չցանկանալով տուն գնալ, Նարեկն իր հերթին գոռում է.

— Դու սո՛ւս, այ՛ Եվայի ցեղ...

ՈՒԴՉ, 12

105 Կօրժիկ – թխվածք:

102

Վարդուշի ամուսինը վաղուց մահացել էր:

— Վարդն՛շ մորաքույր, դու ամուսին չունե՛ս, — հարցրեց Վիկան:

— Չէ, Վիկա՛ ջան:

— Իյա՛, բա երեխաներդ որտեղի՞ց են...

ՌԻԴՉ, 144

103

Փոքրիկ Անին խաղում էր բակում, հանկարծ տուն վազեց և ասաց.

— Տատիկ, գիտե՛ս, Արմենչիկն ինձ ինչ ասաց:

— Ի՛նչ ասաց:

— Ասաց, որ քեզ սիրավորվում եմ:

— Անի՛, — ժպտալով հարցրի, — իսկ դու ի՛նչ ասացիր նրան:

— Եկել եմ շորերս փոխեն, որ գնամ հիմա էլ ես իրեն ասեմ, որ էս անգամ էլ ես եմ սիրավորվում:

ՌԻԴՉ, 159-160

104

Երրորդ դասարանում երգի դաս էր: Ուսուցչուհի ընկեր Ռայան բացատրում է.

— Երեխաներ, ուղիղ բերանիս նայեցեք, բերանիս բացվածքի նման դուք էլ կրկնեցեք:

Երբ մի քանի անգամ այդպես բացատրում է, երեխաներից մեկը դժգոհում է.

— Ա դե ինկեր Ռայա, թո՛ւշ¹⁰⁶ ըոխիդ¹⁰⁷ միջին եմ յաշում¹⁰⁸, լի՛...

ՂԱԺ-1, 212

105

Բռնի տեղահանությունից հետո Չիլինգարյան Գրիգորն իր գերդաստանով ապաստան է գտել Դիլիջանում: Այնտեղ նոր թոռ-

106 Թուշ – ուղիղ:

107 Ըոխիդ – բերանիդ:

108 Յաշել – նայել:

նիկ է ծնվել՝ Տոլիկը: Նա ինքն իրեն փախստական չի համարում: Չնայած փոքր է, բայց մեծ եղբոր հետ անընդհատ կռվում է: Երբ մեծը նրան ծեծում է, Տոլիկը եղբորը հայհոյում է.

— Այ ես քու փախստականն մերը...

ՂԱԺ-2, 169

106

— Մայրիկ, ես կարող եմ պապուզայերեն խոսել, ասում է Զարուհին:

— Ապա խոսի՛ր:

— Պապային ասում են պապուզայ, մամային՝ մամուզայ, ինձ էլ՝ զարուզայ:

ՄՈՒԵ, 125

107

— Դուք առաջին դասարանում եք արդեն և պետք է իմանաք, որ դասերի ժամանակ ուտել չի կարելի, — ասաց ուսուցչուհի Իսահակյանը:

— Իսկ երկրորդ դասարանում կարելի՞ է, — հարցնում է Իզաբելան:

ՄՈՒԵ, 125

108

Խմուկ էր¹⁰⁹...

Շատ տարիներ առաջ իմ քրոջ որդի Մեսրոպը Սարուխանի թիվ 1 դպրոցից վերադառնում է տուն: Մոր հետ Այբբենարանի համապատասխան էջն էին կարդում. «Աննան և Արան Սուրիկին տուն տարան»:

— Ման, հրնչի Սուրիկը խմուկ էր, — զարմանում է Մեսրոպը:

Ախր երեխան գյուղում այնքան է տեսել, որ խմած մեկին երկուսով թևերն ընկած տուն են ուղեկցում...

ՆԴԲԿ, 38

109 Խմուկ էր – խմած էր:

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ

Ա. ՄԵԾԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԵՂԾԿԱԾ ՄԱՆԿԱԿԱՆ ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՎԱՐՃԱՊԱՏՈՒՄՆԵՐ (Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու)

1

— Բանջարաբուստանային կուլտուրաների մեջ ինչն էն մտնում, — հարցնում է դասատուն:

— Ընկեր Գևորգյան, որ չափառ¹¹⁰ չըլի, կով էլ կմտնի, խոզ էլ կմտնի, ոչխար էլ կմտնի...

2

Հանելուկ-զվարճապատում

Իննը ամիս՝ հաչա,
Իրեք ամիս՝ դաչա¹¹¹: (դասատու)

3

Հայ գրականության դասին ուսուցիչը հարցնում է.

— Երեխաներ, ո՞վ կարող է ասել, ի՞նչ է նշանակում «Երկունք Թ դարու»¹¹²:

Աշակերտներից մեկը, թե՛

— Ես ասեմ:

— Ասա՛, տղա՛ ջան:

— Դե թըղարեք են տենըմ¹¹³, էլի, ընկեր Սարգսյան...

110 Չափառ – ցանկապատ:

111 Դաչա – հանգստյան տուն:

112 Խոսքը 19-րդ դարի հայ գրող Ծերենցի «Երկունք Թ դարու» պատմական վեպի մասին է:

113 Թըղարեք տենալ – պատրաստություն տեսնել:

4

Հայոց լեզվի դասին դերբայական դարձվածն է ամփոփվում: Ոսուցիչը միջադաս դերբայական դարձվածի մի օրինակ է բերում և հարցնում.

— Ինչպիսի՞ դերբայական դարձված է, երեխաներ, ո՞վ կարող է ասել:

— *Միջադերբայական դարձված*, — պատասխանեց տղաներից մեկը՝ տեղիք տալով աղջիկների բազմանշանակ հոհողին¹⁴:

5

Էրեխեն լաց լինելով՝ երաժշտական դպրոցից գալիս է տուն:

— Ի՞նչ է էղե, — հարցնում են ծնողները:

— Դասատուն գլխուս զարգեց:

— Ինչքի՞ս թե, ի՞նչ էիր էրել օր:

— Ըսավ՝ *դո* զարգե, զարգեցի, ըսավ՝ *նե* զարգե, զարգեցի, ըսավ՝ *մի* զարգե, չզարգեցի, գլխուս զարգեց...

6

— Երեխաներ, ո՞վ կարող է մի թռչունի անուն ասել, — դասաբանին է դիմում ընկեր Մարգոն:

— Բեգեմոտ, — ասում է Վարդանիկը:

— Վարդանիկ, բա բեգեմոտը թռչո՞ւն է:

— Ընկեր Մարգո, թռավ՝ թռավ, ի՞նչ կըրնաս էնես, — պատասխանում է Վարդանիկը:

7

— Տատի՛, մենք ո՞նց ենք ծնվել...

— Դե... Վարդանիկ ջան, քեզ արագիլն ա բերել, Աշոտիկին էլ՝ գետը:

— Վարդանիկ, տատին չասե՞նք՝ ո՞նց ենք ծնվել, — հարցնում է Աշոտիկը:

114 Այդ օրերին կանանց հիգիենայի այդ պարագայի գովազդներով հեղեղված էին հեռուստատալիքները:

— Չէ՛է՛, տատը թող էդպես միամիտ էլ մեռնի, — ասում է Վարդանիկը:

8

Ուսուցիչը՝ աշակերտին.

— Շավարը եզակի անձ է՝ հոգնակի:

Աշակերտ.

— Ներքի կուտը¹¹⁵ հոգնակի անձ է, վերիկուտը՝ եզակի:

9

— Վարդանիկ, մեկին գումարած մեկ ինչ կենես, — հարցնում է ընկեր Մարգոն:

— Ըրը.....

— Հերըդ ուրդեղ կաշխատես:

— Մսի կոմբինատը:

— Դե հիմի ուշադիր լսե՛, Վարդանիկ, եթե էսօր մսի կոմբինատից հերը մե բուղըմ գողցած տուն բերես, վաղն էլ՝ մե բուղըմ, ինչքան կեղնի:

— Մե ոտըմ, ընկեր Մարգո:

10

Քյավառցի էրեխին դասատուն ինչ հարց տալիս ան, չի պատասխանում: — Լավ, մի բան էլ հարցնեմ, պատասխանեցի՞ր, մի երեք կնշանակեմ, չէ՞՝ երկուս եմ նշանակելու. ո՞վ է Չինաստանի կոմկուսի 1-ին քարտուղարը: — Չեմ գիտըմ:

— Օրագիրըդ տուր, երկուս եմ նշանակում:

— *Մացե փունը*¹¹⁶:

— Ապրեն, բա ասում ես չգիտեմ, երեք եմ նշանակում:

(Ուսուցին թվացել էր, թե էրեխան *Մասն Յգե Դուն* է ասել):

11

— Կարող եմ տանձ բառով մի նախադասություն ասել, — հարցընըմ ան դասատուն:

115 Ներքի կուտ – ներքևի մաս:

116 Մացե տունը – մնացել է տանը:

- Մերըս ոավողից ըիգուն ձըքըն ա...:
- Տղան ջան, բա տանձն ուր ա:
- Ըսկի հորըս տանձին էլ չի, — ավելացընըն ա ըրելսեն:

12

Լոռու կրթօջախներում մաթեմատիկայի դրվածքը ստուգելու համար լուսավորության մինիստրության աշխատակիցը լինում է հեռավոր գյուղերից մեկի դպրոցում: Դասարաններից մեկում նա աշակերտներին հարց է տալիս.

— Երեխաններ, երեք իքս + հինգ իքս, ինչի է հավասար:

Դասարանը լում է: Հարցը մի անգամ էլ է կրկնում, նորից ոչ մի ձայն: Տեսուչը չոր ու պաշտոնական տոնով հարցնում է.

— Սա ինչ վիճակ է, ընկեր Պետրոսյան, մաթեմատիկայի դասերին ինչո՞վ եք զբաղված:

— Կներեք... երեխաները պարզապես ձեզ չհասկացան, հիմա ես իրենց հասկանալի լեզվով կբացատրեմ հարցը, — ասում է ուսուցիչն ու դիմում դասարանին: — Ըրելսե՞ք ջան, մենք իրեք *պուճախ*¹¹⁷ ունենք, դրան որ էվելցընըն ենք էլի հինգը *պուճախ*, ինչքան կանի:

Ամբողջ դասարանը միաբերան վարկարկում է.

— Քուն-ջու-պու-ճախ...

13

Էրելսեքը խաղալիս են լինում, մեկը հարցնում ա.

— Ո՞վ կասի, շան ու միցի մեջ ինչ տարբերություն կա:

Էդ պահին միցեն անցնելիս ա լինում, բռնում ա էդ էրելսի ձեռից, թե՛

— Էդ ինչ ասիր, շան ու միցի մեջ ասիր ինչ տարբերություն կա՞...:

— Չէ՛, չէ՛, չէ՛, ձաձա՛ ջան, ոչ մի տարբերություն էլա չկա...:

¹¹⁷ Պուճախ – անկյուն:

Բ. ՄԵԾԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՏԵՂԾՎԱԾ
ՄԱՆԿԱԿԱՆ ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԶՎԱՐՃԱՊԱՏՈՒՄՆԵՐ՝
ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ ՏՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ

1

— Դարչին ջան, ղնց էր ուսումնարանը. հավանեցիր, մատանդ,— հարցրեց մայրը նոր ուսումնարան ուղարկած երեխային:

— Հա, այե՛ս ջան, շատ լաւն էր. համ էլ գիդաս ինչ, աճի՛ ջան, գրիս միջին լիւ (լ) էլ կար, *հիւն* (իմա՛ւ) ն էլ ...այ:

— Բւ՛, մատանդ, եղպէս ա. թէ որ լաւ կարդաս, տանձ էլ կըլի, խաղող էլ:

ՇԾՏ, 65

2

Հրեշտակս

— Ինչ է հրեշտակը,— հարցուց փոքրիկը մօրը:

— Երևակայական անմարմին էակ մը:

— Եթէ անմարմին էակ մըն է, ինչպէ՛ս կ'ըլլայ, որ հայրիկը սպասուհիին շարունակ հրեշտակս կը կանչէ:

ԱԶՀԶ, 145

3

Մի անգամ ընկեր Մարգոյի մոտ դասալսման են գալիս: Մարգոն նախօրոք աշակերտներին զգուշացնում է, ասելով.

— Երեկսանէր, եթե պետքարան ուզեք, կասեք. «Կարելի՞ է գնալ ծաղիկ ջրելու»:

Ստուգողականը գրելու ժամանակ Վարդանիկը ասում է.

— Ընկէ՛ր Մարգո, գնան՛մ ծաղիկ ջրելու:

Մարգոն պատասխանում է.

— Ո՛չ, դասամիջոցին կգնաս:

- Հնչում է դասամիջոցի զանգը, Մարգոն ասում է.
— Վարդանիկ, հիմա կարող ես գնալ ծաղիկ ջրելու:
— Պետք չէ, ընկեր Մարգո, Ես վաղուց ծաղիկները ջրել եմ:

ՊԿԳԳ, 42

4

- Վարդանիկը դասից գալիս է տուն: Հայրը հարցնում է.
— Վարդանիկ, ի՞նչ ստացար թվաբանությունից:
— Երկու:
— Ընչի՞:
— Վարժապետը հարցուց. «Հինգ անգամ հինգ ի՞նչ կէնես»: Ըսի՝
երեսուն:
— Չկրցամր՝ ըսեիր՝ քսանհինգ:
— Երեսուն ըսի, շատ հոժար եղավ, ուր մնաց քսանհինգ ըսեի:

ՆԺՄ, 30

5

- Ուսուցիչը հարցնում է.
— Վարդանիկ, նոտաները քանի՞ հատ կեղնի:
— 8-ը:
— Ի՞նչըլի՞ 8, հլա մը հաշվի:
— Դո, ոե, մի ֆա, սոլ, լյա, սի, ծո:

ՆԺՄ, 33

6

- Արտանկ, ամիսը քանի՞ անգամ ես *սնիգդերս* ուտում:
— Երեք անգամ. երբ քեռի Աշոտը գալիս է մայրիկիս մոտ, ինձ փող է տալիս ու ասում. «Գնա *սնիգդերս* գնիր ու խաղա բակում, կկանչենք, նոր կգաս»:

ՄՈՒԵ, 133

7

- Հավի ճուտը մորը հարցնում է.
— Մամ, ես ո՞նց լույս աշխարհ եկա:
— Բալեն, պապային չասես, քեզ արագիլն է բերել:

ԿԶՀ, 30

8

Շնողնեցի ուսուցիչը հարց է տալիս աշակերտին.

— Ի՞նչ չորքուտանի կենդանի գիտես:

— Ձի վարժապետ, շուն վարժապետ, էջ վարժապետ:

ՀԱԲ-20, 161

9

Վարդանիկը ծառ է բարձրանում:

— Էդ ո՞ր, — հարցնում է ընկերը:

— Գնում եմ խնձոր ուտեմ:

— Բայց դա բարդի է:

— Հա ինչ անենք, խնձորը մոտս է:

ԱԺԹ-91

10

Բարկացած ուսուցչուհին ասում է.

— Այնպես լռեք, որ լսվի, թե ինչպես է թռչում ճանճը:

Բոլորը լռում են: 10 րոպե անց Վարդանիկը չի համբերում և շշուկով հարցնում է.

— Ընկեր Մարգո, իսկ է՞րբ եք ճանճը բաց թողնելու:

ԱԺԹ-91

11

Մի ուսուցչուհի աշակերտներին խնդիր է առաջադրում.

— Երեխաներ, Ալավերդուց Երևան 150 կմ է, գնացքը գնում է հինգ ժամում, ես քանի՞ տարեկան եմ:

Երեխաները մտածում են, մտածում, տարիքը չեն կարողանում գտնել: Վերջում աշակերտներից մեկը ձեռք է բարձրացնում.

— Ընկեր Շողիկ, դուք 26 տարեկան եք:

— Ո՞նց իմացար, Աշոտ:

— Մենք մի գիժ հարևան ունենք, 52 տարեկան է, մտածեցի, որ դուք էլ 26 տարեկան կլինեք:

ԱՎՇ, 351

12

Ուսուցչուհին հարցնում է.

— Աշոտ, մյախկի գնակը¹¹⁸ ինչ ֆունկցիա ունի:

— Մյախկի գնակը նրիե բան ա, որ ինչի քմակին դնես, կկակ-
դացնե¹¹⁹:

ԱՎՇ, 352

13

Բուսաբանության դասաժամին:

— Վարդանիկ, կարո՞ղ ես ասել, իսնձորը երբ կարելի է քաղել
ծառից:

— Երբ շունը տեղում չէ, իսկ պահակը քնած է:

ԾՄԱ, 105

118 Մյախկի գնակ (ռուս.) – ռուսական այբուբենի տառ:

119 Կակդացնել – փափկացնել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղեկություններ ասացող-պատմողի, գրառողի, գրառման վայրի և ժամանակի վերաբերյալ

| Թիվ | Ասացող-պատմող | մասնագիտությունը | Գրառող | մասնագիտությունը | Գրառման վայրը | Տարեթիվ |
|-----|---------------------|------------------------|----------------|------------------|---------------------|---------|
